

Թերեզա Սնրյան, Վարդան Ոսկանյան

# ՔՐԴԵՐԵՆՆԻ ԴԱՍԱԳԻՐԷ

ՆԱՏՈՐ I

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ  
ՆԱԽՍԼՍԱՐԱՆ



ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Թերեզա Ամրյան  
Վարդան Ոսկանյան

ՔՐԴԵՐԵՆԻ  
ԴԱՍԱԳԻՐՔ  
(Կուրսանշի)

հատոր I

ԵՐԵՎԱՆ  
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ  
2023

ՀՏԴ 811.222.5 (075.8)

ԳՄԴ 81.521.313g73

Ա 536

*Երաշխավորվել է ՀՀ ԿԳՄՄ նախարարության  
կողմից որպես բուհական դասագիրք:*

*Հրատարակության է երաշխավորել  
ԵՊՀ գիտական խորհուրդը:*

**Խմբագիրներ՝** բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր  
*Մայրի Ակին*  
բանասիրական գիտությունների թեկնածու  
*Նազիկ Հովհաննիսյան*

**Գրախոս՝** բանասիրական գիտությունների թեկնածու  
*Հակոբ Ավյան*

Ամրյան Թ., Ոսկանյան Վ.

Ա 536 Քրդերենի դասագիրք / Թ. Ամրյան, Վ. Ոսկանյան: -Եր., ԵՊՀ  
հրատ., 2023, 428 էջ:

Դասագրքի առաջին հատորը բաղկացած է վաթսուն դասից, որոնցում ներկայացվում են մի քանի խոսքի մասեր, սահմանական եղանակի անցյալ կատարյալ ժամանակաձևը և դասընթացին անհրաժեշտ տեքստեր ու վարժություններ:

Դասագիրքը հասցեագրված է ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի, ինչպես նաև ուսումնական այլ հաստատություններում և գիտական կենտրոններում քրդերեն ուսումնասիրող արևելագետներին, լեզվաբաններին, իրանական լեզուներով հետաքրքրվող մասնագետներին:

ՀՏԴ 811.222.5 (075.8)

ԳՄԴ 81.521.313g73

ISBN 978-5-8084-2617-7

<https://doi.org/10.46991/YSUPH/9785808426177>

© ԵՊՀ հրատ., 2023

© Ամրյան Թ., Ոսկանյան Վ., 2023

ZANÎNGEHA YEREVANÊ YA DEWLETÊ

Têrêza Amryan  
Vardan Voskanyan

PIRTÛKA DERSA  
KURDÎ  
(Kurmancî)

CILDA YEKEM

YÊRÊVAN  
Weşanxana Zanîngeha Yêrêvanê ya Dewletê  
2023



**Editors:** Doctor in Philology, Professor *Salih Akin*  
Candidate of Philological Sciences *Nazik Hovhannisyan*

**Reviewer:** Candidate of Philological Sciences *Hakob Avchyan*

Amryan T., Voskanyan V.

Kurdish Textbook / T. Amryan, V. Voskanyan. -Yerevan:YSU Press, 2023, 428 p.

The first volume of the textbook consists of sixty lessons, in which several parts of speech, the Past Tense, appropriate texts and necessary exercises for the course are presented. The textbook is intended for Orientalists, linguists, and specialists that study Kurdish at the faculty of Oriental Studies at Yerevan State University, as well as at other educational institutions, and scientific centers.

© YSU Press, 2023

© Amryan T., Voskanyan V., 2023

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Նախաբան .....	10
Դաս 1.....	24
Այբուբեն.....	24
Դաս 2.....	34
Անձնական դերանուններ.....	34
Դաս 3.....	45
«Heyfın» բայը և դրա կիրառությունը .....	45
Դաս 4.....	56
Բայ-հանգույց (բաղաձայնահանգ բառերի համար) .....	56
Դաս 5.....	66
Բայ-հանգույց (ձայնավորահանգ բառերի համար) .....	66
Դաս 6.....	81
«Bûn» բայը և դրա կիրառությունը.....	81
Դաս 7.....	97
«Hebûn» բայը և դրա կիրառությունը .....	97
Դաս 8.....	103
Թվական անուն .....	103
Դաս 9.....	115
Քանակական թվականների կիրառության որոշ առանձնահատկություններ.....	115
Դաս 10.....	120
Արական սեռի գոյականներ.....	120
Դաս 11.....	127
Տեղի մակբայներ.....	127
Դաս 12.....	132
Իգական սեռի գոյականներ.....	132
Դաս 13.....	140
Ընդհանուր սեռի գոյականներ.....	140
Դաս 14.....	149
Գոյականի որոշյալ և անորոշ առում.....	149
Դաս 15.....	158
Դասանիշներ .....	158
Դաս 16.....	163
Իգաֆեր .....	163

Դաս 17.....	172
Դասական թվական.....	172
Դաս 18.....	178
Բայ. անորոշ դերբայ.....	178
Դաս 19.....	184
Բայի անցյալի հիմք.....	184
Դաս 20.....	190
Անցողական և անանցողական բայեր.....	190
Դաս 21.....	194
Անցյալ կատարյալ ժամանակաձև (անանցողական բայեր).....	194
Դաս 22.....	202
Ձևի մակբայներ.....	202
Դաս 23.....	207
Անցյալ կատարյալ ժամանակաձև (անցողական բայեր).....	207
Դաս 24.....	217
Ժամանակի մակբայներ.....	217
Դաս 25.....	223
Ժամ.....	223
Դաս 26.....	229
Անցյալ կատարյալ (zanîn, karin, bîn բայեր).....	229
Դաս 27.....	234
Չափ ու քանակի մակբայներ.....	234
Դաս 28.....	239
Պատճառական բայեր.....	239
Դաս 29.....	246
Անցյալ կատարյալ ժամանակաձև (պատճառական բայեր).....	246
Դաս 30.....	252
Անդրադարձ-սաստկական դերանուն (xwe).....	252
Դաս 31.....	261
Թեք հոլով (ներքին թեքման չպատկանող գոյականներ).....	261
Դաս 32.....	267
Բաշխական, կոտորակային, տոկոսային թվականներ.....	267
Դաս 33.....	271
Փոխադարձ դերանուններ.....	271
Դաս 34.....	275
Նախածանցավոր բայեր.....	275

Դաս 35.....	281
Անցյալ կատարյալ (նախաձանցավոր բայեր).....	281
Դաս 36.....	287
Հարցական դերանուններ (մաս առաջին) .....	287
Դաս 37.....	296
Հարցական դերանուններ (մաս երկրորդ).....	296
Դաս 38.....	303
Թեք հոլով (ներքին թեքման պատկանող գոյականներ) .....	303
Դաս 39.....	311
Պարզ նախդիրներով կազմված բայեր .....	311
Դաս 40.....	317
Անցյալ կատարյալ ժամանակաձև (պարզ նախդիրներով կազմված բայեր).....	317
Դաս 41.....	322
Ցուցական դերանուններ .....	322
Դաս 42.....	327
Բարդ նախդիրներով կազմված բայեր (մաս առաջին).....	327
Դաս 43.....	332
Անցյալ կատարյալ ժամանակաձև (բարդ նախդիրներով կազմված բայեր).....	332
Դաս 44.....	336
Բարդ նախդիրներով կազմված բայեր (մաս երկրորդ) .....	336
Դաս 45.....	341
Անցյալ կատարյալ ժամանակաձև (բարդ նախդիրներով կազմված բայեր).....	341
Դաս 46.....	345
Հարաբերական դերանուններ .....	345
Դաս 47.....	352
Բարդ նախդիրներով կազմված բայեր (մաս երրորդ) .....	352
Դաս 48.....	356
Անցյալ կատարյալ ժամանակաձև (բարդ նախդիրներով կազմված բայեր).....	356
Դաս 49.....	360
Բարդ նախդիրներով կազմված բայեր (մաս չորրորդ).....	360
Դաս 50.....	367



Անցյալ կատարյալ ժամանակաձև (բարդ նախդիրներով կազմված բայեր).....	367
Դաս 51.....	371
Ցուցական դերանունների թեք հոլովաձև .....	371
Դաս 52.....	375
Հարաբերական ածական.....	375
Դաս 53.....	383
Որակական ածականի բաղդատական աստիճան.....	383
Դաս 54.....	389
Որակական ածականի գերադրական աստիճան.....	389
Դաս 55.....	394
Բարդ բայեր.....	394
Դաս 56.....	401
Անցյալ կատարյալ (բարդ բայեր) .....	401
Դաս 57.....	406
Անորոշ դերանուններ .....	406
Դաս 58.....	410
Որոշյալ դերանուններ .....	410
Դաս 59.....	415
Ժխտական դերանուններ .....	415
Դաս 60.....	419
Կապեր և կապական բառեր .....	419
Օգտագործված գրականության ցանկ .....	425

## Համառոտագրություններ

բոց. – բառացի

նշ. – նշանակություն

հմմտ. – համեմատություն

կուրմ. – կուրմանջի

քրդ. – քրդերեն

իգ. – իգական

ար. – արական

## Նախաբան

Քրդերենը պատկանում է իրանական լեզուների հյուսիսարևմտյան ենթաճյուղին: Քրդերենի բարբառները սովորաբար բաժանվում են երեք խմբի՝ **հյուսիսարևմտյան, կենտրոնական** ու **հարավային**: Ընդունված է հյուսիսարևմտյան բարբառախումբը կոչել կուրմանջի<sup>1</sup>, հարավայինն ու կենտրոնականը միասին՝ սորանի<sup>2</sup> կամ քուրդի: *Կուրմանջի* բարբառով խոսում են ներկայիս Թուրքիայի հարավ-արևելքում, Սիրիայի հյուսիսարևելյան շրջաններում բնակվող քրդերը, Իրաքի քրդերը (Մոսուլի, Ամադիեի, Զախոյի, Ակրեի և Սինջարի քրդալեզու բնակչությունը), Իրանի քրդերի մի մասը (մասնավորապես՝ Ուրմիա լճին արևուտքից հարող տարածքներում, Խորասանում բնակվող քրդերը), ինչպես նաև ԱՊՀ երկրներում բնակվող քրդերը: *Սորանի* կամ *քուրդի* բարբառով են խոսում Իրանում՝ Մահաբադի, Սանանդաջի, Քերմանշահի շրջաններում, Իրաքում՝ Ռևանդուզի, Սուլեյմանիայի, Քիրքուքի քրդերը:

XVIII-XIX դարերից սկսած՝ եվրոպացի, ամերիկացի և ռուս հետազոտողները, ճանապարհորդներն ու միսիոներները հետաքրքրություն են դրսևորել քրդերենի նկատմամբ: Հենց այդ ժամանակ են գրվել քրդերենին վերաբերող առաջին աշխատություններն ու հետազոտությունները:

1787 թ. Հռոմում հրատարակվել է քրդերենի քերականության առաջին ձեռնարկը, որի հեղինակն էր Մաուրիցիո Գարցոնին (Garzoni M., Grammatica e Vocabolario della Lingua Kurda, Roma, 1787): Գրքում համառոտ ներկայացվում են խոսքի մասերը, հավելվածում բերված է իտալերեն-քրդերեն բառարան: Մ. Գարցոնիի ձեռնարկը մինչև XIX դարը եղել է քրդերենի ուսումնասիրության միակ լուրջ աշխատությունը:

1857 թ. Փարիզում հրատարակվել է լեհ լեզվաբան ու արևելագետ Ալեքսանդր Խոժկոյի հետազոտությունը, որը վերաբերում էր Սուլեյմանիայի բարբառի ձևաբանությանը (Chodzko A., Etudes Philologiques Sur La Langue Kurde: Dialecte De Soleimanie, Journal Asiatique. sér. 5, T. 9, Paris, 1857, pp. 297-356):

<sup>1</sup> «*Կուրմանջը*» կուրմանջի բարբառով խոսող քրդերի ինքնանվանումն է:

<sup>2</sup> См. у Д. Маккензи, Курманджи, курди и гурани, Народы Азии и Африки, № 1, Москва, 1963, стр. 162-170:

1872 թ. լույս է տեսել ամերիկացի միսիոներ Սամուել Ռիի ձեռնարկը, որում ներկայացվում է Հաքյարի քերականությունը (Samuel A. Rhea, *Brief Grammar and Vocabulary of the Kurdish Language, Journal of the American Oriental Society, V. 10, New-Haven, 1872*):

Ռուս դիվանագետ ու գիտնական Ավգուստ Ալեքսանդր Ժաբան, որն արևելագիտություն էր ուսումնասիրել Պետերբուրգում և հետագայում նշանակվել էրգրումում Ռուսաստանի ներկայացուցիչ, 1860 թ. հրատարակել է քրդերեն պատումներ ու պատմվածքներ (Jaba A., *Recueil de notices et récits kourdes servant à la connaissance de la langue, St.-Petersbourg, 1860*): Ա. Ժաբան նաև քրդերեն-ֆրանսերեն բառարանի հեղինակն է (Jaba A., *Dictionnaire kurde-français, S . St.-Petersbourg, 1879*): Բառարանը պարունակում է մոտ 15 հազար բառ. բառահոդվածների մեծ մասին կից տրվում է նաև բայերի խոնարհումը տարբեր ժամանակաձևերով:

1880 թ. գերմանացի լեզվաբան ու արևելագետ Ֆերդինանդ Յուստին հրատարակել է քրդերենի քերականության ձեռնարկ (Justi F., *Kurdische Grammatik, St. Petersburg, 1880*):

Արևելյան բանասիրության ականավոր մասնագետ Ալբերտ Սոցինը XIX դարավերջին՝ ճանապարհորդությունների ժամանակ, գրի է առել բազմաթիվ քրդերեն տեքստեր: Դաշտային նյութը նա քաղել է ասորիներից, որոնք տիրապետում էին Տուր Աբդինի և Բոհթանի քրդերի բարբառին: Սոցինը հավաքած նյութը մշակել է գերմանացի արևելագետ Օյգեն Պրիմի հետ և հրատարակել երկու ժողովածուով (Prym E., Socin A., *Kurdische Sammlungen im Dialekte des Turabdin, St. Petersburg, 1887*; Prym E., Socin A., *Kurdische Sammlungen in den Dialekten des Turabdin und von Bohtan, St. Petersburg, 1890*):

XX դարում քրդերենն ուսումնասիրվել է առավել արդյունավետ ու համակարգված կերպով:

Գերմանացի գիտնական Օսկար Մաննը, որը 1901-1903 թթ. այցելել է Իրան, ազգագրական ու բանահյուսական հարուստ նյութ է հավաքել նաև Իրանի քրդերից: Նա 1906 թ. Բեռլինում հրատարակել է Մուկրի քրդերի լեզվին վերաբերող աշխատությունը (Mann O., *Die Mundart der Mukri-Kurdenwas, Berlin, 1906*):

Բրիտանացի զինվորական, լեզվաբան ու գրող Էլի Բանիստեր Սոունը, ճամփորդելով Իրանում, ուսումնասիրել է քրդերենը և լույս է



ընծայում քրդերենի քերականության ձեռնարկներ (Soane E. B., Grammar of the Kurmanji or Kurdish Language, London, 1913; Soane E. B., Elementary Kurmanji Grammar, Baghdad, 1919):

1919 թ. լույս է տեսել ամերիկացի լյութերական միսիոներ Լյուդվիգ Օլսեն Ֆոսսումի՝ քրդերենի գործառական քերականությունը, որում ներկայացվում են նաև Սահաբադի քրդերի խոսվածքով տեքստեր (Fossum L. O., A Practical Kurdish Grammar, Minneapolis, 1919):

1922 թ. Բարդադում լույս է տեսել Ռ. Ջարդինի աշխատությունը, որը Բահդինանի ու Մոսուլի քրդերի բարբառի քննությունն է (Jardine R. T., Bahdinan Kurmanji: a grammar of the Kurmanji of the Kurds of Mosul division and surrounding districts of Kurdistan, Baghdad, 1922):

1926 թ. Փարիզում հրատարակվել է Պ. Բեյդարի ձեռնարկը (Beidar P., Grammaire kurde, Paris, 1926):

Քուրդ մտավորական ու հասարակական գործիչ Ջելադաթ Ալի Բադրխանը XX դարի 30-ական թվականներին “Hawar” ամսագրի էջերում հրատարակել է հոդվածների շարք՝ “Bingehîna zimanê kurdi” (բոց.՝ «Քրդերենի հիմունքներ») խորագրով:

1956 թ. Փարիզում լույս է տեսել Բադրխանի և ֆրանսիացի արևելագետ Ռ. Լեսկոյի հեղինակած քրդերենի քերականությունը, որը բազմիցս վերահրատարակվել է հետագայում (Bedir Khan, Djeladet Ali and Lescot, Roger, Grammaire kurde (dialect kurmandji), Paris, 1970): Բադրխանի քերականությունը հավակնում էր ապագայում դառնալու կանոնարկման ձգտող քրդերենի հիմքը:

1958 թ. լույս է տեսել Էռնեստ Մակքարուսի՝ Սուլեյմանիայի խոսվածքին վերաբերող աշխատությունը (McCarus E. N., A Kurdish Grammar (Descriptive Analysis of the Kurdish of Sulaimaniya, Iraq), New York, 1958):

Քրդերենի քերականության ուսումնասիրության գործում գիտական լուրջ ներդրում է նաև անգլիացի քրդագետ Դոնալդ Մակքենզիի՝ քրդերենի բարբառներին ու խոսվածքներին վերաբերող ուսումնասիրությունը (MacKenzie D. N., Kurdish Dialect Studies, Vol. 1, New-York–Toronto, 1961; MacKenzie D. N., Kurdish Dialect Studies, Vol. 2, New-York–Toronto, 1962):

1891 թ. լույս է տեսել հայագգի հետազոտող Սողոմոն Եղիազարովի՝ Երևանի նահանգի քրդերի ու եզդիների կյանքին, կենցաղին, սովորույթներին ու հավատալիքներին վերաբերող աշխատությունը (Егизаров С., Краткий этнографический очерк курдов Эриванской губернии. Записки

Кавказского Отдела РГО, Книжка XIII, выпуск 2, Тифлис, 1891), որում, սակայն, կան նաև տեղական խոսվածքով հեքիաթներ, ավանդապատումներ, երգեր, ինչպես նաև եզդիներից գրառած աղոթքներ<sup>3</sup>։

Բազմաթիվ հայ գիտնականներ, գրողներ հետաքրքրվել են քրդական մշակույթով, բանահյուսությամբ (օրինակ՝ Խաչատուր Աբովյանը (Ակնարկ քրդերի ծագման, ազգային հատկանիշների, լեզվի, բարքերի և սովորույթների մասին, Երկերի լիակատար ժողովածու, հ. 8, Երևան, 1958, էջ 345-348, Քրդեր, Երկերի լիակատար ժողովածու, հ. 8, Երևան, 1958, էջ 373-393), Լևոն Մեսրոպը (Քուրդիստան և քուրդերը, Փարիզ, 1957) և այլք)։ Քրդերի լեզուն ու սովորույթները ուսումնասիրող հայ մասնագետները նաև տիրապետել են քրդերենին։ Օրինակ՝ հայ մտավորական, հասարակական գործիչ Հակոբ Ղազարյանը (քրդերի շրջանում հայտնի էր Լազո անվամբ) երկար տարիներ մանկավարժ է եղել քրդերի ու եզդիների շրջանում։ Վերջիններն էլ, ի նշան հարգանքի, Լազոյին անվանել են «*ապո*» (հորեղբայր), իսկ նրա կնոջը՝ Օլգա Ղազարյանին՝ «*դայե*» (մայր)<sup>4</sup>։

Խորհրդային Հայաստանն աչքի է ընկել քրդագիտական ուրույն ավանդույթներով։ Հովսեփ Օրբելին, Մամանդե Սիաբանդը, Արամե Չաչանը և այլք հեղինակել են հայերեն-քրդերեն, քրդերեն-ռուսերեն բառարաններ ու քրդագիտության տարբեր խնդիրներին առնչվող հետազոտություններ<sup>5</sup>։ Խորհրդային Հայաստանում բարենպաստ պայմաններ էին ստեղծվել քրդական ինքնությունը պահպանելու համար։ Պատահական չէ, որ քուրդ ժողովրդի մշակույթն ու գրականությունը մեծապես զարգացել են հենց այստեղ<sup>6</sup>։

Խորհրդային կառավարությունը նպաստակ ուներ նպաստելու նաև միասնական կանոնարկված քրդերենի գրական չափորոշի մշակմանը։ Ուստի հաջող փորձեր են արվել ստեղծելու քրդերենի այբուբեն, մշակելու համակարգված քերականություն, ստեղծելու եզրույթների հարուստ համակարգ և այլն։ Սկսած 1930-1940 թվականներից՝ Խորհրդային Միությունում քրդագետները լծվել են նաև քրդերենի քերականության ձեռ-

<sup>3</sup> Տե՛ս **С. Егизаров**, Краткий этнографический очерк курдов Эриванской губернии. Записки Кавказского Отдела РГО, Книжка XIII, выпуск 2, Тифлис, 1891, стр. 72-170; 221-227:

<sup>4</sup> Տե՛ս **Ա. Ավրալ**, Անդրկովկասյան քրդերի կենցաղը, Երևան, 1957, էջ 141:

<sup>5</sup> Տե՛ս **К. Курдоев**, Курдско-русский словарь, Москва, 1960, стр. 11-13:

<sup>6</sup> Տե՛ս **Կ. Չաչանի**, Երբայրական հայ ժողովրդի ընտանիքում, Երևան, 1980, էջ 4:

նարկներ կազմելուն: Հիշատակելի են Կանաստ Կուրդոնի ու Չարկյազ Բակաի աշխատությունները (Կ'օրդո Օ., Граматика зьмане кӖрманши йа кӖрт, Ереван, 1949; Կ'օրդո Օ., Граматика зьмане кӖрди (сӗр зараве кӖрманши), Ереван, 1956; Курдоев К., Грамматика курдского языка (курманджи), Москва-Ленинград, 1957; Курдоев К., Грамматика курдского языка на материале диалектов курманджи и сорани, Москва, 1978; Бакаев Ч., Говор курдов Туркмении, Москва, 1962; Бакаев Ч., Язык азербайджанских курдов, Москва-Ленинград, 1965; Бакаев Ч., Язык курдов СССР, Москва, 1973): Հարկ է նշել, որ Բադրիսանի հրատարակած քերականությունից հետո Կուրդոնի քերականությունն էլ իր հերթին էր հավակնում դառնալու կանոնարկվող քրդերենի հիմքը:

Հայաստանում հրատարակվել են քրդագիտական շատ հետազոտություններ (որոնց մասին տե՛ս Քրդերեն-հայերեն, հայերեն-քրդերեն գործնական բառարան, Վ., Կատվայան, Ա. Աբրահամյան, Գ. Մխիթարյան, Երևան, 2016, Առաջաբան, էջ 5-7):

Տարբեր ժամանակահատվածներում քրդերենի համար կիրառվել են գրային տարբեր համակարգեր: Միջնադարյան և ավելի ուշ ժամանակների քուրդ հեղինակների՝ Ֆակի Տայրանի (XVI դ.), Մալայե Ջազիրիի (XVII դ. երկրորդ կես), Ահմադե Խանիի (XVII դ.) և այլոց գրական ժառանգությունը սերունդներին է ավանդվել արաբատառ այբուբենով, որը հարմարեցվել է քրդերենի հնչյունաբանությանը<sup>7</sup>:

Քրդերի շրջանում գրային ավանդույթը սկսել է զարգանալ XIX-XX դարերում, երբ ձևավորվում է քրդական հասարակական-քաղաքական միտքը և ծայր է առնում քրդական ազգային-ազատագրական զարթոնքը: 1898 թ. քուրդ ազգայնականների ջանքերով Կահիրեում հրատարակվում է առաջին քրդալեզու «Քրդստան» (Kurdistan) թերթը, որն արաբատառ էր<sup>8</sup>:

1932 թ. Դամասկոսում լույս է տեսնում **“Hawar”** քրդերեն գրական (լատինատառ, տպագիր): Ամսագիրը հրատարակվել է մինչև 1943 թվականը: 1942-1945 թթ. Ջելադաթ Ալի Բադրիսանի ջանքերով լույս է տեսնում **“Ronahî”** ամսագիրը, որը նույնպես լատինատառ էր: Բադրիսանի մշակած լատինատառ այբուբենը հիմնված էր այդ ժամանակ Թուրքիայի Հանրա-

<sup>7</sup> Տե՛ս **М. Руденко**, Очерки средневековой курдской литературы, Санкт-Петербург, 2014, стр. 54-207:

<sup>8</sup> Տե՛ս **Վ. Բայրուրդյան**, Քրդերը, հայկական հարցը և հայ-քրդական հարաբերությունները պատմության լույսի ներքո, Երևան, 2008, էջ 171:

պետությունում նոր ընդունված այբուբենի սկզբունքների վրա: Ներկայում քրդական ժամանակակից մամուլի և գրականության համար կիրառվում է հենց այդ այբուբենը:

1930-ական թթ. Բաղդադում ու Սուլեյմանիայում քրդերը գործածում էին լատինատառ մի այբուբեն, որը տարբերվում էր Բաղրիսանի մշակած այբուբենից: Այն հաջողություն չունեցավ, և Իրաքի քրդերի մեծ մասը նորից անցավ արաբատառ այբուբենին<sup>9</sup>:

Քրդերենի ու քրդական մշակույթի գիտակ, հայ հասարակական գործիչ և մանկավարժ Հակոբ Ղազարյանը հայոց այբուբենի տառերը հարմարեցրել է քրդերենի հնչյունաբանությանը՝ մշակելով քրդերեն այբուբենը (Լազո Ա., Շամս [Քիթաբե ավալ], Էջմիածին, 1921): Խորհրդային Հայաստանի քրդախոս գյուղերում քուրդ ու եզդի երեխաների համար մինչև 1929 թ. լեզվի ուսուցումը կազմակերպվել է այս այբուբենով<sup>10</sup>:

1929 թ. քուրդ գրող Արաբ Շամիլովը, հասարակական գործիչ Իսահակ Մարագուլովը մշակում են քրդերենի նոր լատինատառ այբուբեն և լույս են ընծայում իրենց հեղինակած «Քրդերեն լեզվի ինքնուսույց» դասագիրքը մեծահասակների համար: 1929 թ. հրատարակվում է նաև Ի. Մարագուլովի և Ռ. Դրամփյանի «Լույս» քրդերենի դասագիրքը դպրոցականների համար, իսկ 1930 թ.՝ նրանց հեղինակած «Կարմիր ռանչպար» դասագիրքը մեծահասակների համար: 1932 թ. հրատարակվել է Ռ. Դրամփյանի քրդերենի դասագիրքը՝ «Հարվածային կոլխոզնիկ», իսկ 1931 թ.՝ «Դեպի նոր կյանք»<sup>11</sup> վերնագրերով:

1944 թ. Խորհրդային Միությունում ստեղծված այդ լատինատառ այբուբենին փոխարինել է ռուսատառ այբուբենը<sup>12</sup>: 1944 թ. Հայկական ՍՍՌ կառավարության որոշմամբ քուրդ մտավորականներ ու գրողներ Հաջիե Ջնդիի, Վազիրե Նադրի և Ամինե Ավդալի ջանքերով ռուսերեն տառերի հիման վրա կազմվել է քրդերենի ռուսատառ այբուբենը<sup>13</sup>:

Խորհրդային Միության փլուզումից հետո Հայաստանի քրդերը սկսել են կիրառել լատինատառ այբուբենը: Ներկայում Հայաստանի քրդական

<sup>9</sup> Տե՛ս **К. Курдоев**, Грамматика курдского языка (курманджи), Москва-Ленинград, 1957, стр. 11-12:

<sup>10</sup> Տե՛ս **М. Чагоев**, Курды Советской Армении, Ереван, 1965, стр. 135-136:

<sup>11</sup> Տե՛ս **Կ. Չաչանի**, Եղբայրական հայ ժողովրդի ընտանիքում, էջ 11:

<sup>12</sup> Տե՛ս **Ա. Ավդալ**, Անդրկովկասյան քրդերի կենցաղը, էջ 141, 144:

<sup>13</sup> Տե՛ս նշվ. աշխ., էջ 144-146:



համայնքի աշակերտները սերտում են իրենց մայրենի լեզուն քուրդ մտավորական ու գրող Ալիխանե Մամեի հեղինակած դպրոցական դասագրքերով:

Վերջին մի քանի տասնամյակի ընթացքում Եվրոպայում քրդերենի բազմաթիվ դասագրքեր, ինքնուսույցներ և այլ ձեռնարկներ են կազմվել: Դրանք հետաքրքրություն են ներկայացնում ոչ միայն քրդերեն ուսումնասիրող մասնագետների, այլև հենց քրդերի համար: Հատկանշական է, որ այդ ձեռնարկներով մայրենի լեզուն են սովորել ու սովորում այն քրդերը, որոնց տարիներ շարունակ Թուրքիայում արգելվել է թուրքերենից բացի, այլ լեզվով խոսել:

«Քրդերեն» (կուրմանջի) առարկայի դասավանդումը ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետում սկսվել է տարիներ առաջ՝ հաշվի առնելով մեր տարածաշրջանի իրանական տարբեր լեզուների դասավանդման կարևորությունը: Ժամանակի ընթացքում հասունացել էր բուհական դասագիրք կազմելու պահանջը: Ուստի այս դասագիրքը քրդերենի առաջին բուհական հայալեզու դասագիրքն է, որը վերաբերում է կուրմանջի բարբառին և բաղկացած է երկու հատորից:

Կուրմանջին ուսուցանելու համար հիմք է ընդունվել Կանաստ Կուրդոնի և Չարկյազ Բականի կազմած քերականությունը: Այնուամենայնիվ, քերականական շատ իրողություններ ներկայացնելիս հաճախ համեմատվել է նաև Բադրխանի քերականության նյութը, երբեմն էլ՝ այլ իրանական լեզուներում, ինչպես նաև հայոց լեզվում առկա նմանատիպ երևույթները:

Կուրդոնը նշում է, որ անորոշ դերբայն ունի *-din, -tin, -in, -an, -în* վերջավորությունները<sup>14</sup>: Տարիներ անց լույս տեսած իր մեկ այլ աշխատության մեջ վերջինս առանձնացնում է անորոշ դերբայի *-tin, -din, -în, -ûn, -rin* վերջավորությունները<sup>15</sup>:

Համեմատելով քրդերենի ու պարսկերենի անորոշ դերբայները<sup>16</sup> և հաշվի առնելով այդ երկու լեզուներում բայի ներկայի ու անցյալի հիմքերը

---

<sup>14</sup> Sté u **К. Курдоев**, Грамматика курдского языка (курманджи), стр. 157; **К. Курдоев**, Грамматика курдского языка на материале диалектов курманджи и сорани, Москва, 1978, стр. 123-128:

<sup>15</sup> Sté u **К. Курдоев**, Грамматика курдского языка на материале диалектов курманджи и сорани, стр. 121-123:

<sup>16</sup> Պարսկերենում անորոշ դերբայն ունի *-dan, -t'an, -īdan, -ēstan* վերջավորությունները (**Գ. Նալբանդյան**, Պարսից լեզվի քերականություն, Երևան, 1997, էջ 276-277):

կազմելու առանձնահատկությունները<sup>17</sup> սույն դասագրքի հեղինակները նախընտրել են կուրմանջի բարբառում առանձնացնել *-din, -tin, -stin, -in, -în, -an, -ûn* անորոշ դերբայի վերջավորությունները:

Չուրմանջի բարբառում հոլովական կարգն արտահայտելու համար Չուրդոնն ու Բականը առանձնացնում են երեք հիմնական հոլով՝ «*прямой падеж*», «*звательный падеж*», «*косвенный падеж*»<sup>18</sup>: Բացի այս երեք հոլովից՝ Չուրդոնը տարբերակում է նաև՝ «*вторичные послеложные падежи*» («*совместно-направительный падеж*», «*совместный падеж*», «*местный падеж*» – «*образованные на базе косвенного падежа*»)<sup>19</sup>:

Սույն դասագրքում կուրմանջի բարբառի հոլովական համակարգը ներկայացվում է երկու հոլովով (ուղիղ ու թեք): Ուղիղ հոլովը համապատասխանում է հայերենի ուղղական հոլովին, թեք հոլովը՝ հայերենի սեռական-տրականին: Ընդ որում՝ թեք հոլովաձևերը կարող են կիրառվել նաև նախդիրների ու հետադրությունների, կապերի և կապական բառերի հետ: Վերջինները թեք հոլովով կիրառվող բառին կարող են հաղորդել հայերենի բացառական, գործիական հոլովների իմաստ:

Ինչ վերաբերում է եղանակներին ու բայաձևերին, ապա Չուրդոնն առանձնացնում է «*изъявительное наклонение, неизъявительное наклонение, сослагательное наклонение, повелительное наклонение, ирреальное наклонение и др.*»<sup>20</sup>: Ըստ այդմ՝ Չուրդոնը ներկայացնում է բայի հետևյալ եղանակներն ու ժամանակաձևերը<sup>21</sup>:

<b>Изъявительное наклонение</b>		
Настоящее время	Ez dik'evim.	Ես ընկնում եմ <sup>22</sup> :
Первое будущее время	Ezê bik'evim.	Ես ընկնելու եմ: Ես կընկնեմ:

<sup>17</sup> Տե՛ս **Գ. Նալբանդյան**, Պարսից լեզվի քերականություն, էջ 282-285; **Կ. Курдоев**, Грамматика курдского языка (курманджи), стр. 158-164:

<sup>18</sup> Տե՛ս **Կ. Курдоев**, Грамматика курдского языка (курманджи), стр. 56-66; **Կ. Курдоев**, Грамматика курдского языка на материале диалектов курманджи и сорани, стр. 53-69; **Չ. Бакаев**, Язык курдов СССР, Москва, 1973, стр. 73-93:

<sup>19</sup> Տե՛ս **Կ. Курдоев**, Грамматика курдского языка (курманджи), стр. 67-75; **Կ. Курдоев**, Грамматика курдского языка на материале диалектов курманджи и сорани, стр. 55-69:

<sup>20</sup> Տե՛ս **Կ. Курдоев**, Грамматика курдского языка (курманджи), стр. 206:

<sup>21</sup> Տե՛ս **Կ. Курдоев**, Грамматика курдского языка (курманджи), стр. 207-248:

<sup>22</sup> Տրվում է նախադասությունների բառացի թարգմանությունը:

Второе будущее	Ezê wê bik'evim.	Ես ընկնելու եմ:
Аорист будущего времени	Ez bik'evim.	Ես ընկնեմ:
Прошедшее простое	Ez k'etim.	Ես ընկա:
Ближайшее прошедшее	Ez wê (va) k'etim.	Ես ընկա (քոց.՝ <i>Uhu ընկա</i> ):
Прошедшее длительное	Ez dik'etim.	Ես ընկնում էի:
Преждепрошедшее	Ez k'etibûm.	Ես ընկել էի:
Прошедшее настоящее (перфект)	Ez k'etime.	Ես ընկել եմ:
<b>Сослагательное наклонение</b>		
Сослагательное наклонение (будущее в прошедшем)	Ezê bik'etama.	Ես ընկնելու էի: Ես կընկնեի:
Усеченная форма сослагательного наклонения	Ez wê bik'etama.	Ես ընկնելու էի:
Полная форма сослагательного наклонения	Ezê wê bik'etama.	Ես ընկնելու էի:
<b>Повелительное наклонение</b>	Bibîne! Bibibînin!	Տե՛ս: Տեսե՛ք:
<b>Ирреальное наклонение</b>		
Прошедшее простое	Ez kuştinê bûm.	Քիչ էր մնում՝ ինձ սպանեին:
Сослагательное наклонение	Ez kuştinê bûma.	Ինձ սպանեին:
Настоящее время	Ez kuştinê me.	Քիչ է մնում՝ ինձ սպանեն:
Будущее время	Ezê kuştinê bim.	Քիչ է մնալու՝ ինձ սպանեն:

Բաղախը տարբերակում է երեք եղանակ՝ «*изъявительное наклонение*», «*сослагательное наклонение (конъюнктив)*», «*повелительное наклонение*»<sup>23</sup>: Ամեն մի եղանակի համար նա առանձնացնում է որոշակի ժամանակաձևեր:

#### **Изъявительное наклонение**

1. Настоящее время. 2. Будущее время. 3. Простое прошедшее время. 4. Прошедшее длительное время. 5. Прошедшее результативное время (перфект) 6. Преждепрошедшее время<sup>24</sup>:

<b>Изъявительное наклонение</b>		
Настоящее время	Ez dik'evim.	Ես ընկնում եմ:
Будущее время	Ezê bik'evim.	Ես ընկնելու եմ (ես կընկնեմ):
Простое прошедшее время	Ez k'etim.	Ես ընկա:
Прошедшее длительное время	Ez dik'etim.	Ես ընկնում էի:
Прошедшее результативное время (перфект)	Ez k'etime.	Ես ընկել եմ:
Преждепрошедшее время	Ez k'etibûm.	Ես ընկել էի:

#### **Сослагательное наклонение (конъюнктив)**

1. Настояще-будущее время. 2. Прошедше-настоящее время. 3. Прошедше-будущее время. 4. Прошедшее время. 5. Прошедше-будущее-обусловленная форма<sup>25</sup>.

<b>Сослагательное наклонение</b>		
Настояще-будущее время	Ez bik'evim.	Ես ընկնեմ:
Прошедше-настоящее время	Ez k'etibim.	Ես ընկած լինեմ:
Прошедше-будущее время	Ez bik'etama.	Ես ընկնեի:
Прошедшее время	K'etibuyama.	Ես ընկած լինեի:
Прошедше-будущее-обусловленная форма	Ezê bik'etama.	Ես ընկնելու էի (ես կընկնեի):

<sup>23</sup> Տե՛ս Չ. Бакаев, Язык курдов СССР, стр. 176-210:

<sup>24</sup> Տե՛ս Չ. Бакаев, նշվ. աշխ., стр. 176-191:

<sup>25</sup> Տե՛ս Չ. Бакаев, նշվ. աշխ., стр. 197-208:

**Повелительное наклонение**<sup>26</sup>

Binivîse!	Գրի՛ր:
Binivîsin!	Գրե՛ք:

Սույն դասագրքում բայական համակարգը ներկայացվում է հնարավորինս հայերենում բայի խոնարհման հարացույցին համապատասխան: Ըստ այդմ՝ կուրմանջի բարբառում առանձնացվում են սահմանական, ըղձական ու հրամայական եղանակները: Կուրմանջի բարբառի համար հարկ չի եղել տարբերակելու ենթադրական ու հարկադրական եղանակները, քանի որ ենթադրական ու հարկադրական եղանակներին համապատասխանող բայաձևերը ներառվել են ըղձական եղանակի մեջ: Սահմանական, ըղձական, հրամայական եղանակների ժամանակաձևերից զատ՝ առանձնացվել են երկրորդական բաղադրյալ ժամանակաձևերը: Նյութը հայերենի բայական համակարգի նմանությամբ ներկայացնելու նպատակը հայալեզու ուսանողի համար քրդերենի կուրմանջի բարբառի յուրացումը մատչելի դարձնելն է:

Դասագրքում բայի խոնարհման հարացույցն ունի հետևյալ տեսքը:

<b>Սահմանական եղանակ</b>		
Անցյալ կատարյալ	Ez k'etim.	Ես ընկա:
Անկատար անցյալ	Ez dik'etim.	Ես ընկնում էի:
Անկատար ներկա	Ez dik'evim.	Ես ընկնում եմ:
Վաղակատար ներկա	Ez k'etime.	Ես ընկել եմ:
Վաղակատար անցյալ	Ez k'etibîm.	Ես ընկել էի:
Ապակատար ներկա	Ezê bik'evim.	Ես ընկնելու եմ (ես կընկնեմ):
Ապակատար անցյալ	Ezê bik'etama.	Ես ընկնելու էի (ես կընկնեի):
<b>Ըղձական եղանակ</b>		
Ըղձական ապառնի	Ez bik'evim.	Ես ընկնեմ:
Ըղձական անցյալ	Ez bik'etama.	Ես ընկնեի:

<sup>26</sup> Տե՛ս Վ. Бакаев, նշվ. աշխ., սրբ. 208-210:

<b>Հրամայական եղանակ</b>	Bik'eve! Bik'evin!	Ընկի՛ր: Ընկե՛ք:
<b>Երկրորդական բաղադրյալ ժամանակաձևեր</b>		
Երկրորդական բաղադրյալ ժամանակաձև (I)	K'etibim.	Ընկած լինեմ:
Երկրորդական բաղադրյալ ժամանակաձև (II)	K'etibûma.	Ընկած լինեի:

Դասագրքի առաջին հատորը, ինչպես արդեն նշվել է, բաղկացած է վաթսուն դասից: Ամեն մի դաս ներառում է քերականական հատված, տեքստեր, թեմային առնչվող վարժություններ, իսկ քերականական ու լեզվական մի շարք թեմաներ ներկայացվում են կից հավելվածներով:

Քրդերենի կուրմանջի բարբառի համար կիրառվող լատինատառ այբուբենը, որը կազմել ու մշակել է Ջելադետ Ալի Բադրխանը, բաղկացած է 31 տառից<sup>27</sup>: *Կուրմանջի* բարբառով խոսող քրդերի մեծամասնությունն այժմ օգտվում է այդ այբուբենից, որում՝

**Aa** գրանշանով արտահայտվում է **a** հնչյունը,

**Bb** գրանշանով՝ **b** հնչյունը,

**Cc** գրանշանով՝ **ç** հնչյունը,

**Çç** գրանշանով՝ երկու հնչյուն՝ **ç** ու **đ**,

**Dd** գրանշանով՝ **d** հնչյունը,

**Ee** գրանշանով արտահայտվում է քմայնացած **w** կարճ ձայնավորը: Այն արտասանելիս լեզվի ծայրը հպվում է ստորին ատամնաշարին, իսկ լեզվի միջին մասը քիչ բարձրացած է: Այս հնչյունը համապատասխանում է հայերենի բարբառներում հանդիպող **w** -ին,

**Ff** գրանշանով արտահայտվում է **f** հնչյունը,

<sup>27</sup> Տե՛ս **Bedir Khan, Djeladet Ali and Lescot, Roger**, Grammaire kurde: (dialect kurmandji), Paris, 1970, p. 3; **Celadet Ali Bedir-Xan**, Elfabêya kurdî û bingehên gramera kurdmancî, Stockholm, 2002, rûp. 11; **Elîxanê Memê**, Zimanê dê (kurmanci) kitêba 2-a, Yêrêvan, 2012, rûp. 5; **Abdullah Incekan**, Kurdisch Kompakt, Wiesbaden, 2010, pp. 11-12:

**Gg** գրանշանով՝ **g** հնչյունը,  
**Hh** գրանշանով՝ երկու հնչյուն՝ **h**-ն ու կոկորդային **h**-ն՝ ձայնալարերի  
լարվածությամբ արտասանվող խուլ հագագ,  
**Xx** գրանշանով՝ երկու հնչյուն՝ **խ** ու **ղ**,  
**Ĥĥ** գրանշանով՝ **խ** հնչյունը,  
**Êê** գրանշանով՝ **է** հնչյունը,  
**Ii** գրանշանով՝ **ը** հնչյունը,  
**Jj** գրանշանով՝ **ժ** հնչյունը,  
**Kk** գրանշանով՝ երկու հնչյուն՝ **կ** ու **ք**,  
**Qq** գրանշանով արտահայտվում է **ղ**-ի նման քմալեզվային հպական  
խուլ բաղաձայնը, որն արտաբերվում է լեզվի հետին մասի՝ փափուկ  
քիմքին հպումով,  
**Ll** գրանշանով՝ **լ** հնչյունը,  
**Mm** գրանշանով՝ **մ** հնչյունը,  
**Nn** գրանշանով՝ **ն** հնչյունը,  
**Oo** գրանշանով՝ **օ** հնչյունը,  
**Pp** գրանշանով՝ երկու հնչյուն՝ **պ** ու **փ**,  
**Rr** գրանշանով՝ երկու հնչյուն՝ **ր** և **ռ**,  
**Ss** գրանշանով՝ **ս** հնչյունը,  
**Şş** գրանշանով՝ **շ** հնչյունը,  
**Tt** գրանշանով՝ երկու հնչյուն՝ **տ** ու **թ**,  
**Uu** գրանշանով՝ քմայնացած **օ** (ö) հնչյունը,  
**Ūū** գրանշանով՝ **ու** հնչյունը,  
**Vv** գրանշանով՝ **վ** հնչյունը,  
**Ww** գրանշանով արտահայտվում է երկշրթնային շփական ձայնորդը՝  
անգլերեն **w**-ի նման,  
**Yy** գրանշանով՝ **յ** հնչյունը,  
**Zz** գրանշանով՝ **զ** հնչյունը:

Սույն դասագրքում ներկայացվում է հենց այս լատինատառ այբու-  
բենը՝ միայն հետևյալ բացառությամբ: Դասագիրքը նախատեսվում է ոչ թե  
լեզվակիրների, այլ սկսնակների համար, ուստի ընթերցանությունն ու  
նյութի յուրացումը մատչելի դարձնելու նպատակով դասագրքի առաջին  
հատորում *վի, թ, ք, ռ, ղ, ճ* հնչյունների, կոկորդային *h*-ի, կոկորդային կարճ  
*ü* -ի համար համապատասխանաբար կիրառվել են *p', t', k', r', x', ç', h'* և

e' տառատեսակները: Հարկ է նշել, որ նման մոտեցումը նորարարություն կամ նորմից շեղում չէ, քանի որ *կուրմանջիի* համար գրատեսակների այդ ձևերը կիրառելու նախադեպեր եղել են<sup>28</sup>:

Խոսելով կուրմանջի բարբառի մասին՝ կարելի է վստահորեն ասել, որ այն ձգտում է կանոնարկման, բայց դեռևս վերջնականապես դրան չի հասել: Պատահական չէ, որ կուրմանջիի տարբեր խոսվածքներում, գրակա-նության ու մամուլի լեզվում բազմաթիվ են միևնույն բառի տարբեր-ցումները, ինչպես նաև միևնույն բառի կամ արտահայտության մի քանի տարբերակները:

xwestin	xwastin	ցանկանալ
xwerin	xwarin	ուտել
xûşk	xwîşk	քույր
xûn	xwîn	արյուն
risq	rizq	բաժին, հասանելիք
xwendik'ar	xwendek'ar	ուսանող
cî	cîh	տեղ
fire	fireh	լայն
xilaz bûn	xilas bûn	վերջանալ
berhev kirin	berev kirin	հավաքել
te'v	tav	արև
çe'v	çav	աչք

Դասագրքում ներառված տեքստերում և վարժություններում նմանա-տիպ բառերի և արտահայտությունների բոլոր տեսակներն էլ առկա են: Հեղինակները չեն սահմանափակվել լեզվի մի խոսվածքին հատուկ ձևե-րով, որն էլ հնարավորություն է ընձեռում ուսանողին աստիճանաբար յուրացնելու այս լեզվի տարբեր խոսվածքների հարստությունն ու բազմա-զանությունը:

<sup>28</sup> Տե՛ս u Keremê Anqosî, Alifba bona zimanê k'urdî (kurmançî) bi t'îpên latînî, T'îbilîsî, 2004, rûp. 5-6:



# Դաս 1

## Այբուբեն

### A a

av	ջուր		Ev av e.	Սա ջուր է:
agir	կրակ		Ew av e.	Դա ջուր է:
al	Դրոշակ		Av sar e.	Ջուրը սառն է:
aş	Ջրադաց		Ev agir e.	Սա կրակ է:

### B b

ba	Քամի		Îro sar e.	Այսօր ցուրտ է:
bav, bab	Հայր		Bar giran e.	Բեռը ծանր է:
bar	Բեռ		Ev baran e.	Սա անձրև է:
baran	անձրև		Baran hat.	Անձրև եկավ:
beran	Խոյ		Bav baş e.	Հայրը բարի (լավ) է:
baş	լավ, բարի		Ev beran e.	Սա խոյ է:

### C c

cil	հագուստ, շոր		Ev cil e.	Սա շոր է:
cî	տեղ		Ev cil in.	Սրանք շորեր են:
cêr'	կճուճ		Ew cil e.	Դա շոր է:
cînar, cîran	հարևան		Ew cil in.	Դրանք շորեր են:
civak	հասարակություն		Cil sor e.	Հագուստը կարմիր է:
civat	նիստ, միավորում		Ev cînar e.	Սա հարևան է:

### Ç ç

çar	չորս		Ev çay e.	Սա թեյ է:
çay	թեյ		Çay germ e.	Թեյը տաք է:
çaydank, çaydang	թեյաման		Ev çaydank e.	Սա թեյաման է:
ç'îya	սար		Çay di çaydankê de ye.	Թեյը թեյամանում է:
ç'îrok	հեքիաթ		Ev ç'îya ye.	Սա սար է:
nêç'îr	որս		Ç'îya bilind e.	Սարը բարձր է:
ç'erm	մաշկ		Ev nêç'îrvan e.	Սա որսորդ է:
nêç'îrvan	որսորդ		Ev ç'îrok e.	Սա հեքիաթ է:

**D d**

dê, dayîk	մայր	Dayîkê çay da.	Մայրիկը թեյ սովեց:
dar	ծառ, փայտ	Ev dar e.	Սա ծառ է:
dîk	արքադաղ	Dar bilind e.	Ծառը բարձր է:
beden	մարմին	Ev dîk e.	Սա արքադաղ է:

**E e**

şe	սանր	Ev şe ye.	Սա սանր է:
te`v, tav	արև	Ev te`v e.	Սա արև է:
ç`e`v, ç`av	աչք	Te`v germ e.	Արևը տաք է:
dest	ձեռք	Ev dest e.	Սա ձեռք է:

**Ê ê**

xêr	բարիք	Ev stêrk e.	Սա աստղ է:
mêr	տղամարդ	Stêrk dûr e.	Աստղը հեռու է:
stêr, stêrk	աստղ	Stêrk dûr in.	Աստղերը հեռու են:
êmîş	միրգ	Ev êmîş e.	Սա միրգ է:
k`êr	դանակ	Êmîş şîrin e.	Միրգը քաղցր է:
êş	ցավ	Ev êmîş in.	Մրանք մրգեր են:
êvar	երեկո	Êmîş şîrin in.	Մրգերը քաղցր են:
dêr	եկեղեցի	Ev k`êr e.	Սա դանակ է:
		K`êr tûj e.	Դանակը սուր է:
		K`êr tûj in.	Դանակները սուր են:

**F f**

fîl	փիղ	Ev fîl e.	Սա փիղ է:
ferheng	բառարան	Fîl mezin e.	Փիղը մեծ է:
fêkî	միրգ	Fêkî şîrin e.	Միրգը քաղցր է:
berf	ձյուն	Fêkî şîrin in.	Մրգերը քաղցր են:
def	դափ, դիմ	Berf gelek e.	Ձյունը շատ է:

**G g**

gav	քալ	Ev genim e.	Սա ցորեն է:
gore	գուլպա	Genim li zevîyê ye.	Ցորենն արտում է:
golik	հորթ	Ev ga ye.	Սա եգ է:
genim	ցորեն	Ga dixebite.	Եգը բանում է:
ga	եգ	Ev gore ye.	Սա գուլպա է:
		Gore t`eze ye.	Գուլպան նոր է:

**H h**

havîn	ամառ		Ev h'irç' e.	Սա արջ է:
hevîr	խմոր		H'irç'ê hingiv xwar.	Արջը մեղր կերավ:
h'irç'	արջ		Bav hingiv anî.	Հայրը մեղր բերեց:
h'is̄	խելք		Dayîkê hevîr anî.	Մայրիկը խմոր բերեց:
duh, duhu, duhî	երեկ		Dayîkê nan anî.	Մայրիկը հաց բերեց:
hingiv	մեղր		Dayîkê nan da.	Մայրիկը հաց սվեց:
hêk	ձու		Dayîkê hevîr stra.	Մայրիկը խմոր հունցեց:
hêsa	հեշտ		Duh baran barî.	Երեկ անձրև տեղաց:

**I i**

gizêr	գազար		Ev gizêr e.	Սա գազար է:
silq	ճակնդեղ		Gizêr xweş e.	Գազարը համեղ է:
imbar	պահեստ		Ev silq e.	Սա ճակնդեղ է:
ciwan, cihal, cahil	երիտասարդ		Silq sor e.	Ճակնդեղը կարմիր է:
zivistan	ձմեռ		Zivistan sar e.	Չմեռը ցուրտ է:

**Î î**

îş	գործ		Ev îş e.	Սա գործ է:
hîv, heyv	լուսին		Ev îş dijwar e.	Այս գործը դժվար է:
îro	այսօր		Havîn hat.	Ամառը եկավ:
havîn	ամառ		Hîv li e'zmana ye.	Լուսինը երկնքում է:

**J j**

jin	կին		Ew jin e.	Նա կին է:
jîyan	կյանք		Jin r'ind e.	Կինը գեղեցիկ է:
bajar	քաղաք		Jin jîyan e.	Կինը կյանք է:
serokbajar	մայրաքաղաք		Ev bajar e.	Սա քաղաք է:
je'r	թույն		Yêrêvan serokbajar e.	Երևանը մայրաքաղաք է:

**K k**

kur'	որդի		Ev kevir e.	Սա քար է:
ker	մաս, բաժին		Kevir giran e.	Քարը ծանր է:
ker'	խուլ		Ev k'er e.	Սա ավանակ է:

kul	խոց		K'er ajal e.	Ավանակը կենդանի է:
k'ar	գործ		K'er k'ar kir.	Ավանակը բանեց:
k'er	ավանակ		K'er p'ir' jar e.	Ավանակը շատ նիհար է:
kevir	քար		Kar hêsa ye.	Աշխատանքը հեշտ է:

## L l

lênûsk	տետր		Ev lênûsk e.	Սա տետր է:
lêv	շրթունք		Ev lênûsk in.	Սրանք տետրեր են:
mil	թև		Ev leymûn in.	Սրանք կիտրոններ են:
leymûn	կիտրոն		Ev leymûn e.	Սա կիտրոն է:
lihêf	վերնակ		Leymûn gelek tirş e.	Կիտրոնը շատ թթու է:

## M m

mal	տուն		Ev mal e.	Սա տուն է:
mamoste	ուսուցիչ		Mal mezin e.	Տունը մեծ է:
dem	ժամանակ		Ev mamoste ye.	Սա ուսուցիչ է:
meh	ամիս		Mamoste zane ye.	Ուսուցիչը գիտակ է:

## N n

nan	հաց		Ev nan e.	Սա հաց է:
nav	անուն		Nan xweş e.	Հացը համեղ է:
neynîk	հայելի		Ev neynîk e.	Սա հայելի է:
ling <sup>29</sup>	նոսք		Neynîk t'eze ye.	Հայելին նոր է:

## O o

ode	սենյակ, հյուրասենյակ		Ev ode ye.	Սա սենյակ է:
sor	կարմիր		Ode mezin e.	Սենյակը մեծ է:
moz	մեղու		Mûz zer e.	Բանանը դեղին է:
mûz	բանան		Mûz şîrin e.	Բանանը քաղցր է:

## P p

pîr	ծ եր		Ev pênuş e.	Սա գրիչ է:
dapîr, pîrik	տատ		Dapîr pir pîr e.	Տատիկը շատ ծեր է:
pişt	մեջք		Pênuş sor e.	Գրիչը կարմիր է:
penêr, penîr	պանիք		Dayîkê pênuş k'ir'î.	Մայրիկը գրիչ գնեց:

<sup>29</sup> Որոշ խոսվածքներում տարածված է *nig* տարբերակը:

pênûs	գրիչ		Dayîk p'îya çû.	Մայրիկը ոտքով գնաց:
pêlav	կոշիկ		Ev pîvaz e.	Սա սոխ է:
pîvaz	սոխ		Pîvaz tûj e.	Սոխը կծու է:
par	անցյալ տարի		Dayîk par çû Yêrêvanê.	Մայրիկն անցյալ տարի գնաց Երևան:
p'ê	ոտք		Pêlav mezin e.	Կոշիկը մեծ է:
p'îya, bi p'êya	ոտքով		Pêlav mezin in.	Կոշիկները մեծ են:

## Q q

qîz	աղջիկ		Ev qaz e.	Սա սագ է:
quling	կռունկ		Quling ber çêm e.	Կռունկը գետի ափին է:
qaz	սագ		Ev al spî ye. Ev beyraq spî ye.	Այս դրոշը սպիտակ է:
qelem	գրիչ		Qelem sor e.	Գրիչը կարմիր է:
beyraq	դրոշ		Qelem sor in.	Գրիչները կարմիր են:

## R r

ar	ա լ յ ու ռ		Bihar hat.	Գարուն եկավ:
bihar, bahar	գարուն		Bihar germ e.	Գարունը տաք է:
r'ê	ճանապարհ		Bihar germ bû.	Գարունը տաք էր:
r'êz	շարք, կարգ		Ev r'ê ye.	Սա ճանապարհ է:
r'êzik	կարգուկանոն		Ev r'ê r'ast e.	Այս ճանապարհն ուղիղ է:
r'oj, r'o	օր, արև		Ev r'ê dirêj e.	Այս ճանապարհը երկար է:

## S s

sêv	խնձոր		Ev sêv e.	Սա խնձոր է:
sar	ցուրտ		Sêv sor û şîrin e.	Խնձորը կարմիր ու քաղցր է:
mest	հարբած		Ev mast e.	Սա մածուն է:
mast	մածուն		H'esen mest e.	Հասանը հարբած է:
			H'esen mest bû.	Հասանը հարբած էր:

## Ş ş

şîv	ընթրիք
şîr	կաթ
şêr	առյուծ

şerab, şerav	գինի
r'eş	սև
aşî	հաշտություն, խաղաղություն
mêş	ճանճ
mêşe, daristan	անտառ
mişmiş	ծիրան

Armên şerab vexwar.	Արմենը գինի խմեց:
Zar'okê şîr vexwar.	Երեխան կաթ խմեց:
Aram şîv xwar.	Արամը ընթրեց (բոց.՝ <i>Արամը ընթրիք կերավ</i> ):

### T t

tîr	թանձր	Ev tirî ye.	Սա խաղող է:
tirî	խաղող	Ev tirî r'eş e.	Այս խաղողը սև է:
r'ast	ճիշտ	Şîr tîr e.	Կաթը թանձր է:
tîrs	վախ	Şîr şîrin e.	Կաթը քաղցր է:
t'eze	նոր	Mal t'eze ye. Mal nû ye.	Տունը նոր է:
t'emiz	մաքուր	Ode t'emiz e. Ode paqij e.	Սենյակը մաքուր է:

### U u

du	Երկու	Ew keç' k'urd e.	Այդ աղջիկը քուրդ է:
k'urd	քուրդ	Ew keç' k'urd in.	Այդ աղջիկները քուրդ են:
gulî	Հյուս	Ew jin k'urd in.	Այդ կանայք քուրդ են:

### Û û

xûşk	քույր	Ew bûk e.	Նա հարս է:
birû	հոնք	Bûk ciwan e.	Հարսը գեղեցիկ է:
bûk	հարս	Birû r'eş in.	Հոնքերը սև են:

### V v

av	ջուր	Ev mal e.	Սա տուն է:
avahî, avayî	շենք, շինություն	Ev mal vala ye.	Այս տունը դատարկ է:
vala	դատարկ	Ev ode vala ye.	Այս սենյակը դատարկ է:

**W w**

welat	երկիր
bawerî	հավատ
werdek	բաղ
mêwa	միրգ
war	տեղ, տարածք

Ermenistan welatê me ye.	Հայաստանը մեր երկիրն է:
K'urdistan warê kurda ye.	Քրդստանը քրդերի տարածքն է:

**X x**

xal	քեռի		Ev bax e.	Սա այգի է:
bax	այգի		Ev xanî mezin e.	Այս տունը մեծ է:
xanî	բնակարան, տուն		Aram xewn dît.	Արամը երազ տեսավ:
xewn	երազ		Min xewn dît.	Ես երազ տեսա:

**Y y**

yek	մեկ		Keç' ji deştê gîya anî.	Աղջիկը դաշտից խոտ բերեց:
yar	սիրեցյալ		Golikê gîya xwar.	Հորթը խոտ կերավ:
gîha, gîya, gihîya	խոտ		Gîha şîn e.	Խոտը կանաչ է:

**Z z**

zar', zar'ok	երեխա
zar	լեզու, խոսելու կարողություն
aza, azad	ազատ
azadî, azayî	ազատություն
ziman	լեզու
zer	դեղին
zêr'	նսկի
zeng	ժանգ
zengil	զանգ
zur'ne	զուռնա
zerdele	ծիրան

Ermenî zimanê me ye.	Հայերենը մեր լեզուն է:
Zivistan hat.	Ձմեռը եկավ:

### ***H'evok***

Berf spî ye. Berf spî û sar e.  
 Xwelî r'eş e. Li vir xwelî r'eş e.  
 Gul sor e. Gul sor û k'esk e.  
 Gîya şîn e. Belg şîn e. Mêrg jî hêşîn e.  
 E'zman bilind e. E'zman sût e.  
 Behr şîn e. Ev derya şîn e.  
 P'irteqal qîçik e. P'irteqal qîçik û tirş e.  
 Ala Ermenistanê sor, şîn û qîçik e.  
 Ala K'urdistanê sor, spî û k'esk e. Ser beyraqa K'urdistanê r'oj e.  
 Ev dîwar bilind e. R'engê wê gewr e. Dîwar gewr e.  
 Qewhe qewher'engî ye. Qewhe germ e. Qewhe germ û te'l e.  
 K'eskesor r'engîn e. Ev k'eskesor r'ind û r'engr'engî ye.  
 Pembû spî ye. Derya şîn e. Zêr' zer e.  
 Zeytûn r'eş e. Gul sor e.  
 E'rd r'eş e, lê berf spî ye. Ev av germ e, lê ev berf sar e.  
 Mala me mezin e, lê mala we biçûk e.  
 Ev dar bilind e, lê ew dar nizm e.  
 Li ç'îyê sar e, lê li deştê germ e.  
 Mistefa qewat e, lê Îsmayîl sist e.  
 Şev te'rî ye, lê r'oj r'onkayî ye.  
 Besê bilind e, lê Asê kin e. Por'ê Asê zer e.  
 Asê keç' e, lê Îsmayîl kur' e.

### Նոր բառեր

h'evok, cumle	նախադասություն
berf	ձյուն
r'eng	գույն
spî	սպիտակ
r'eş	սև
sor	կարմիր
k'esk	կանաչ
hêşîn, şîn	կանաչ
sût	կապույտ, երկնագույն
zer	դեղին, ոսկեգույն
qîçik	նարնջագույն, դեղին



qewher'engî, qewheyî	շագանակագույն
gewr	մոխրագույն, գորշ
k'eskesor	ծիածան
xwelî	հող
vir, vira	այստեղ
li	տեղ ցույց տվող նախդիր
belg	տերև
mêrg	մարգագետին
behr, be'r, derya	ծով
p'irteqal	նարինջ
beyraq	դրոշ
dîwar	պատ
te'l, tal	դառը
r'ind	լավ
r'engîn	գունեղ, շքեղ
r'engr'engî	գունավոր, գույնզգույն
germ	տաք
sar	սառը, ցուրտ
mal	տուն
mezin	մեծ
biç'ûk	փոքր
bilind	բարձր
nizm, nimz	ցածր
ç'îya	լեռ
qewat	ուժեղ
sist	թույլ
te'rî	մութ
r'onkayî, r'onahî	լուսավոր
bilind	բարձր, բարձրահասակ
kin	կարճ, ցածրահասակ
por'	մազ

### H'esen û Xezal

H'esen û Xezal xûşk û bira ne. H'esen berxvan e, lê Xezal xebatk'ar e.

Xûşk û bira sibê r'abûn. Hesen berx bir berp'alê. Berp'al mîna xalîya r'engîn bû. H'esen gelek xaşxaşk berev kir. R'ô çû ava. H'esen berx anîn.

Նոր բառեր և արտահայտություններ

berx	գառ
berxvan	գառնարած
xebatk'ar	բանվոր, աշխատավոր
Ewan r'abûn.	Նրանք վեր կացան:
Wî bir.	Նա տարավ:
berp'al	սարի լանջ
mîna	նման
xalî, xalîçe	գորգ
Eq r'engîn bû	Դա գունեղ էր:
xaşxaşk	կակաչ
Wî berev kir (wî berhev kir).	Նա հավաքեց:
R'o çû ava.	Արևը մայր մտավ:
Wî anî.	Նա բերեց:

**Ժողովրդական ասացվածքներ**

Şêr şêr e, çî jin e çî mêr e.

Ser darekî du êmîş nabe.

E'wrê r'eş baran e, e'wrê spî zivistan e.

Նոր բառեր և արտահայտություններ

şêr	աղյուծ
çî	ինչ
Usa nabe.	Այսպես չի լինում:
e'wr	ամպ
baran	անձրև
zivistan	ձմեռ

## Դաս 2

### Անձնական դերանուններ

Անձնական դերանունները նշում են խոսող անձի, խոսող անձանց, խոսակցի, խոսակիցների, երրորդ անձի կամ անձանց՝ առանց անվանելու:

Քրդերենի կուրմանջի բարբառում կան ուղիղ հոլովով ու թեք հոլովով անձնական դերանուններ: Ուղիղ հոլովով անձնական դերանուններն են.

I դեմք	ez	Ես
II դեմք	tu	դու
III դեմք	ew (ewa)	նա

I դեմք	em	մենք
II դեմք	hûn	դուք
III դեմք	ew (ewan, ewana)	նրանք

Եզակի երրորդ դեմքում փակագծերում նշվում է *ewa* անձնական դերանունը, որը կիրառվում է իզական սեռի գոյականի համար: Ներկայում հաճախ *ew* ձևն են կիրառում ն՝ արական, ն՝ իզական սեռի գոյականների փոխարեն:

Հ ո գ ն ա կ ի երրորդ դեմքի անձնական դերանվան համար փակագծերում նշվում են *ewan, ewana* ձևերը. ներկայում կիրառվում է *ew* ձևը:

Ez hatim.	Ես եկա:
Ez r'ûniştım.	Ես նստեցի:
Ez çûm.	Ես գնացի:
Ez diçim.	Ես գնում եմ:
Ez her'im.	Ես գնամ:
Ezê her'im.	Ես գնալու եմ:
Ez dinivîsim.	Ես գրում եմ:
Ezê binivîsim.	Ես գրելու եմ:

#### **Երկխոսություն**

Zilan: R'ojbaş. Ez Zilan im.  
 Ceger: R'ojbaş. Ez Ceger im.  
 Zilan: Tu t'irk î?

Ceger: Naxêr!

Zilan: Tu k'urd î?

Ceger: Belê, ez k'urd im.

Zilan: Ez jî k'urd im.

Ceger: Tu ji Îranê yî?

Zilan: Erê, ez ji Îranê me, ji bajarê Urmîye. Tu jî ji Îranê yî?

Ceger: Na, ez ji Mêrdînê me.

Zilan: Bi r'astî! Baş e. Ez k'êfxweş bûm.

Ceger: Erê, ez jî p'ir' k'êfxweş bûm.

Նոր բառեր և արտահայտություններ

r'ojbaş	բարի օր
t'irk	թուրք
belê, erê	այո՛
naxêr, na	ն՛ չ
jî	նաև, էլ
ji	Նախդիր, որը բառին հաղորդում է բացառական հոլովի իմաստ:
r'ast	ճիշտ, ուղիղ
bi r'astî	իսկապես
p'ir'	շատ
Ez k'êfxweş bûm.	Հաճելի էր (բոց.՝ <i>Ես ուրախացա</i> ):

### Հավելված

- Քրդերենի կուրմանջի բարբառում գոյականն ունի երեք սեռ՝ արական, իգական ու ընդհանուր: Ընդհանուր սեռի են այն բառերը, որոնք կարող են հանդես գալ և՛ որպես իգական, և՛ որպես արական սեռի գոյականներ:

#### 1. Արական սեռի գոյականներ

bav	հայր
ap, mam	հորեղբայր
xal	քեռի
law, kur'	որդի, տղա
ziman	լեզու

#### 2. Իգական սեռի գոյականներ

dayîk	մայր
keç', qîz	աղջիկ, դուստր

bazar	շուկա
k'itêb, pirtûk	գիրք
dibistan	դպրոց
zanîngeh, zanko	համալսարան

### 3. Ընդհանուր սեռի գոյականներ

cînar	հարևան
heval	ընկեր
xwendek'ar	ուսանող
şagirt	աշակերտ

- Նախընտրելի է կուրմանջիի համար առանձնացնել երկու հոլով՝ **ուղիղ** ու **թեք**: Ուղիղ հոլովը համապատասխանում է հայերենի ուղղական հոլովին, թեք հոլովը՝ հայերենի սեռական-տրականին: Թեք հոլովով կիրառվելիս որոշ բառեր պատկանում են ներքին թեքման.

Գոյականը՝ ուղիղ հոլովով		Գոյականը՝ թեք հոլովով	
derman	դեղ	dermên	դեղը, դեղի
aş	ջրաղաց	êş	ջրաղացը, ջրաղացի, ջրաղացին
nan	հաց	nên	հացը, հացի, հացին
dîwar	պատ	dîwêr	պատը, պատի, պատին

1. Ներքին թեքման չպատկանող արական սեռի գոյականները թեք հոլովով կիրառվելիս չեն փոփոխվում (բացառություն են *bav, ap* և մի շարք այլ բառեր): Ներքին թեքման չպատկանող իգական սեռի գոյականներն ու տեղանունները թեք հոլովով գործածվելիս ստանում են *-ê* վերջավորություն.

mala Aram	Արամի տունը
mala Aanahîtê	Անահիտի տունը
navê Yêrêvanê	Երևանի անունը
mala bavê	հոր տունը

2. Բառերը թեք հոլովով կարող են կիրառվել նախդիրների, հետադրությունների, կապերի ու կապական բառերի հետ: Նախդիրներն ու

հետադրությունները թեք հոլովով գործածված բառին կարող են հաղորդել հայերենի բացառական, գործիական հոլովների իմաստ.

ji Aanahîê	Անահիտից
pê dermên	դերով
piş dîwêr	պատի հետևում
bona Aanahîê	Անահիտի համար

### Xelîl û pîrik

Xelîl çû mala pîrikê. Mala pîrikê dûr e, ew li gund e.

Pîrikê Xelîl paç kir û bir malê. Pîrikê pe’rî nan û penêr danî ber Xelîl.

Paşê pîrê pê k’êrê xîyar û pîvaz hûr kir.

Xelîl pirsî:

– Pîrê, ev penêrê pêz e?

Pîrikê bersîv da:

– Na, ev penêrê ç’êlekan e.

Xelîl nan, penêr û pîvaz xwar. Dawîyê Xelîl destê pîrê r’amûsa.

Նոր բառեր և արտահայտություններ

Ew çû.	Նա գնաց:
pîrik	տատ
dûr	հեռու
gund	գյուղ
Wî paç’ kir.	Նա համբուրեց:
Wî bir.	Նա տարավ:
pe’rî, parî	պատառ
Wî danî.	Նա դրեց:
ber	առջև, դեմ
pê k’êrê	դանակով
Wî hûr kir.	Նա մանրեց:
pez	ոչխար
pêz	ոչխարի
bersîv	պատասխան
Wî bersîv da.	Նա պատասխանեց:
ç’êlek	կով
Wî r’amûsa.	Նա համբուրեց:

## Անձնական դերանուններ (թեք հոլովով)

Քրդերենի կուրմանջի բարբառում լայնորեն կիրառվում են նաև անձնական դերանունների թեք հոլովաձևերը:

I դեմք	min	ինձ, իմ
II դեմք	te <sup>30</sup>	քեզ, քո
III դեմք	wî (ewî) (արական), wê (ewê) (իգական)	նրան, նրա

I դեմք	me	մեզ, մեր
II դեմք	we	ձեզ, ձեր
III դեմք	wan (wana)	նրանց

Անձնական դերանունների թեք հոլովաձևերը անցյալ կատարյալ, անկատար անցյալ, վաղակատար ներկա, վաղակատար անցյալ, ըղձական անցյալ, ապակատար անցյալ ժամանակաձևերում կիրառվում են անցողական բայերի հետ:

Անցյալ կատարյալ	Min got.	Ես ասացի:
Անկատար անցյալ	Min digot.	Ես ասում էի:
Վաղակատար ներկա	Min gotiye.	Ես ասել եմ:
Վաղակատար անցյալ	Min gotibû.	Ես ասել էի:
Ըղձական անցյալ	Min bigota.	Ես ասեի:
Ապակատար անցյալ	Minê bigota.	Ես ասելու էի:

Այլ օրինակներ՝

Min xwar.	Ես կերա:
Min nivîsî.	Ես գրեցի:
Min dinivîsî.	Ես գրում էի:

Թեք հոլովով անձնական դերանունները հանդես են գալիս նաև իգաֆեթային կառույցում: *Fqaşêþer* իրանական լեզուներին բնորոշ քերականական կառույց է, որի միջոցով արտահայտվում է որոշիչ-որոշյալ, հատկացուցիչ-հատկացյալ հարաբերությունը.

hevalê min	իմ ընկերը
lawê te	քո որդին

<sup>30</sup> Խոսակցական լեզվում կիրառվում է նաև *tue* ձևը:

Կուրմանջիում չկան կցական անձնական դերանուններ. դրանք հանդիպում են կենտրոնական և հարավքրդական բարբառախմբի խոսվածքներում: Կուրմանջիում, սակայն, եզակի առաջին դեմքի համար կիրառվում է **-m (-im)** վերջավորությունը, որը *min* անձնական դերանվան կրճատված ձևն է և կարող է կիրառվել հետևյալ կերպ.

xûşk	քույր	xûška min = xûškam	իմ քույր, քույրս
bira	եղբայր	birê min = birê m	իմ եղբայր, եղբայրս
kur'	տղա	kur'ê min = kur'ê m	իմ տղան
qîz, keç'	աղջիկ	qîza min = qîzam keç'a min = keç'am	իմ աղջիկը
bext	ճակատագիր	bextê min = bextê m	իմ ճակատագիրը
ç'e'v	աչք	ç'e've min = ç'e've m	իմ աչքը

### Հավելված

Քրդերենի կուրմանջի բարբառում գոյականների հետ հաճախ կիրառվում են նախդիրներ ու հետադրություններ, որոնք նաև արտահայտում են հոլովական իմաստ:

- **Li** նախդիրը բառին հաղորդում է հայերենի ներգոյական հոլովի իմաստ: Այս նախդիրը գրվում է հաջորդող բառից առանձին.

<b>li</b> Yêrêvanê	Երևանում
<b>li</b> malê	տանը

- **Da** (որոշ խոսվածքներում՝ **de**) նախդիրը բառին հաղորդում է ներգոյական հոլովի իմաստ: Հետադրությունները, որպես կանոն, գրվել են բառի հետ, բայց վերջին շրջանում նկատվում է նաև առանձին գրելու միտում: Դասագրքում բոլոր հետադրությունները գրվում են առանձին.

Yêrêvanê <b>da</b>	Երևանում
malê <b>da</b>	տանը

- **Ji** նախդիրը արտահայտում է բացառական հոլովի իմաստ.

<b>ji</b> Aram	Արամից
<b>Ji</b> Aparanê	Ապարանից

- **R'a** (որոշ խոսվածքներում՝ **r'e**) հետադրությունը հանդես է գալիս որպես ուղիղ խնդրի ցուցիչ: **R'a** հետադրությունը արտասանվում է նախորդ բառի հետ՝ որպես մեկ բառ.



Min ji te r'a got. Min te r'e got.	Ես քեզ ասացի:
Min ji te r'a av anî. Min te r'e av anî.	Ես քեզ համար ջուր բերեցի:

1) Որոշ խոսվածքներում *re* հետադրությունը հանդես է գալիս *ji... re...* կառույցով, որում *ji* նախդիրը բառին չի հաղորդում բացառական հոլովի նշանակություն.

Min <b>ji</b> te <b>r'e</b> got.	Ես քեզ ասացի:
Min <b>ji</b> te <b>r'e</b> av anî.	Ես քեզ համար ջուր բերեցի:

2) Եզակի թվի առաջին դեմքի անձնական դերանվան հետ կիրառվելիս *r'a* հետադրությունը կարող է որոշ հնչյունափոխությունների ենթարկվել.

min r'a = mir'a	ինձ, ինձ համար
-----------------	----------------

- *Va* (որոշ խոսվածքներում՝ *ve*) հետադրությունն արտահայտում է հայերենի բացառական, երբեմն՝ գործիական հոլովի իմաստ.

pencerê <b>va</b>	լուսամուտից
jorê <b>va</b>	վերևից
sola <b>va</b>	կոշիկներով

- *Ev* (այս), *ew* (այն) ցուցական դերանունները թեք հոլովով արական գոյականների հետ կիրառվելիս դառնում են *vî*, *wî*. այս պարագայում թեք հոլովով արական սեռի գոյականները ստանում են *-î* վերջավորություն: Եթե *ev* (այս), *ew* (այն) ցուցական դերանունները կիրառվում են թեք հոլովով իգական սեռի գոյականների հետ, ապա դառնում են *vê*, *wê*. այս պարագայում թեք հոլովով իգական սեռի գոյականները ստանում են *-ê* վերջավորություն: *evan* (սրանք), *ewan* (դրանք) ցուցական դերանունները թեք հոլովով հոգնակի գոյականների հետ գործածվելիս դառնում են *van*, *wan*. այս պարագայում թեք հոլովով հոգնակի գոյականները ստանում են *-a* կամ *-an* հոգնակերտ.

ev mêr	այս տղամարդը	vî mêrî	այս տղամարդու, այս տղամարդուն
ev jin	այս կինը	vê jinê	այս կնոջ, այս կնոջը
evan jinan	այս կանայք	van jinan	այս կանանց
ewan jinan	այդ կանայք	wan jinan	այդ կանանց
evan mêran	այս տղամարդիկ	van mêran	այս տղամարդկանց

## Օրինակներ՝

Navê vî mêrî Cano ye.	Այս տղամարդու անունը Ջանն է:
Navê vê jinê Gulê ye.	Այս կնոջ անուն է Գյուլն է:
Li qunt'ara ç'îyê sê-çar gund hebûn. Ew gund mezin û r'ind bûn. Ew gundên k'urdan bûn. Nifûsa wan gundan gelek bû. Gundî mirovên baş û mêvanp'erwer bûn. P'ir'anîya gundîyan rênçber bû, hinek meriv jî şivan bûn. Bax û zevîyên wan hebûn. Pez û dewarên gundîyan jî hebûn. Zar'okên wan aqil û jîr bûn, keç' û xortên wan xweşik bûn

Ser ç'îyê zinarên bilind hebûn. Li ort'a zinaran şikevtek hebû. Ew şikevt mezin bû. Derîyê şikevtê mezin û fireh bû. Hundur' şikevtê te'rî bû, tişt xuya nîbû.

Şagirt mehek li wan gundan man, gelek ger'yan û şa bûn. Şagirt ji wan deran yadgarên bedew t'evî xwe anîn.

Նոր բառեր և արտահայտություններ

Տagirt շն.	Աշակերտները գնացին:
xweş	համեղ, լավ
kulîlk	ծաղիկ
zelal	զուլալ
qunt'ar	ստորոտ
gur	գալլ
r'ûvî	աղվես
hêlûn, hêlîn	թռչնի բույն
k'êlek	կողբ
nifûs	բնակչություն
rênçber	հողագործ, երկրագործ, աշխատավոր
mêvanp'erwer	հյուրասեր
p'ir'anî	մեծամասնություն
jîr	ուշիմ, ճարպիկ
dewar	խոշոր եղջերավոր անասուն
hinek	մի քիչ, որոշ
cotk'ar	հողագործ
zinar	ժայռ
şikevt	քարայր
te'rî	մութ, խավար
tişt	բան
Ew ger'yan.	Նրանք զբոսնեցին:
Ew şa bûn.	Նրանք ուրախացան:
Ew man	Նրանք մնացին:
yadgar	հիշողություն
man (mayîn)	մնալ

t'evî xwe	իրենց հետ
Wan anî.	Նրանք բերեցին:

**Վարժություն 3.** Թարգմանել հետևյալ նախադասությունները:

1. Այդտեղ եղանակը լավ էր:
2. Այդ գյուղի տղաներն ու աղջիկները գեղեցիկ են:
3. Այնտեղ ամեն ինչ կա:
4. Մայրիկը գնաց շուկա: Նա այնտեղից միրգ բերեց:
5. Թռչունները բներ ունեին:
6. Այդ մարդիկ բարի ու հյուրասեր էին:
7. Սարի ստորոտին գյուղեր կային:
8. Գյուղացիները ոչխարներ ու խոշոր եղջերավոր անասուններ ունեին:
9. Ժայռերի մեջտեղում մի քարայր կար:
10. Ծառերի վրա երևում էին թռչունների բները:
11. Երեխաները շատ ուրախացան:
12. Գյուղացիների վրանները սև են:

**Վարժություն 4.** Ընտրել նշված անձնական դերանունների ճիշտ տարբերակը:

1. Xanîyê hûn/we heye?
2. Porê bavê min/ez spî ye.
3. Dê û bavê tu/te hene?
4. Ew/wan ji Amedê ne.
5. Di baxçeyê ew/wî de kulîlk hene.
6. Çend pirtûkên tu/te hene?
7. Xanîyê mamê tu/te mezin e?
8. Pereyên tu/te gelek in?
9. Xûşka ew/wê nan anî.

### **Ժողովրդական ասացվածքներ**

- Kur'ê meriv r'onaya ç'e'vê meriv e.  
 Ax'ayî li k'êfê ye, male bin berfê ye.  
 Kurmancî t'êr e, xew jêra xêr e.  
 Kurmancî birçî ye, xew jêra çî ye?

Նոր բառեր

r'onayî	լուսավորություն, լույս
k'êf	խնջույք
t'êr	կուշտ
jêr'a	նրա համար, նրան
xêr	բարիք, օգուտ

### **Հավելված**

- Քրդերենի կուրմանջի բարբառում *հորեղբորորդի* և *մորեղբորորդի* բառերի համար ընդունվում են հետևյալ տարբերակները.

kur'xalê min = kur'ê xalê min	իմ մորեղբոր որդին
kur'apê min = kur'ê apê min	իմ հորեղբոր որդին
kur'mamê min = kur'ê mamê min	

- **Der** (տեղ) նախդիրն ունի տարբեր կիրառություններ.

vê derê, li vê derê	այստեղ
wê derê, li wê derê	այդտեղ, այնտեղ
ji vê derê, ji vê derê va, ji vê derê ve	այստեղից
ji wê derê, ji wê derê va, ji wê derê ve	այդտեղից, այնտեղից
li van daran, li van dera	այս տեղերում, այս կողմերում
ji van daran, ji van dera	այս տեղերից, այս կողմերից
li wan daran, li wan dera	այդ տեղերում, այդ կողմերում
ji wan daran, ji wan dera	այդ տեղերից, այդ կողմերից

Օրինակներ՝

Hûn li van daran dijîn.	Դուք այս կողմերում եք ապրում:
Bapîrên min ji wan daran bûn.	Իմ պապերն այդ կողմերից են:

- **Hundur'** (մեջ) տեղի մակբայը կարող է ունենալ հետևյալ կիրառությունները.

li hundur', hundur' da, di hundur' de	ներսում
ji hundur', ji hundur' va, ji hundur' ve	ներսից
ketin hundur'	ներս մտնել
çûn hundur'	ներս գնալ

Օրինակներ՝

Av hundur' îskanê ye.	Զուրը գավաթի մեջ է:
Şirbet hundur' qedehê ye.	Շաքարը գավաթի մեջ է:
Top qul bû, av hundur' va r'ijya.	Գնդակը ծակվեց, ջուրը միջից թափվեց:

**Վարժություն 5.** Թարգմանել հետևյալ նախադասությունները:

1. Xanîyê we li k'u ye?
2. Mévanên wan ji Amedê ne.
3. Çend pirtûkên te hene?
4. Birayê min xwendekar e.
5. Xanîyê mamê min duqafî ye.
6. Peryên te li bankê gelek in?
7. Li baxçê wî kulîlk hene.

## Դաս 11

### Տեղի մակբայներ

Մակբայը ցույց է տալիս գործողության տեղ, ժամանակ, ձև, չափ ու քանակ: Ըստ իմաստի ու կիրառության՝ տարբերակվում են *տեղի, ժամանակի, ձևի, չափ ու քանակի* մակբայներ:

**Տեղի մակբայները** ցույց են տալիս գործողության կատարման տեղը: Քրդերենի կուրմանջի բարբառում տեղի մակբայները կարող են գործածվել նախդիրների և հետադրությունների հետ.

vir, vira	այստեղ
wir, wira	այնտեղ
vê derê, vêderê	այստեղ
wê derê, wêderê	այդտեղ
van daran	այս տեղերում, այս կողմերում
wan daran	այդ տեղերում, այն կողմերում
vê derê-wê derê, van daran-wan daran	այստեղ-այնտեղ
vir-wir	այստեղ-այնտեղ
virda, vir da	այս կողմ
wêda, wê da	այն կողմ
virda-wêda	այս կողմ-այն կողմ
vî alî-wî alî	այս կողմ-այն կողմ
xwar, xwarê	ներքև, դեպի ներքև
h'emû cî, h'emû cîya, h'emû cîyan, hercîya, hercîyan	ամեն տեղ, ամենուրեք
herder, herdera	ամենուրեք
heralî	ամեն կողմ
çaralî, çarnikar, çarnikal	չորս կողմը, ամենուրեք
cî-cî, cî-cîya, cî- cîyan	տեղ-տեղ
cem, ba, bal	մոտ
derva	դրսում
hundur'	մեջ, ներս



Օրինակներ՝

Anahît ji vê derê çû.	Անահիտն այստեղից գնաց:
Birê min ji wê derê hat.	Իմ եղբայրն այդտեղից եկավ:
Virda were!	Այս կո՛ղմ արի:
Wêda her'e.	Այն կո՛ղմ գնա:
Tu çir'a wêda diçî?	Դու ինչո՞ւ ես այդ կողմ գնում:
Balafir' hat xwarê.	Օդանավը իջավ ներքև:
Îro ji h'emû cîyan meriv hatin vir.	Այսօր ամեն տեղից մարդիկ եկան այստեղ:
Ez h'emû cîya ger'yam.	Ես ամեն տեղ ման եկա:
Duh cî-cî baran barî.	Երեկ տեղ-տեղ անձրևեց:
Ez cem hevala xwe me.	Ես իմ ընկերուհու հետ եմ:
Ew hat ba birayê xwe.	Նա եկավ իր եղբոր մոտ:

Կան բառեր, որոնք միաժամանակև՝ նախդիր են, և՛ կապ, և՛ տեղի մակբայ<sup>35</sup>: Վերջինները կարող են գործածվել նաև այլ նախդիրների ու հետադրությունների հետ.

ser	վրա
serda, ser da	(ինչ-որ բանի) վրա
serr'a, ser r'a	(ինչ-որ բանի) վրայով
ber	առջև, դեմ
berr'a, ber r'a	(ինչ-որ բանի) առջևով
jor	վերևում
jêr	ներքևում
jorda, jor da	վերևից
bin	տակ
binda, bin da	(ինչ-որ բանի) տակ
binva, bin va, bin r'a, bin r'a	(ինչ-որ բանի) տակով, (ինչ-որ բանի) տակից
pêş	առաջ
pêşda	առաջ, դեպի առաջ
dûrva, dûr va	հեռվից
nêzîkva, nêzîk va	մոտիկից
piş	հետ, հետև
r'ex, taxe	կից, մոտ

<sup>35</sup> Մակբայների մասին տե՛ս **К. Курдоев**, Грамматика курдского языка (курманджи), стр. 271-277:

Օրինակներ՝

P'îşîk r'abû ser masê.	Կատուն բարձրացավ սեղանի վրա:
Aram hilk'îşya ser ç'îyê.	Արամը բարձրացավ սարը:
Stêrk jorda k'et.	Աստղը վերնից ընկավ:
Anna pencere vekir û jor da nihêr'î.	Աննան բացեց պատուհանը և վերնից նայեց:
Pîşîk k'et bin k'ursîyê.	Կատուն մտավ սեղանի տակ:
Aram pêşda hat.	Արամն առաջ եկավ:
E'rebe r'ex min va derbaz bû.	Մեքենան իմ մոտով անցավ:
Wê derê p'ira hebû, ez ser r'a çûm.	Այնտեղ կամուրջ կար. ես վրայով անցա:
Wê derê gul hebûn. Şev baran ser da barî.	Այնտեղ ծաղիկներ կային: Գիշերը վրան անձրև տեղաց:
Li wir dibistan hebû, ez ber r'a çûm.	Այնտեղ դպրոց կար, ես (դրա) առջևով անցա:
Armên dûr va gundê xwe nihêr'î.	Արմենը հեռվից իր գյուղին նայեց:

Ներքոնշյալ մակբայները, որոնք կարող են կիրառվել որպես կապեր, գոյականների կարող են միանալ իզաֆեթով:

fêz	վերև
k'êlek, tenîşt	կողք
ort'	մեջտեղ
navber	միջև
dor	շուրջ
derdor, der û dor	շուրջբոլորը

Օրինակներ՝

Dar fêza çêm e.	Ծառը գետի վերին հատվածում է:
Cînar dora malê r'ûniştin.	Հարևանները նստեցին տան շուրջը:
Der û dora şeber hêşîn e.	Քաղաքի շուրջբոլորը կանաչ է:

Հետևյալ մակբայները գոյականների հետ կիրառվելիս կարող են ստանալ *-î* վերջավորություն:

hember	դեմ, հակառակ
pêşber	դիմաց, դեմառդեմ
nêzîk	մոտ, մոտիկ
dûr	հեռու

Օրինակներ՝

Serbaz hemberî dijmin şer' kir.	Զինվորը թշնամու դեմ կռվեց:
Em dûrî hev in.	Մենք իրարից հեռու ենք:
Hevalê min pêşberî min r'ûnişt.	Ընկերս իմ դիմաց նստեց:

**Dibistan**

Sibe ye. R'ojeke germ û xweş e. Ez diçim dibistanê. Dibistan nêzîkî mala me ye. Xelîl jî tê dibistanê. Ew ji gundekî din tê. Gundê wan da dibistan t'une. Dibistan ji gundê wî dûr e. Her sibe Xelîl tê û her êvar diçe. Bo wî çûn û hatin gelek zehmet e.

Em ji sibê h'eya êvarê dibistanê da hîn dibin. Hînbûn û zanîn çiqas tiştêkî baş e! Merivê nezan nav tarîyê da ye, der û dora xwe nabîne.

Zanîn wek r'onahî ye.

Նոր բառեր և արտահայտություններ

Ez diçim.	Ես գնում եմ:
Ew diçe.	Նա գնում է:
h'eya, h'eta	մինչև
Em hîn dibin.	Մենք սովորում ենք:
nabîne	չի տեսնում
wek	նման, ասես
bo, boy	համար
çiqas	ինչքան
zehmet	դժվար
wek	նման

**Վարժություն 1.** Թարգմանել հետևյալ նախադասությունները:

1. K'êleka gund ç'îya heye. 2. Li k'êleka ç'êm darek heye. 3. E'rebe k'êleka malê ye. 4. Fêza ç'êm gund heye. 5. Du bira r'ex hev r'ûniştin. 6. Vardan vir da h at. 7. K'erem, vir da were! 8. Min dûr va gund nihêr'î. 9. Tu ji vir neçe! 10. Hespera R'izgo k'uda çû? Hespera R'izgo, wêda çû. 11. Ermenî herdera dijîn. 12. Ez duhî êvarê gihîştim vir. 13. Ez pênc salan li wir xebitîm. 14. Avê kevir virda-wêda kir. 15. Aram belgên darê virda-wêda avît. 16. Leşkerê dijmin hemberî wan bû. 17. Ew pêşberî hev sekinîn.

**Ժողովրդական ասացվածքներ**

Ort'a qencî û xirabîyê da buhustek e.

Ort'a gotinê û kirinê da ç'îya hene.

Orta min û e'zmana da buhustek e.  
 Ort'ê da r'ûdinê, ji qerexa dixwe.

Նոր բառեր և արտահայտություններ

Wî avît.	Նա նետեց:
qencî	լավություն
xirabî	վատություն
gotin	ասել
kirin	անել
qerex, qerax	ծայր, եզր
buhust, bihust	թիզ (չափի միավոր՝ բացված ձեռքի բութ և ձկույթ մատների ծայրերի միջև տարածությունը)

## Դաս 12

### Իզական սեռի գոյականներ

Իզական սեռի գոյականներ են.

1. իզական սեռի անձանց ու ազգականների նշող բառերը.

qîz, keç', keç'ik	աղջիկ, դուստր
dot	դուստր
dê, dayîk	մայր
xûşk, xwîşk, xayîng	քույր
dodmam, dotmam	զարմուհի, հորեղբոր աղջիկ
qîzap	հորեղբոր աղջիկ
qîzxal	քեռու աղջիկ
pîrik, dapîr	տատ
met'	հորաքույր
xatî	մորաքույր
amojn, jinap, jinmam	հորեղբոր կին
xalojn, jinxal	քեռակին
xasî, xwesî	սկեսուր, զոքանչ
jin, pîrek	կին
destgirtî	հարսնացու, նշանած աղջիկ
bûk	հարս
balt'ûz	տալ, քենի
k'ulfet	կին, տիկին
kevanî	տանտիրուհի
bermalî	տնային տնտեսուհի
berbûk	հարսանիքի ժամանակ հարսին ուղեկցող կին <sup>36</sup>
berdêlî	փեսայի քույրը, որն ամուսնանում է հարսի եղբոր հետ

2. կանանց անունները, օրինակ՝ P'erîxan, K'ubar, Xezal, Gulnaz, P'or'sor, Dîlber, Almast, Gulçîn, Gulîzer և այլն:

3. էգ կենդանանունները.

ç'êlek, mang	կով
--------------	-----

<sup>36</sup> Ավանդաբար *berbûk*-ը նշանակել է ամուսնացած կին, որը ուղեկցել է նորահարսին հարսանիքի ժամանակ:

nogin	երինջ
mî, mîh	մաքի
kavir'	գառ
mirîşk	հալ
var'ik	վառեկ
dêl, dêlik	էգ շուն

4. մի շարք կենդանանուններ, որոնք իգական սեռի գոյական են՝ անկախ կենդանու կենսաբանական սեռից.

bizin	այծ
mehîn <sup>37</sup>	ձի

5. մարմնի որոշ մասերի ու օրգանների անվանումներ.

e'nî	ճակատ
cênîk	քունք
bêvil	քիթ
lêv	շրթունք
pidî	լինդ
çen, çene, çengû	ծնոտ, դունչ
qir'ik	կոկորդ
patik	ծոծրակ
pişt	մեջք
namil, navmil	թիկունք, ուս
navteng	գոտկատեղ
navik	պորտ
zend	դաստակ
e'nîşk	արմունկ
t'ilî	մատ
neynok, neynûk	եղունգ
çong, çok	ծունկ
çîp	սրունք
gûzek, gozek	կոճ
panî, penî	կրունկ
gurç'ik	երիկամ
ceger, kezeb	լյարդ
tenişt, k'êlek	կող, կողք

<sup>37</sup> Ներկայում *mehîn* բառը քիչ է կիրառում, և դրա փոխարեն *hesp*-ը գործածվում է որպես ն՝ իգական, և՛ արական գոյական:

6. այն վերացական գոյականները, որոնք կազմվում են *-i*, *-fi*, *-atî*, *-yi*, *-ayî*, *-anî*, *-otî* վերջածանցներով.

biratî	եղբայրություն
hevaltî	ընկերություն
korayî	կուրություն
serk'arî, serk'artî	առաջնորդություն
mêranî	քաջություն
arzanî, erzanî	էժանություն
şîrinayî	քաղցրություն, քաղցրավենիք
dijminayî, dijmintî	թշնամություն
zar'otî	մանկություն

7. գոյականաբար կիրառվող անորոշ դերբայները.

hatina we	ձեր գալը
k'enîna zar'okan	երեխաների ծիծաղելը
Xwendina dersê çetin e.	Դասը կարդալը դժվար է:

8. բայանունները, բայահիմքերից կազմված կրկնավոր բայածանցյալ բառերը, օրինակ՝ qar'in (գոռալ) բայի ներկայի հիմքից՝ qar'eqar' (գոռոգոնոց), qîjîn (բղավել) բայի ներկայի հիմքից՝ qîjeqîj (բղավոց):

9. տարվա եղանակները, շաբաթվա օրանունները նշող բառերը.

payîza derengî	ուշ աշուն
sêşema bihorî, sêşema derbazbûyî	անցած երեքշաբթի
pêşema tê, pêşema bê	եկող հինգշաբթի

10. երկրների, քաղաքների, լեռների, գետերի անունները.

Amêrîkaya Başûr, Amêrika Başûr	Հարավային Ամերիկա
Ermenistana R'oava	Արևմտյան Հայաստան
K'urdistana Bakûr	Հյուսիսային Քրդստան
K'urdistana Başûr	Հարավային Քրդստան
Ermenistana qedîm	հինավուրց Հայաստան

11. վերջին տասնամյակներում եվրոպական լեզուներից, ռուսերենից փոխառված մի շարք բառեր.

maşîne	մեքենա
bank	բանկ
bênzîn	բենզին

atom	ատոմ
bîlêt	տոմս
ajans	գործակալություն
traktor	տրակտոր

12. տրանսպորտային միջոցների անվանումները .

e'rebe, t'irimbêl	ավտոմեքենա
teqsî, t'exsî	տաքսի
motor, motorçerxe	մոտոցիկլ
duçerxe, bisiklêt, bisiklêt	հեծանիվ
otobûs	ավտոբուս
kamyon, qemyon	բեռնատար ավտոմեքենա
trên, şemendefêr	գնացք
teyare, balafir', ayropilan	ինքնաթիռ
babir'ok	ուղղաթիռ
keştî, gemî	նավ

13. իգական սեռի գոյական է նաև *zar'ok* (երեխա) բառը:

Min duh zar'oka xwe dît. | Երեկ ես երեխայիս տեսա:

14. ուղիղ հոլովով և որպես ենթակա կիրառվող գոյականի սեռը կարող է արտահայտվել վերջավորությամբ: Իգական սեռի գոյականների համար կիրառվում է *-e* վերջավորություն. այն, սակայն, սակավ է գործածվում:

Aanahîte mamoste ye.	Անահիտն ուսուցիչ է:
Werdeke baş e.	Վարդակը բարի է:
Keç'ike aqil e.	Աղջիկը խելացի է:
Eze feqîr im.	Ես խեղճ եմ:

### Syûnik

Syûnik li başûrê komara Ermenistanê ye. Merk'eza Syûnikê bajarê Kapan e.

Di Syûnikê de zivistan dirêj nîne, lê payîzê şilî ye, û gelek baran dibare.

Li Syûnikê r'ezên tirîya gelek in, û vê derê şeravên cûr'e-cûr'e hene.

Dêra Tat'êv di Syûnikê de ye û p'ir' binavûdeng e. Ew dêr nav ç'îyan, ser zinarekî mezin e. Dêra Tat'êv nêzîkî sînora Ermenistanê û Îranê ye.



Նոր բառեր և արտահայտություններ

Baran dibare.	Անձրևում է:
tirî	խաղող
cûr'e-cûr'e	տեսակ-տեսակ
binavûdeng	հայտնի
zinar	ժայռ
sînor	սահման

**P'îşîka Wanê**

P'îşîka Wanê sîmvola bajarê Wanê ye. Pirç'a p'îşîkê du r'eng e. P'ir'anîya p'îşîkan spî ne, ç'e'vek şîn e, ç'e'vê din zer yan sût e. Wextê ku meriv diçe Wanê, li ser r'ê h'eykelê P'îşîka Wanê heye.

P'îşîkên Wanê avê p'ir' h'ez dikin, di avê de dilîzin û melevanîyê dikin. Çend cûr'e ç'e'vên P'îşîka Wanê hene: hinek p'îşîk her du ç'e'vên wan şîn in, hinek pişîk ç'e'vek r'engê zer e û ç'e'vek r'engê sût e.

Dema ku piş'îk nû ji dayîk bûyî û ç'ûk in, h'eta bîst-sî r'ojan r'engê ç'evên wan zelal nîne, lê piştî çil r'ojan r'engê ç'evan zelal dibe.

Նոր բառեր և արտահայտություններ

pirç'	մազ
wext	ժամանակ
wextê ku	երբ
h'eykel	արձան
Ew avê h'ez dikin.	Նրանք ջուր են սիրում:
Ew dilîzin.	Նրանք խաղում են:
melevanî, avjenî, sovekarî, sobarî	լոռ
Ew melevanîyê dikin.	Նրանք լոռում են:
cûr'e	տեսակ
hinek	մի քիչ, որոշ
h'eta	ժամանակ
nû ji dayîk bûyî	նոր ծնված
Av zelal dibe.	Ջուրը զուլավում է:

**Վարժություն 1.** Թարգմանել հետևյալ նախադասությունները:

1. Իմ դուստրը ուսանող է: 2. Իմ մայրը 60 տարեկան է: 3. Ձեր տատիկը հիվանդ է: 4. Ինչո՞ւ է ձեր տատիկը հիվանդ: 5. Նրա կինը տնային տնտեսուհի է: 6. Իմ քույրիկը աշակերտուհի է: 7. Իմ մորաքույրը Արևմտյան Հայաստանում է: 8. Քո հարսը գնաց բակ: 9. Իմ քեռակինը ծեր

է: 10. Այս փողոցը լայն է: 11. Մեր մեքենան նոր է: 12. Ձեր տունը նեղ է: 13. Մեր նավը ծովում է: 14. Նրանց տաքսին բախում է:

**Վարժություն 2.** Թարգմանել հետևյալ նախադասությունները:

1. Em ji hatina wan gelek k'êfxweş bûm.
2. Ez ji çûyîna wî x'emgîn bûm.
3. Ez bi xwendina te serbilind im.
4. Xwendina k'it'êbê hêsa nîne.
5. Ez pê xwendina te şa bûm.
6. Ez ji şikestina qedehê x'emgîn bûm.

Նոր բառեր

x'emgîn	սխուր, տրտում
hêsa	հեշտ
tewle, tewîle	ախոռ
behr	ծով

**Երկխոսություն**

Filît: R'ojbaş, navê te bi xêr?  
 R'aber: R'ojbaş, navê min R'aber e. Lê navê te çî ye?  
 Filît: Navê min Filît e.  
 R'aber: Tu k'urd î?  
 Filît: Erê, ez k'urd im.  
 R'aber: Tu k'urdî dizanî?  
 Filît: Erê, ez k'urdî dizanim.  
 R'aber: Tu xelqê k'u derê yî?  
 Filît: Ez xelqê K'urdistana Başûr im!  
 R'aber: Tu çî dikî?  
 Filît: Ez r'ojnameger im.  
 R'aber: Ez jî şagirt im.  
 Filît: Te îro ders xwand?  
 R'aber: Erê, min îro ders xwend.  
 Filît: Gelo ders hêsa bû?  
 R'aber: Na, ders hêsa nîbû, dijwar bû.  
 Filît: Bibexşîne, çir'a zehmet bû?  
 R'aber: Ew zehmet bû, çimkî dersa îro gelek dirêj bû.  
 Filît: R'aber, ew keç' k'î ye?  
 R'aber: K'îjan keç'?  
 Filît: Keç'a ku p'or'ên wê dirêj in.  
 R'aber: Ew dosta min e. Em t'evî hev dixwînin.  
 Filît: Ew keç'ik k'urd e?  
 R'aber: Belê, ewa k'urd e, navê wê R'ojda ye.  
 Filît: Bibexşîne, îşê min heye, ez gerek her'im. Xatirê te!  
 R'aber: Oxir be!

Նոր բառեր և արտահայտություններ

Tu bi k'urdî dizanî? Tu k'urdî dizanî?	Դու քրդերեն գիտե՞ս:
Ez bi k'urdî dizanim. Ez k'urdî dizanim	Ես քրդերեն գիտեմ:
xelq	ժողովուրդ
Tu çî dikî?	Դու ի՞նչ ես անում:
r'ojnameger	լրագրող
Te xwand.	Դու կարդացիր:
hêsa	հեշտ
dijwar, zehmet	դժվար
çimkî, madem	քանի որ, քանզի
ku	որ
p'or'	մազ
t'evî hev	իրար հետ, միասին
Em dixwînin.	Մենք կարդում ենք (Մենք սովորում ենք):
Bibexşîne! (biborîne!)	Ների՛ր:
îş, şuxul	գործ
gerek, divê	պետք է
Ez her'im (ez biçim).	Ես գնամ:
Gerek her'im.	Պետք է գնամ:
xêr	բարիք

**Վարժություն 3.** Թարգմանել հետևյալ նախադասությունները:

1. Հայրիկը եկավ: 2. Նրա ծնտը մեծ է: 3. Ձեր գալն ինձ ուրախացրեց:
4. Մանկությունը քաղցր է: 5. Հայերի և քրդերի բարեկամությունը պատմական է: 6. Նրանց թշնամությունը պատմական է: 7. Հացը էժան չէ:
8. Գետի քջքոցը հաճելի է: 9. Նրա ճակատը լայն է: 10. Նա գնացքով եկավ:
11. Այդ տղան աղջկա հետ գնաց: 12. Հայրիկը նավով եկավ: 13. Նրա քույրերը երիտասարդ են: 14. Նրա կինը ծեր է: 15. Նրա ամուսինը ծեր է:
16. Նրա քույրը մեծահասակ է: 17. Նրա եղբայրը ծեր է: 18. Այդ մարդը ծեր է: 19. Այդ վարորդը երիտասարդ է: 20. Նրա ավտոբուսը հին է: 21. Նրա նավը սպիտակ է:

**Ժողովրդական ասացվածքներ**

Bejne zer e, dilî je'r e.

Lîstina pişîkê mirina mişk e.

Agir gula zivistanê ye.  
P'ir' gotin ceger sotin e.

Նոր բառեր

je'r	թույն
lîstin	խաղալ
mişk	մուկ
r'onayî, r'onahî	լույս
sotin	այրել

**Վարժություն 4.** Թարգմանել հետևյալ նախադասությունները:

1. Մեքենան տան հետևում է: 2. Կատուն մեքենայի վրա է: 3. Այդ նավը հիմա ջրի տակ է: 4. Երեկ այդ գնդակը սեղանի տակ էր: 5. Գետի մեջ քարեր կան: 6. Ջրի մեջ քարեր կային: 7. Կատուն սեղանի տակ է: 8. Այդ քաղաքը սարի հետևում է: 9. Մեքենան մեր բակից գնաց:

## Դաս 13

### Ընդհանուր սեռի գոյականներ

Քրդերենի կուրմանջի բարբառում առանձնացվում են նաև ընդհանուր սեռի գոյականներ: Ընդհանուր սեռը իգականից ու արականից առանձին ինքնուրույն կարգ չէ: Ընդհանուր սեռի գոյականը կարող է լինել և՛ իգական, և՛ արական սեռի: Ընդհանուր սեռի են.

1. անձ ցույց տվող մի շարք գոյականները.

nevî	թոռ
xarza, xarzî	քրոջ որդի, քրոջ աղջիկ
biraza, birazî	եղբորորդի, եղբոր աղջիկ
heval, dost, hogir	ընկեր
dergîstî	փեսացու, նշանած աղջիկ
cînar, cîran	հարևան
dijmin, neyar	թշնամի, ոսոխ
yar	սիրեցյալ
serk'ar, serok	ղեկավար
xwendikar	ուսանող
xwendevan	ընթերցող
xebatk'ar	աշխատող
xizmetk'ar	ծառայող
xulam	ծառա
berdestî	օգնական, ծառայող
sêwî, êt'îm	որբ

#### Օրինակներ՝

nevîyê min	իմ թոռը
nevîya min	իմ թոռնուհին
hevalê min	իմ ընկերը
hevala min	իմ ընկերուհին
xarizîyê min	իմ քրոջ որդին
xarizîya min	իմ քրոջ աղջիկը

2. այն մասնագիտությունները, զբաղմունք նշող բառերը, որոնցով ավանդաբար զբաղվել ու զբաղվում են և՛ տղամարդիկ, և՛ կանայք.

mamoste, dersdar	ուսուցիչ
bijîşk, nûjdar	բժիշկ

h'ek'îm	բժիշկ, հեքիմ
t'ertzî	դերձակ
şayîr, helbestvan	բանաստեղծ
nivîsk'ar	գրող
r'ojnameger	լրագրող

Օրինակներ`

dersdarê min	իմ ուսուցիչը
dersdara min	իմ ուսուցչուհին
bijîşkê gund	գյուղի բժիշկը
bijîşka gund	գյուղի բժշկուհին
nivîsk'arê mezin	մեծ գրող
nivîsk'ara mezin	մեծ գրող

3. գոյականաբար գործածվող մի շարք խոսքի մասեր, մասնավորապես` ածականներ.

bedew	գեղեցիկ
delal	սիրելի
e'zîz	սիրելի
yar	սիրեցյալ
dilketî	սիրեցյալ

Օրինակներ`

delala min	իմ սիրելի (երբ խոսվում է իզական սեռի անձի մասին)
delalê min	իմ սիրելի (երբ խոսվում է արական սեռի անձի մասին)

4. որոշ կենդանանուններ, որոնք ն` արական, ն` իզական սեռի գոյական են.

kar	ուլ
k'er	ավանակ

Օրինակ`

k'era cînarê me	մեր հարևանի ավանակը
k'erê cînarê me	

Ժամանակակից քրդերի լեզվում իզական սեռի *mehîn* (զամբիկ) բառը քիչ է գործածվում: Այդ է պատճառը, որ արական *hesp* բառը սկսել է կիրառվել որպես ընդհանուր սեռի գոյական.

Hespa wan hat.	Նրանց ձին եկավ:
Hespê me nehat.	Մեր ձին չեկավ:

Ճիշտ կլիներ ասել.

Mehîna wan hat.	Նրանց ձին եկավ:
Hespê me nehat.	Մեր ձին չեկավ:

### Mêvan

Îro mala R'onî da t'ijî mêvan in. Ew mêvan ji K'urdistana Başûr in. Ew h'emû xwendekarên k'urd in. Navê xwedîyê malê R'onî ye, navê kevanîya malê Asê ye.

Gava mêvan hatin, malxwê got:

– Xwîşkno, birano, hûn bi xêr hatin. Ser ç'e'va.

Paşê ji wan r'e got:

– K'erem bikin, r'ûnên.

Mêvanan got:

– Gelek spas, apo!

Mêvanek ji kevanîyê r'e got:

– Met'ê, avê bide!

Asê got:

– K'eremke! Vê derê xweşav jî heye.

– Zor spas, met'ê.

R'onî, Asê û her du keç'ên wan gelek şa ne. Ew t'ev li ot'axa mêvanan ser sifrê r'ûniştine.

Asê bona mêvanan çay, qewhe hazir kir. Paşê her du keç' gûz, k'ışmîş û şîrinayî anîn, danîn ber mêvanan. Asê rîçal û hingiv jî anî.

Xwendekarên k'urd t'evî R'onî û Asê suhbet kirin, piştî suhbetê çûn.

Xwedîyê malê û kevanî pir k'êfxweş in.

Նոր բառեր և արտահայտություններ

xwedî	տեր
Hûn bi xêr hatin.	Դուք բարով եկաք:
K'erem bikin!	Համեցե՛ք:
K'erem bike!	Համեցի՛ր:
R'ûnên!	Նստեցե՛ք:
Avê bide!	Ջո՛ւր տուր:
xweşav, xoşav	հյուր, օշարակ
şa	ուրախ

t'ev	միասին
sifre	սփռոց, սեղան
Ew rûniştine.	Նրանք նստած են:
Ew ser sifrê rûniştine.	Նրանք նստած են սեղանի շուրջը:
Wê hazir kir.	Նա պատրաստեց:
k'îşmîş	չամիչ
gûz	ընկույզ
rîçal	ջեմ
hingiv	մեղր
suhbet kirin	զրուցել

### Li dibistanê

Şagirt hat dibistanê, derîyê dersxanê vekir û got:

– R'ojbaş!

Mamoste got:

– Tu dereng mayî!

Şagirt got: “Erê, bibexşîne, ez dereng mam”.

Mamoste pirsî:

– Tu çir'a dereng mayî?

Şagirt got:

– Ji ber ku otobûs xirab bû.

Mamoste got:

– Tişt nabe! K'eremke, r'ûnê!

Şagirt got:

– Spas dikim, mamoste!

Mamoste got:

– K'it'êbê veke û bixwîne.

Şagirt ders xwand.

Mamoste r'azî ma û got:

– Barîk'ela.

Նոր բառեր և արտահայտություններ

Wî vekir.	Նա բացեց:
dereng	ուշ
Tu dereng mayî.	Դու ուշացար (բռց. Դու ուշ մնացիր):
Bibexşîne!	Ների՛ր:
Ez dereng mam.	Ես ուշացա:



ji ber ku	քանի որ
xerab bû, xirab bû	փչացավ
r'ûnê	նստի՛ր
veke	բացի՛ր
Kitêbê veke!	Գիրքը բացի՛ր:
Bixwîne! (Bixûne!)	Կարդա՛ :
r'azî	գոհ
Ew r'azî ma.	Նա գոհ մնաց:
Barîk'ela!	Կեցցե՛ս:

**Վարժություն 1.** Թարգմանել հետևյալ նախադասություններն ու բառակապակցությունները:

1. Վիրավոր զինվոր:
2. Ծեր ջրաղացպան:
3. Լավ կոշկակար:
4. Երիտասարդ գրող:
5. Երիտասարդ սրնգահար:
6. Ծեր երաժիշտ:
7. Արամն իմ ընկերն է:
8. Աստղիկն իմ ընկերուհին է:
9. Այդ կոշկակարը մեր հարևանն է:
10. Այն երաժիշտը իմ եղբայրն է:
11. Իմ ընկերը զինագործ է:
12. Իմ պապիկն այգեպան է:
13. Իմ հեծանիվը փչացավ:
14. Ուսուցիչն ասաց. «Դու ուշացար»:

Նոր բառեր

սրնգահար	bilûrvan
երաժիշտ	sazbend
երգիչ	dengbêj
զինագործ	sîlihsaz

### Հավելված

Նախադասության մեջ կոչականն այն բառն է, որին դիմում է խոսողը կամ որին ուղղված է խոսքը:

1. Արական սեռի գոյականը ուր պե ս կոչական գործածվելիս ստանում է *-o* վերջավորություն.

bira	եղբայր	birao	եղբա՛յր (ն՛վ եղբայր)
bav	հայր	bavo	հա՛յր (ն՛վ հայր)

2. Եթե կոչականն արտահայտվում է իգական սեռի գոյականով, ապա ստանում է *-ê* վերջավորություն.

xûşk	քույր	xûşkê	քույրի՛կ (ն՛վ քույր)
keç'	աղջիկ	keç'ê	աղջի՛կ (ն՛վ աղջիկ)
met	հորաքույր	metê	հորաքու՛յր (ն՛վ հորաքույր)
dê, dayîk	մայր	dayê	մայրի՛կ (ն՛վ մայր)

Օրինակներ՝

Xûskê, çawan î?	Քույրի՛կ, ինչպե՞ս էս:
Keç'ê, tu ku derê yî?	Աղջի՛կ, դու որտե՞ղ էս:

3. Եթե գոյականը հոգնակի թվով է, ապա, անկախ սեռից, այն ստանում է **-no** վերջավորություն.

xûşk	քույր	xûşkno	քույրե՛ր, ո՛վ վ քույրեր
bira	եղբայր	birano	եղբայրնե՛ր, ո՛վ վ եղբայրներ

Օրինակներ՝

K'urdno, r'abin!	Քրդե՛ր, վե՛ր կացեք:
Ermenîno, t'arîxa xwe bîr nekin.	Հայե՛ր, ձեր պատմությունը մի՛ մոռացեք:

4. Որոշիչ-որոշյալ, հատկացուցիչ-հատկացյալ կապակցության մեջ կոչականը որևէ ցուցիչ չի ստանում.

xûška min	իմ քույր	Xûška min, tu çawan î?	Քու՛յր իմ, դու ինչպե՞ս էս:
keç'a baş	լավ աղջիկ	Keç'a baş, tu vir î?	Լա՛վ աղջիկ, դու այստե՞ղ էս:

5. Կոչականը վերջավորություն չի ստանում, եթե իզաֆեթային կառույցում է.

Birayê Aram	Արա՛մ եղբայր
Kekê Aram	Արա՛մ եղբայր
Xûška Hasmiîk	Հասմի՛կ քույր

**Վարժություն 2.** Թարգմանել հետևյալ բառերը:

Kaliko, pîrikê, lawo, keç'ê, kur'ò, h'irçê, karikê, Zîlanê, mêno, zilamno, xûşkno.

**Վարժություն 3.** Թարգմանել հետևյալ նախադասությունները:

1. Tu baş î, Silo? 2. Belê, ez baş im, R'izgo. Lê birayê te çawa ye? 3. Birayê min îdfî kal e, lo. 4. Lê-lê keç'ê, tu çiqas nazik î. 5. Cînarê, tu çiqas dilovan î. 6. Hevalo, tu gelek merd î. 8. Qîz û bûkno, hûn mîna gula ne. 9. Hevalno, ez we p'ir' h'ez dikim.

## Konê H'esen

Memo got:

– Lolo, eva konê H'esen e?

Şamil go:

– Na, lo, ev ne konê H'esen e.

Miraz go:

– Memo, konê H'esen ne vir e. Konê Hesen bal konê min e.

## Hespa K'amil

R'okî K'amil k'erê sîyar bû. K'ubara xûşk got.

– K'amilo, navê k'era te çî ye?

K'amil got:

– Xûşkê, ke'ra çî? Tu nabînî, eva hesp e.

R'ûvî

R'ûvî r'ûvî, r'indiko,

Serê dêlê k'inciko,

Rûvî çîqa fêlbaz e,

Tê mirîşka didize,

Te'jî çawa pey lez e.

Նոր բառեր և արտահայտություններ

kon	վրան
bal	մոտ
Ew sîyar bû.	Նա հեծնեց:
Tu nabînî.	Դու չես տեսնում:
fêlbaz	խորամանկ
Ew didize.	Նա գողանում է:
te'jî	որսորդական շուն, բարակ
lez	շտապ

**Վարժություն 4.** Թարգմանել հետևյալ նախադասությունները:

1. Եղբա՛յր, դու զինվո՞ր ր ես: 2. Քույրի՛ կ, քո անունն ի՞նչ է: 3. Սիրելի՛ս, դու որտե՞ղ ես: 4. Սիրելի՛ հարևան, դու այստե՞ղ ես: 5. Որդյա՛կ իմ, դու տա՞նն ես: 6. Տատի՛կ, ինչպե՞ս ես: 7. Ո՛վ զինվոր, դու վիրավո՞ր ր ես: 8. Եղբա՛ր, դու որտեղի՞ց ես: 9. Աղջի՛կս, դու որտե՞ղ ես: 10. Քույրի՛կ, դու բժշկուհի՞ ես: 11. Բարի՛ օր, քույրե՛ր և եղբայրնե՛ր:



Նոր բառեր և արտահայտություններ

wext	ժամանակ
Nemire!	Մի՛ մահացիր:
pêxas	բոկոտն
serqot	առանց գլխարկի, գլխաբաց
p'êxas	բոբիկ, բոկոտն
gar'an	նախիր
t'imaxkar	ազահ, ժլատ
gunehkar	մեղավոր

## Դաս 14

### Գոյականի որոշյալ և անորոշ առում

Ինչպես բոլոր լեզուներում, այդպես էլ քրդերենի կուրմանջի բարբառն ունի գոյականի որոշյալ և անորոշ առում:

1. Գոյականի որոշյալ առումը նշում է նույն սեռի առարկաներից մեկը, որն արդեն ծանոթ է խոսողին կամ խոսակցին: Որոշյալ առումը քերականական հատուկ ցուցիչ չունի.

Mamoste hat dibistanê.	Ուսուցիչը եկավ դպրոց:
Zar'ok li wir in.	Երեխաներն այնտեղ են:
Gul sor in.	Ծաղիկները կարմիր են:

Քրդերենի կուրմանջի բարբառում չկա որոշիչ հոդ, ուստի ցուցական դերանունները, հանդես գալով գոյականի հետ, կարող են որոշակիացնել, մասնավորեցնել առարկան, այլ ձևակերպմամբ՝ կատարել որոշիչ հոդի դերը:

Օրինակներ՝

Ew mamoste hat dibistanê.	Այդ ուսուցիչը եկավ դպրոց:
Ew zar'ok li wir in.	Այդ երեխաներն այդտեղ են:
Ew gul sor in.	Այդ ծաղիկները կարմիր են:

2. Անորոշ առմամբ գոյականները ցույց են տալիս խոսողին, խոսակցին անծանոթ առարկա կամ առարկա ընդհանրապես: Գոյականի անորոշ առումը քրդերենի կուրմանջի բարբառում արտահայտվում է **-ek** վերջավորությամբ (**yek** քանակական թվականից): Հարկ է արձանագրել, որ այն կիրառվում է նաև առարկայի եզակի լինելը ցույց տալու համար.

jinek	մի կին
qîzek, keç'ek	մի աղջիկ
mêrek	մի տղամարդ

Օրինակ՝

Sêvek ji darê ket.	Մի խնձոր ընկավ ծառից:
--------------------	-----------------------

ա) Քրդերենի կուրմանջի բարբառում գոյականի մեկ հատը կամ եզակի լինելը նշելու համար հազվադեպ են կիրառում **yek** քանակական թվականը (օրինակ՝ **yek jin**, **yek mêr**):

բ) Եթե գոյականը վերջանում է ձայնավորով, ապա **e**-ն սղվում է, և մնում է **-k**-ն.

merík	մի մարդ
sek	մի շուն
şek	մի սանր
xanîk	մի տուն
k'ursîk	մի աթոռ
masek	մի սեղան
kîlok	մի կիլոգրամ
mamostek	մի ուսուցիչ
gundîk	մի գյուղացի
ermenîk	մի հայ
h'eftêk	մի շաբաթ
dersxanek	մի դասասենյակ

Օրինակ՝

Mamostek li vir e.	Մի ուսուցիչ այստեղ է:
--------------------	-----------------------

գ) Որոշ խոսվածքներում ձայնավորով վերջացող գոյականին կցվելու ժամանակ **-ek** վերջավորության և գոյականի միջև կարող է ավելանալ *y* կիսաձայնը.

xanîyek	մի տուն
k'ursîyek	մի աթոռ
maseyek	մի սեղան
kîloyek	մի կիլոգրամ
mamosteyek	մի ուսուցիչ
axayek	մի պարոն, մի աղա
gundîyek	մի գյուղացի
Ermenîyek	մի հայ
Heftêyek	մի շաբաթ
Dersxaneyek	մի դասասենյակ

Օրինակ՝

Mamosteyek li vir e.	Մի ուսուցիչ այստեղ է:
----------------------	-----------------------

դ) Շատ հաճախ խոսքում մի շարք բառերի անորոշ ամսան **-ek** վերջնամասնիկի **k**-ն սղվում է.

cot	գույգ
cotek (cote)	մի գույգ

Օրինակներ՝

Te cote <b>k</b> sol anî.	Te cote sol anî.	Դու մի գույգ կոշիկ բերեցիր:
Aram bot'le <b>k</b> şerav k'irî.	Aram bot'le şerav k'ir'î.	Արամը մի շիշ գինի գնեց:
Aram bit'ulge <b>k</b> şerav k'irî.	Aram bit'ulge şerav k'ir'î.	Արամը մի շիշ գինի գնեց:

3. Գոյականը անորոշ առմամբ կարող է կիրառվել որպես որոշիչ և հատկացուցիչ: Այդ պարագայում.

ա) արական սեռի գոյականը ստանում է *-î* վերջավորություն.

Grîgor kur'ekî baş e.	Գրիգորը լավ տղա է:
Hevalekî min heye, ew k'urd e.	Ես մի ընկեր ունեմ, նա քուրդ է:
Aram kur'ekî jêhatî ye.	Արամը տաղանդավոր տղա է:

բ) իգական սեռի գոյականը ստանում է *-e* վերջավորություն.

Anî keç'eke bilind e.	Անին բարձրահասակ աղջիկ է:
Anî qîzeke çapik e.	Անին ճարպիկ աղջիկ է:
Hevaleke min heye, ew k'urd e.	Ես մի ընկերուհի ունեմ, նա քուրդ է:

4. Հոգնակի գոյականները նույնպես կարող են գործածվել անորոշ առումով: Այդ դեպքում գոյականից առաջ դրվում է *hine* կամ *hinek* (բոց. *մի քիչ, որոշ, ինչ-որ*) անորոշ դերանունը.

hine şagirt, hinek şagirt	որոշ աշակերտներ, ինչ-որ աշակերտներ
hine merî, hinek merî	որոշ մարդիկ, ինչ-որ մարդիկ
Hine meriv vir in.	Որոշ մարդիկ այստեղ են:

*Hinek*-ը կիրառվում է նաև «ոմանք» նշանակությամբ: Օրինակ՝

Hinek meriv vir in.	Ոմանք այստեղ են:
Hinekan guh dida, hinekan jî guh nedida.	Ոմանք լսում էին, ոմանք էլ չէին լսում:
Hinek dest bi k'arekî dikin, hinek jî didomînin.	Ոմանք մի գործ են սկսում, ոմանք էլ շարունակում են:

5. Հոգնակի թվով և անորոշ առմամբ գոյականը կարող է նաև ստանալ *-ne* վերջավորություն (ծագում է *hine*-ից): Ի տարբերություն *-ek*-ի՝ *-ne*-ն կիրառվում է միայն այն պարագայում, երբ գոյականը հանդես է գալիս իզաֆեթային կառույցում.



zar'okne aqil	խելոք երեխաներ
qîzne bedew	գեղեցիկ աղջիկներ
Ew qîzne baş in.	Նրանք լավ աղջիկներ են:
Ew kur'ne aqil in.	Նրանք խելացի տղաներ են:

### *Երկխոսություն*

- Ew çî ye?
- Ew malek e.
- Ev çî ye?
- Ev sêvek e.
- Ev k'î ye?
- Ev keç'ikek e.
- Yê din k'î ye?
- Ew kur'ikek e.
- Ew k'î ne?
- Ev jinikek e. Ev mêrikek e.
- Ev çî jin e?
- Ev jinikeke k'urd e.
- Ew k'î ye?
- Ew Aram e.
- Aram k'urd e?
- Aram lawikek e. Ew lawikekî ermenî ye.
- Yê din k'î ye?
- Pêdro mêrik e. Ew mêrikekî îspanî ye.
- E'yşê k'î ye?
- E'yşê keç'ik e. Ew keç'ikeke t'irk e.
- Tu k'ê dibînî?
- Ez jinikekê û mêrikekî dibînim.
- Tu çî dixwî?
- Ez nanekî dixwim.
- Mala te heye?
- Mala min heye, lê mala min maleke kevn e.
- Mala te mezin e?
- Hem ç'ûk e, hem jî k'irêya wê biha ye.
- Ez maleke nû dixwazim, yeke firehe erzan.
- Lê yên fireh biha ne.

Նոր բառեր և արտահայտություններ

Ez dibînim.	Ես տեսնում եմ:
-------------	----------------

Ez dixwim.	Ես ուտում եմ:
Ez dixwazim.	Ես ուզում եմ:
k'irê	վարձով
biha	թանկ
erzan	էժան

**Վարժություն 1.** Թարգմանել հետևյալ նախադասությունները:

1. Min malek k'irî. 2. Te maleke nû k'irî. 3. Min keç'eke ermenî dît. 4. Te kur'ekî ermenî dît. 5. Jinekê nan da min. 6. Jinikeke gurc r'ê nîşan da. 7. Mêrekî e'rebe çêkir. 8. Mêrikekî derî vekir. 9. R'okê ew serbaz çû şêr'. 10. R'ojekê ew kur' çûn nêçîrê. 11. Carekê min tu dîtî. 12. Keç'kê ji kanîyê av anî. 13. Keç'ikeke ermenî min ra name nivîsî. 14. Mêrekî r'ê nîşan da. 15. Mêrekî rûs r'ê nîşan da. 16. Pey erdhejê ra merîne t'eze hatin vir. 17. Hinek meriv tişt fe'm nekirin. 18. Malên hinek mirovan da av t'unekû. 19. Ew çî xwendek'arekî zîrek e! 20. Dîlan, r'ojnivîskê bixwîne

**Նոր բառեր և արտահայտություններ**

Wî k'irî.	Նա գնեց:
dît	տեսա, տեսար
nîşan dan	ցույց տալ
çêkirin	սարքել
şer'	կռիվ
şêr'	կովի
r'okê, r'ojekê	մի օր
pey, piştî	հետո
zilzile	երկրաշարժ
zîrek	խելացի
r'ojnivîsk	օրագիր
Bixwîne!	Կարդա՛:

**Հավելված**

- Քրդերենի կուրմանջի բարբառում *jev*, *lev*, *t'ev*, *p'ev* նախդիրները բարդ են՝ կազմված պարզ նախդրից ու *hev* փոխադարձ դերանունից (*jev* = **ji+hev**, *lev* = **li+hev**; *t'ev* = **di+hev**; *p'ev* = **bi+hev**): Այս բարդ նախդիրները կարող են գործածվել պարզ բայերի հետ՝ կազմելով նախդրավոր բայեր:

Armînê bişkokên xwe <b>t'ev</b> xist.	Արմինեն իր կոճակները կոճկեց:
Ew cîran levhatin.	Այդ հարևանները հաշտվեցին:

- Որոշ նախածանցներ

**ber-**

berstû	օձիք
bernivîsar	արտագրություն
berr'oj	արևկող

**ser-**

serk'ar	առաջնորդ
serwext	խելագի

**bin-**

binpê	նոնատակ
binerd	ընդհատակ

**Jîyana H'eso**

H'eso xwendekar e. Ew bîst salî ye, û pênc meh e li Ermenistanê dijî. Birakî wî jî li vir e. Birayê wî k'arker e, zewicî ye, bavê şeş zar'okan e. Mala wî çar ode ye, lê p'ir' mezin nîne. Ji ber vê yekê H'eso t'enê k'irê dimîne. T'enê odeke wî heye. Oda wî li jêr e, li qatê e'rdê ye. Nav odê nivînek, masek, dolabek, k'ursîk, lampek û ocaxek heye. P'encere miqabilî dêrî ye. Nivîn li alîyê r'astê, li ber dîwêr e. Dolab li alîyê ç'epê ye. Mase li ber pencerê ye. K'ursî li piş masê ye. Lampe li orta odê ye, jorê. Ocax li ser dolabeke ç'ûk, li quncika k'êleka dêrî ye.

**Վարժություն 2.** Պատասխանել հետևյալ հարցերին:

1. H'eso çî k'arî dike?
2. Ew t'enê dimîne?
3. Mala wî mezin e?
4. Oda H'eso da çî tişt hene?
5. Mase li k'u ye?
6. Nivîn k'u derê ye?
7. Dolab li k'u ye?

Նոր բառեր և արտահայտություններ

jîyan	կյանք
dijî	ապրում է, բնակվում է
t'enê	մենակ
dimîne	մնում է
miqabilî	դիմաց
quncik	անկյուն
ji ber vê yekê	սրա պատճառով
k'irê	վարձով

**Վարժություն 3.** Թարգմանել հետևյալ նախադասությունները:

1. Mêrikek hebû, navê wî Silo bû.
2. Min h'eyatê jinek dît.
3. Carekê ez çûm şeher.
4. P'adşek hebû, du kur'ên wî hebûn.
5. Li bazarê ez r'astî hevalekî hatim.
6. Kur'ekî min doxtirîyê hîn dibe.
7. Nêç'îrvanek goşt da wan.
8. Cînarê me mirovekî baş e.

**Հավելված**

1. *Yek* քանակական թվականը երբեմն հանդես է գալիս փոխանվանաբար: Այսինքն՝ մեկ անձի համար կիրառում են ոչ միայն *merivek*, *mirovek* ձևերը, այլև *yek*-ը: Այս դեպքում *yek* թվականը ստանում է որոշակի վերջավորություններ.

ա) արական սեռի գոյականի դեպքում *yek*-ը ստանում է *-î*.

Yekî av anî.	Մեկը ջուր բերեց (նշ.՝ <i>Մի տղամարդ ջուր բերեց</i> ):
Yekî pirsî: “Tu çend salî yî?”	Մեկը հարցրեց. «Դու քանի՞ տարեկան ես» (նշ.՝ <i>Մի տղամարդ հարցրեց. «Դու քանի՞ տարեկան ես»</i> ):
Min du mirov dîtin: p'or'ên yekî r'eş bûn, p'or'ên yekî jî spî bûn.	Ես երկու մարդ տեսա. մեկի մազերը սև էին, մեկի մազերն էլ սպիտակ էին:

բ) իգական սեռի գոյականի դեպքում *yek*-ը ստանում է *-ê*.

Yekê tişt pirsî.	Մեկը բան հարցրեց (նշ.՝ <i>Մի կին բան հարցրեց</i> ):
Yekê ji min av xwest.	Մեկն ինձնից ջուր խնդրեց (նշ.՝ <i>Մի կին ինձնից ջուր խնդրեց</i> ):
Min du keç' dîtin: Navê yekê Gulnaz bû, navê yekê jî R'ojda bû.	Ես երկու աղջիկ տեսա. մեկի անունը Գյուլնազ էր, մեկի անունն էլ՝ Ռոժդա (նշ.՝ <i>Ես երկու աղջիկ տեսա. մի աղջկա անունը Գյուլնազ էր, մի աղջկա անունն էլ՝ Ռոժդա</i> ):

2. Փոխանվանաբար կիրառվող *yek* քանակական թվականը կարող է ստանալ լրացում.

ա) արական սեռի գոյականի դեպքում *yek*-ը ստանում է *-î*.

Yekî ûris derî vekir.	Մի ռուս դուռը բացեց (նշ.՝ <i>Մի ռուս տղամարդ դուռը բացեց</i> ):
Yekî ciwan ji bazarê sêv anîn.	Մի երիտասարդ շուկայից խնձոր բերեց (նշ.՝ <i>Մի երիտասարդ տղամարդ շուկայից խնձոր բերեց</i> ):

բ) իզական սեռի գոյականի դեպքում *yek*-ը ստանում է *-e*.

Yeke k'urd ji me rê pirsî.	Մի քուրդ մեզնից ճանապարհ հարցրեց (նշ.՝ <i>Մի քուրդ կին մեզնից ճանապարհ հարցրեց</i> ):
Yeke zirav hat cem me.	Նիհար մեկը եկավ մեզ մոտ (նշ.՝ <i>Մի նիհար կին եկավ մեզ մոտ</i> ):

### Kevanîya bîrsar

Carekê gundîk malekê da bû mêvan. Kevanîya malê şorbe anî, danî ber, lê kevçî bîr kir. Mêvan nihêr'î ku kevanî serwext nebû, got: “Xûşkê, xûşkê, bi k'ere ma xwe k'êrê bîne”. Jinikê got: “Ê, mêvanê e'zîz, k'êr çir'a lazim e?”. Mêvan got: “Ezê guhê xwe jêkim, bikim kevç'î, şorbê pê bixwim”.

Նոր բառեր և արտահայտություններ

şorbe	սպուր
Wî bîr kir.	Նա մոռացավ:
Ew serwext nebû.	Նա չհասկացավ:
Bîne!	Բե՛ր:
Ez jêkim.	Ես կտրեմ:
Ezê jêkim.	Ես կտրելու եմ:
Ez bikim.	Ես անեմ:
Ez bixwim.	Ես ուտեմ:

**Վարժություն 4.** Թարգմանել հետևյալ նախադասությունները:

1. Եղնիկը դաշտում է: 2. Մի եղնիկ անտառում է: 3. Արմենը լավ ընկեր է:
4. Արմինեն լավ ընկերուհի է: 5. Մի մարդ այնտեղ է: 6. Մի գիրք սեղանին է: 7. Գիրքը սեղանին է: 8. Մի աղջիկ, մի կին և մի մարդ այգում են: 9. Մի մարդ ու կին այստեղ են: 10. Մի մարդ ու կին բակում են: 11. Ես մի աղջիկ ունեմ: 12. Դու մի որդի ունես: 13. Աղբյուրի ջուրը քաղցր է: 14. Դու մի գիրք ունես: 15. Իմ հարևանուհին լավ կին է: 16. Իմ ընկերը խելացի տղա է: 17. Երևանը շոգ քաղաք է: 18. Ռուսաստանը մեծ երկիր է:

Նոր բառեր

եղնիկ	xezal
եղնիկի ձագ	kara xezalê
դաշտ	deşt
անտառ	mêşe
տակ	bin

թռչուն, ճնճղուկ	ç'ivîk
ծառ	bax
այգի	bax'çe
աթոռ	k'ursî
սեղան	t'exte
տղամարդ	mêr
մարդ	merî, meriv
ուսանող	xandikar
հարևան	cînar
աշխատող	xebatk'ar
մարդ	merî
ջղային	hêrs

**Ժողովրդական ասացվածքներ**

Dewrek gul e, yeke şîlan e.

Gûzek, gûzek dibe dîzek.

Her r'eng r'engek e, bedr'eng jî r'engek e.

Her r'ojek nexşekî wê heye.

Kur'ek heye gula bavê xwe, kur'ek heye kula bavê xwe

Jina neqenc h'erîyeke sar e.

Mûk, mûk dibe r'ihék.

Xirabîya malekê dibe avayîya gundekê.

Նոր բառեր և արտահայտություններ

dewr	պտույտ, շրջապտույտ, ժամանակահատված
şîlan	մասուր
gûz	ընկույզ
Ew dibe.	Այն դառնում է:
dîz	կճուճ, կավե անոթ
bedr'eng	դժգույն
nexş, neqış	պատկեր, նկար, ասեղնագործություն, նախշ
mû	մազ
r'ih	մորուք
kul	խոց, ցավ
gul	վարդ, ծաղիկ
qenc	լավ
h'erî	ցեխ
xirabî, xerabî	ավերում, վատություն
avayî	կառուցում

## Դաս 15

### Դասանիշներ

Դասանիշները ցույց են տալիս բառերի՝ այս կամ այն դասին պատկանելը: Դասանիշները առավելապես գործածվում են քանակական թվականների հետ: Քրդերենի կուրմանջի բարբառում դասանիշներ են.

**Heb**-ը (բոց.՝ *հաս, հատիկ*) կիրառվում է անշունչ առարկաների համար: Որոշ խոսվածքներում առկա է *hev* ձևը.

du heb nan	երկու հատ հաց
------------	---------------

**Nefer**-ը (բոց.՝ *անձ, հոգի*) կիրառվում է անձ նշելու համար.

bîst nefer xwendekar	քսան ուսանող
şeş nefer	վեց հոգի

**Serî**-ն (բոց.՝ *զուլի*)՝ չորքոտանիների համար.

deh serî golik	տասը հորթ
----------------	-----------

**Serî**-ն (բոց.՝ *զուլի*)՝ մթերքի (սոխ, պանիր) համար.

sê-çar serî pîvaz	երեք-չորս զուլի սոխ
sê serî penêr	երեք զուլի պանիր

**Niqitk**-ը (բոց.՝ *կաթիլ*)՝ հեղուկի համար.

çend niqitk xûn	մի քանի կաթիլ արյուն
sê niqitk hêsir	երեք կաթիլ արցունք

*Կաթիլ*-ի համար գործածվում է նաև **dilop** բառը, որը, սակայն, դասանիշ չէ: **Kulî** (բոց.՝ *փաթիլ*) բառն օգտագործվում է ձյան համար, բայց այն նույնպես դասանիշ չէ:

**Cot**-ը (բոց.՝ *գույգ*) կիրառվում է գույգ առարկա նշելու համար (որոշ խոսվածքներում առկա են *coft, cift, cût* տարբերակները).

deh cot gore	տասը գույգ գուլպա
pênc cot sol	հինգ գույգ կոշիկ
sêzde cot lepik	տասներեք գույգ ձեռնոց

**Kit**-ը (բոց.՝ *հատ*) կիրառվում է գույգ առարկաների հատը նշելու համար.

kita gorê	գուլպայի հատը
kita solê	կոշիկի հատը

Մի *hust*-ի համար գործածվում է նաև *ta* բառը, որը կիրառվում է առավելապես անձի համար.

Kur'ê min tayê t'enê ye.	Իմ որդին միամորթիկ է:
--------------------------	-----------------------

*Pe'ri*-ն կամ *parî*-ն (բոց.՝ *պատառ, կտոր*) կիրառվում է հացի պատառի, ինչպես նաև ուտելիքի չափի համար.

parî nan	մի պատառ հաց
du parî nan	երկու պատառ հաց

*P'irtî*-ն (բոց.՝ *պատառ, կտոր*)՝ ուտելիքի համար.

p'irtî nan	մի կտոր հաց
du p'irtî nan	երկու կտոր հաց

*Çiftî*-ն (բոց.՝ *կտոր*)՝ մսի համար.

çiftî goşt	մի կտոր միս
sê çiftî goşt	երեք կտոր միս

Ուտելիքի համար գործածվում է նաև *ker, kerî* (բոց.՝ *կտոր*) բառը, որը, սակայն, դասանիշ չէ: Այն կարող է կիրառվել պարզ բայի հետ և կազմել բաղադրյալ բայ, օրինակ՝ *ker kirin* նշանակում է «կտրել», «կտորների բաժանել»: Այս բառը չպետք է շփոթել մեկ այլ նույնահունչ *kerî* (բոց. *հոս, խուսք*) բառի հետ.

sê kerî pez	ոչխարի երեք հոտ
-------------	-----------------

*Tûzî*-ն (բոց.՝ *դիլիս*) կիրառվում է ձմերուկի, սեխի, երբեմն էլ տանձի, խնձորի համար.

du tûzî zebes	երկու դիլիս ձմերուկ
sê tûzî şemamok	երեք դիլիս սեխ

*Çir'*-ը (բոց.՝ *կոշտ, կտոր*)՝ շաքարի, աղի, կոշտ հողակտորի համար.

du çir' şekir	երկու կտոր շաքար
---------------	------------------

*Qalib*-ը (բոց.՝ *կտոր*)՝ օճառի համար.

çar qalib sapon	չորս կտոր օճառ
du qalib saûn	երկու կտոր օճառ

*Dest*-ը (բոց.՝ *ձեռք*)՝ հագուստի, շորի, սպիտակեղենի համար.

sê dest kinc	երեք ձեռք հագուստ
--------------	-------------------



du dest orxan-doşek	երկու ձեռք վերմակ-ներքնակ
---------------------	---------------------------

**Deste**-ն (բոց.՝ *խումբ, փունջ, ջոկատ, տրցակ, կապ*) կիրառվում է մարդկանց խմբի, ջոկատների, թղթի կամ փողի, ինչպես նաև կանաչիների, ծաղիկների համար.

du deste pincar'	երկու կապ կանաչի
sê deste k'axez	երեք տրցակ թուղթ
du deste gul	երկու փունջ ծաղիկ

Օրինակ՝

Sîyar deste-deste pêşda hatin.	Ձիավորները խումբ-խումբ առաջ եկան:
--------------------------------	-----------------------------------

**Baq**-ը (բոց.՝ *փունջ*) կիրառվում է առավելապես ծաղիկների համար.

du baq gul	երկու փունջ ծաղիկ
------------	-------------------

**Qevd**-ը (բոց.՝ *փունջ*) նույնպես կիրառվում է ծաղիկների համար.

qevdek gul	մի փունջ ծաղիկ
------------	----------------

Որպես դասանիշ են գործածվում նաև *mil, bermilk, k'ulm, mist* բառերը.

du bermil kulîlk	երեք փունջ ծաղիկ
sê k'ulm birinc	երեք բուռ բրինձ
mistek ax	մի բուռ հող

**Bir**'-ը (բոց.՝ *խումբ, հոտ*)՝ մարդկանց, ձիավորների և հեծյալների համար.

sê bir sîyar	երեք խումբ ձիավոր
--------------	-------------------

**Zo** (բոց.՝ *զույգ*) կիրառվում է զույգ որոշ առարկաների (հիմնականում ընկույզի, ոչխարի, քարերի) համար.

pênc zo gûz	հինգ զույգ ընկույզ
şeş zo berx	վեց զույգ գառ
sê zo kevir	երեք զույգ քար

## Zivistan

Berf kulî-kulî barî. Berfa spî deşt, ç'îya û banî girt. Berfê cîkî vekirî nehîşt. Cîranên me h'emû derk'etin derva. Wana mer' û gêzî hilda û e'rd t'emiz kir. Zar'ok jî hatin, berf berev kirin û pê berfê listin.

### ***K'eskesor***

Ji e'wrê r'eşe te'rî  
Baranek hûr barî,  
E'zman vebû, bû cîk sayî,  
Te'v zeriqî.

K'eskesorê  
K'ember girêda,  
Ç'ilkêd avê  
Werq dan çawa guhar. (Xnko Apêr)

Նոր բառեր

banî	բարձունք, լեռ
vekirî	բաց, բացած
nehîşt	չթողեց
mer'	բահ
gêzî	ավել
hildan	վերցրին
hûr	մանր
ç'ilk	կաթիլ

### **Zeynab**

Navê min Zeynab e. Ez k'urd im, lê ne li K'urdistanê, li Têhranê dimînim. Du keç' û du kur'ên min hene. Em t'evda şeş kes in. Navê keç'a min **a** ç'ûk Gulistan e. Navê keç'a min **ya** mezin Hêvî ye. Navê kur'ê min **yê** çûk T'acîn e, navê **yê** mezin Tîtal e.

Kur'ê min **ê** mezin bîst salî ye, kur'ê minî ç'ûk panzde salî ye. Kur'ê minî mezin dixebite. Qîza min **ya** mezin dixûne. Keç'a mine çûk îdî mekt'ebê xilas dike.

Mêrê min k'arker e, xanîyan ava dike. Mala me h'emûyan çar qatî ye û em gelek r'azî ne.

**Վարժություն 1.** Պատասխանել հետևյալ հարցերին:

1. Navê jinika k'urd çî ye?
2. Çend zar'okên wê hene?
3. Çend kur'ik û çend keç'ik in?
4. Navên keç'ikan çî nê, yê kur'ika çî ne?
5. Zar' çend salî ne?
6. Zar'okên wê dixûnin an dixebitin?

Նոր բառեր և արտահայտություններ

t'evda	ամբողջությամբ, միասնաբար
kes	անձ, անհատ
Ew dixebite.	Նա աշխատում է:
Ew dixûne.	Նա սովորում է:
îdî	արդեն, այլևս
Ew ava dike.	Նա կառուցում է:
Ew mekt'ebê xilas dike.	Նա ավարտում է դպրոցը:

## Դաս 16

### Իգաֆեր

Քրդերենի կուրմանջի բարբառում որոշիչ-որոշյալ, հատկացուցիչ-հատկացյալ կապն արտահայտվում է իգաֆերով: Որպես կանոն՝ որոշյալը նախադաս է որոշչին, հատկացյալը՝ հատկացուցչին:

Իգաֆերն արտահայտվում է որոշյալին կամ հատկացյալին կցվող *-a* և *-ê* վերջավորություններով: Իգաֆերային կառույցի մեջ **հատկացուցիչն ու որոշիչը** թեք հոլովաձևով են:

1. Եթե հատկացյալը կամ որոշյալը իգական սեռի գոյական է, ապա ստանում է *-a* վերջավորություն.

xûşka min	իմ քույրը
dîya min (dayîka min)	իմ մայրը
pîrika te	քո տատը
r'oja germ	տաք օր
xûna sor	կարմիր արյուն
birê Hasmîkê (birayê Hasmîkê)	Հասմիկի եղբայրը
birê Armên (birayê Armên)	Արմենի եղբայրը
Xûşka Zerîfê	Զարիֆի քույրը
Xûşka Armên	Արմենի քույրը

2. Եթե հատկացյալը կամ որոշյալը արական սեռի գոյական է, ապա ստանում է *-ê* վերջավորություն.

bavê min	իմ հայրը
kur'ê we	ձեր որդին
zimanê dê	մայրենի լեզու
dermanê kuxikê	հազի դեղ
birê min, birayê min	իմ եղբայրը
xortê bedew	գեղեցիկ երիտասարդ
ç'emê Erezê	Արաքս գետը

3. Որպես հատկացյալ կամ որոշյալ՝ հոգնակի գոյականները ստանում են *-ên* կամ *-êd* վերջավորություն.

kur'ên min (kur'êd min)	իմ տղաները
xanîyên çûk (xanîyêd çûk)	փոքր տներ
jinên baş (jinêd baş)	լավ կանայք
gundên t'eze (gundêd t'eze)	նոր գյուղեր

Օրինակ՝

Hevalêd min hatin.	Իմ ընկերները եկան:
Min got hevalên xwe: “Hûn çawan in?”	Ես ընկերներիս ասացի. «Դուք ինչպե՞ս եք»:

4. Եթե բառը վերջանում է ձայնավորով, ապա բառի և իզաֆեթային ցուցիչի միջև դրվում է *y* կիսաձայնը.

bayê sar	սառը քամի
mûyê r’êş	սև մազ
mûyê tenik	բարակ մազ
pembuyê spî	սպիտակ բամբակ
ç’îyayê bilind	բարձր լեռ

5. Չայնավահանգ մի շարք գոյականներ ուր պե ս որոշյալ և հատկացյալ գործածվելիս ունենում են երկու ձև՝ ամբողջական ու կրճատ.

e’rebeya min	e’reba min	իմ ավտոմեքենան
odeya xwarinê	oda xwarinê	ճաշասենյակ
maseya nê	masa nê	հացի սեղան

6. Մի շարք գոյականների իզաֆեթային ձևերը կարող են կազմվել հետևյալ կերպ.

r’ê	ճանապարհ	r’îya teze	նոր ճանապարհ
r’ê	ճանապարհ	r’îya rast	ուղիղ ճանապարհ
dê	մայր	dîya te	քո մայրը

8. Եթե հատկացուցիչը հոգնակի է, ապա ստանում է *-a* կամ *-an* հոգնակերտ.

zimanê k’urda (zimanê k’urdan)	քրդերի լեզուն
welatê ermenîya (welatê ermenîyan)	հայերի երկիրը
te’ma sêva (te’ma sêvan)	խնձորների համր
k’itêbên şagirta (k’itêbên şagirtan)	աշակերտների գրքերը

7. Իզաֆեթային կառույցով է ներկայացվում նաև անուն-հայրանունը.

Zozana Sîyabend	Չոզան Միաբանդի (նշ.՝ <i>Միաբանդի դուստր Չոզան</i> )
K’eremê Mîsto	Քյարամ Մստոյի (նշ.՝ <i>Մստոյի որդի Քյարամ</i> )
Aramê Tîgran	Արամ Տիգրանի (նշ.՝ <i>Տիգրանի որդի Արամ</i> )

## Agrî û Mazîn

Agrî: R'ojbaş!

Mazîn: R'ojbaş, mêvano, tu ser ç'e'va hatî! K'erem bike, r'ûnê.

Agrî: Spas dikim.

Mazîn: Li vir k'ursî t'une, k'êleka êgir, ser kêvir rûnê.

Agrî: Ev çi nan e?

Mazîn: Ev nanê sêlê ye.

Agrî: Nanê sêlê mîna nanê somî ye.

Mazîn: Erê, lê nanê sêlê pe'n e.

Agrî: Ew çi nan e?

Mazîn: Ew jî nanê tendûrê ye.

Agrî: Nanê somî t'une, ne?

Mazîn: Na, nanê somî t'une, t'enê nanê loş heye.

Agrî: Ez nanê sêlê h'ez dikim, nanê sêlê xweş e.

Mazîn: Li vir goştê pêz heye. Ew goşt k'elandî ye.

Agrî: Na, ez goşt h'ez nakim.

Mazîn: Masîyê pe'tî jî heye.

Agrî: Me'sî pê îsotê ye?

Mazîn: Erê, pê îsotê ye û r'ind tûj e. Hêkên k'elandî jî hene!

Agrî: Nên h'ez dikim. Nanê t'isî xweş e.

Mazîn: Nên pê qêtix bixwe.

Agrî: Na, ez vî mastî h'ez nakim.

Mazîn: Çir'a?

Agrî: Ev qatix r'û girtî ye. Şîr bide min.

Mazîn: K'erem bike.

Agrî: Mala te ava!

Նոր բառեր և արտահայտություններ

Spas!	Շնորհակալություն:
Spas dikim.	Շնորհակալություն եմ հայտնում:
R'ûnê!	Նստի՛ր:
agir	կրակ
êgir	կրակի, կրակին
pez	ոչխար
pêz	գառան, ոչխարի
qatix, mast	մածուն
sêl	սաջ (հաց թխելու կամ ընդդեմ բովելու մետաղե տապակ)
mîna	նման

pehn, pe'n	տափակ
tendûr	թոնիր
Ez h'ez dikim.	Ես սիրում եմ:
Ez h'ez nakim.	Ես չեմ սիրում:
kelandî	խաշած, եփած
qelandî	տապակած
pe'tin	տապակել
pe'tî	խորոված
îsot	տաքդեղ
bîber	պղպեղ
masî, mesî	ձուկ
pe'tî	թխած, տապակած
tûj	կծու
t'isî	ցամաք
nanê tisî	ցամաք հաց
Bixwe!	Կե՛ր:
r'û girtî	զտած
mastê r'û girtî	զտած մածուն

**Վարժություն 1.** Թարգմանել հետևյալ կապակցությունները:

Kevirê mezin, şekirê çir', qalîkê hêkê, firotina nê, genimê îsal, fikra min, şîklê te.

**Վարժություն 2.** Թարգմանել հետևյալ նախադասություններն ու կապակցությունները:

1. Xwendik'arê aqil. 2. Bavê qîzê. 3. Navê min. 4. K'itêba r'ind. 5. P'ayît'extê T'urkyayê. 6. Serokbajarê K'urdistanê. 7. Şeherê me. 8. Gula baxçê. 9. Mala mezin. 10. Hêlîna ç'ivîkê. 11. Xûşka wî heye. 12. Nanê k'urdan pe'n e. 13. Xanîyê wan bilind e. 14. Gundê we çûk e. 15. Dik'ana wan tune. 16. Derîyê darîn. 17. Mala me. 18. Lawê min 25 salî ye. 19. Ew wek te ye. 20. Ew ne mîna min e.

**Վարժություն 3.** Թարգմանել հետևյալ նախադասությունները:

1. Արմենի գիրքը նոր է: 2. Ծաղկի բույրը հաճելի է: 3. Երիտասարդ բժշկուհին գեղեցիկ է: 4. Դեղին խնձորը շատ համեղ է: 5. Խելացի տղան եկավ: 6. Քո որդին քեզ նման է: 7. Նա ինձ նման չէ: 8. Պղպեղը կծու է: 9. Տաքդեղը նույնպես կծու է: 10. Իմ բժշկուհին բարի է: 11. Անահիտի աղջիկը: 12. Ուսանողի գիրքը: 13. Հասմի կ քույրիկ, ինչպե՞ս ես: 14. Արա՛մ

եղբայր, դու այստե՞ղ ես: 15. Արամը հաց թխեց: 16. Սա թոնրի հաց է: 17. Այստեղ կանաչ վարունգներ կան: 18. Սաջի հացը տափակ է: 19. Խորոված ձուկը համեղ է: 20. Հացը թոնրի մեջ է: 21. Աթոռ չկա, նստի՛ր քարին: 22. Խաշած միսը պղպեղով է: 23. Խորոված միսը տաքդեղով է: 24. Այս միսն անալի է: 25. Նա ճաշն առանց հացի կերավ: 26. Նա ցամաք հաց կերավ: 27. Այս ճաշը առանց հացի համեղ է: 28. Այս ճաշը տաքդեղով է: 29. Կաթսան կրակին է:

### Հավելված

- *Ev* (սա) *ew* (դա), *evan* (սրանք), *ewan* (դրանք) ցուցական դերանունները հոլովվելիս որոշակի փոփոխություններ են կրում:

1. Արական սեռի գոյականների հետ կիրառվելիս ն թեք հոլովով դրվելիս *ev* (*ew*) ցուցական դերանունը դառնում է *vî* (*wî*): Այդ պարագայում արական սեռի գոյականը ստանում է *-î* վերջավորություն:

Օրինակներ

Ev kur' li vir e.	Այս տղան այստեղ է:
Navê <i>vî</i> kur'î Aram e.	Այս տղայի անունն Արամ է:
Ez <i>vî</i> kur'î dibînim.	Ես այդ տղային տեսնում եմ:
Te ji <i>wî</i> kur'î saet pirsî?	Դու այդ տղայից ժամը հարցրիր:

2. Իգական սեռի գոյականների հետ կիրառվելիս *ev* (*ew*) ցուցական դերանունը դառնում է *vê* (*wê*): Այդ դեպքում իգական սեռի գոյականը ստանում է *-ê* վերջավորություն.

Ev keç' vê derê ye.	Այս աղջիկն այստեղ է:
Çe' vên <i>vê</i> keç'ê r'êş in.	Այս աղջկա աչքերը սև են:
Ez <i>vê</i> keç'ê h'ez dikim.	Ես այս աղջկան չեմ տեսնում:
Ew jin cînara min e.	Այդ կինն իմ հարևանուհին է:
Navê <i>wê</i> jinê Gulê ye.	Այդ կնոջ անունը Գյուլ է:
Ez her r'oj <i>wê</i> jinê dibînim.	Ես ամեն օր այդ կնոջը տեսնում եմ:
Te ji <i>wê</i> qîzê av xwest.	Դու այդ աղջկանից ջուր ուզեցիր:
Min pirtûk da <i>wê</i> keç'ê.	Ես գիրքը տվեցի այդ աղջկան:

3. *Evan* (*ewan*) ցուցական դերանունը թեք հոլովով դրվելիս դառնում է *van* (*wan*), հոգնակի գոյականը ստանում է *-a* կամ *-an* հոգնակերտ.

Evan keç'an vê derê ne.	Այս աղջիկներն այստեղ են:
Ez <i>van</i> keç'an dibînim.	Ես այս աղջիկներին տեսնում եմ:
Min ji <i>van</i> keç'an av xwest.	Ես այս աղջիկներից ջուր ուզեցի:
Te ji <i>wan</i> kur'an r'ê pirsî.	Դու այդ տղաներից ճանապարհ



	հարցրիր:
Mala <b>van</b> merivan li Yêrêvanê ye.	Այս մարդկանց տունը Երևանում է:
Qedrê <b>van</b> jina bo min gelek bilind e.	Այս կանանց պատիվն ինձ համար շատ բարձր է:

- **Bê-** և **ne-** ժխտական նախածանցները մասնակցում են նաև բառակազմությանը.

aqil	խելք	<b>bê</b> aqil	անխելք
k'êf	տրամադրություն	<b>bê</b> k'êf	անտրամադիր
k'ar	գործ	<b>bê</b> k'ar	անգործ, գործազուրկ
can	հոգի, կենդանություն	<b>bê</b> can	անկենդան
serî	զլուխ	<b>bê</b> serî	անզլուխ
mal	տուն	<b>bê</b> mal	անտուն
yar	սիրեցյալ	<b>ne</b> yar	թշնամի
zane	գիտակ	<b>ne</b> zan	անգետ
xweş	լավ, առողջ	<b>ne</b> xweş	հիվանդ

**Վարժություն 4.** Թարգմանել հետևյալ նախադասությունները:

1. Այդ կենդանին անկենդան է: 2. Այդ մարդն անխելք չէր: 3. Այդ վայրերում եղանակը լավն է: 4. Այդ երեխաներն անտուն են: 5. Իմ քեռու տղան վարորդ է: 6. Նա գնաց այդտեղ: 7. Անցյալ տարի իմ եղբայրը գործազուրկ էր: 8. Նա գործազուրկ է: 9. Այդ ճաշն առանց աղի է: 10. Նա անտուն է: 11. Երեկ նա հիվանդ էր: 12. Այստեղ եղանակը տաք է: 13. Այդ մարդը հիմա անգործ է: 14. Հարսը սենյակում է:

**Վարժություն 5.** Թարգմանել հետևյալ նախադասությունները:

1. Min ji vê cînarê tişt pirsî. 2. Te ji wê jinê saet pirsî? 3. Wan nan û av da wê zar'okê. 4. Min tişt neda van zar'okan. 5. Te kit'êb da van xwendik'aran. 6. Min ji wan kit'êban gelek tişt xwend. 7. Te çir'a ji wan pismamên xwe arîkarî nexwast. 8. T'irimbêla wî mêmî spî ye.

### **Ժողովրդական ասացվածքներ**

Aqilê sivik, barê giran.

Bextê dê – cihêzê qîzê.

Ç'îyayê bilind t'umê ser dûman e.

Xebat cewahirê canê îsan e.

Jin him gula ç'e'van e, him kula ç'evan e.

Beza hespê namûsa sîyaran e.

Xema gur e, mûm baha ye?  
Derbên neyara xeder in.

Նոր բառեր

aqil	խելք
sivik	թեթև
giran	ծանր
bext	բախտ, ճակատագիր
cihêz	օժիտ
dûman	մշուշ
cewahir	գոհար, զարդ
can	հոգի, մարմին
bez	վազք
mûm	մում
derb	հարված
xeder	մահացու

### Ամիսներ և տարվա եղանակներ

Օրվա տարբեր պահեր նշելու համար կիրառվում են հետևյալ բառերը.

լուսաբաց	առավոտ	կեսօր	կեսօրից հետո
berbang, şefeq	sibeh, sibe, sibê, beyanî	nîvro	piştî nîvro

երեկո	գիշեր	կեսգիշեր
êvar	şev	nîşev, nîvşev

danê sibehê	առավոտ, առավոտյան
danê nîvro	երեկո, երեկոյան
danê şevê	գիշերը

- Կուրմանջի բարբառի տարբեր խոսվածքներում կիրառվում են հետևյալ ամսանունները.

հունվար	Kanûna paşin, Kanûna paşî	Çile	Rêbendan
փետրվար	Sibat	Sibat	R'êşemî
մարտ	Adar	Adar	Adar
ապրիլ	Nîsan	Nîsan	Avrêl
մայիս	Gulan	Gulan	Gulan

հունիս	H'ezîran	H'ezîran	Pûşper
հուլիս	Tîrme	Tîrmeh	Tîrmeh
օգոստոս	T'ebax	T'ebax	Gelawêj
սեպտեմբեր	Îlon, Îlûn	Êlûn	Rezber
հոկտեմբեր	Ç'irîya pêşin, Ç'irîya pêşî	Cotmeh	Kewçêr
նոյեմբեր	Ç'irîya paşin, Ç'irîya paşî	Mijdar	Sermawêz
դեկտեմբեր	K'anûna pêşin, K'anûna pêşî	K'anûn	Berfanbar

- Բոլոր դասական թվականները ամսանուններին միանում են իզաֆեթային կապով: Ամսանունները իզական սեռի են և ստանում են -ê վերջավորություն.

pêncê Gulanê	մայիսի հինգ
şeşê Hezîranê	հունիսի վեց
yekê Îlonê	սեպտեմբերի մեկ
Îsal yekê Îlonê emê bê.	Այս տարի սեպտեմբերի մեկին մենք կգանք:
Yekê Adarê destpêka baharê ye.	Մարտի մեկը գարնան սկիզբն է:

### Demên salê

Çar demên salê hene: bihar, havîn, payîz û zivistan. K'anûn, Çile, Sibat mehên zivistanê ne. Zivistan gelekî sar e. Zivistanê berf ze'f e. Adar, Nîsan, Gulan mehên biharê ne. Biharê gul û kulîrkên qeşeng hene. H'ezîran, Tîrmeh, T'ebax mehên havînê ne. Li Ermenistanê havîn dirêj e. Êlûn, Cotmeh, Mijdar mehên payîzê ne. Payîzê hewa hînik e, belgên daran qîç'ik û sor in. Salek dozdeh meh e. R'ojek bîst û çar saet e. Saetek şêst deqîqe ye.

**Վարժություն 6.** Պատասխանել հետևյալ հարցերին:

1. Salekî da çend demsal hene?
2. Havîn çawan e?
3. Payîzê belg çî r'eng in?
4. Kengê berf heye?
5. Di salekî de çend meh hene?
6. Di saetekî de çend deqe hene?

Նոր բառեր

demsal	տարվա եղանակ
bedew	գեղեցիկ
bihar	գարուն
havîn	ամառ
payîz	աշուն
zivistan	ձմեռ

**Վարժություն 7.** Թարգմանել հետևյալ նախադասությունները:

1. Մայիսը գեղեցիկ է: 2. 900 տարի առաջ այդ երկիրն ազատագրվեց:
3. Մարտի մեկը գարնան սկիզբն է: 4. Սեպտեմբերի մեկը սովորելու օրն է:
5. Մարտի ութը տոն է: 6. Ամռանը Երևանում շատ շոգ է: 7. Արևմտյան Հայաստանը հիմա ազատ չէ:

## Դաս 17

### Դասական թվական

Դասական թվականներն արտահայտում են առարկաների թվային կարգը:

1. ա) Դասական թվականները կազմվում են՝ քանակական թվականին ավելացնելով **-em** կամ **-emîn** վերջնամասնիկները (որոշ խոսվածքներում կիրառվում են **-omî**, **-womî**, **-wom**, **-yom**, **-im** վերջնամասնիկները)։

<b>yekem</b> ( <b>yekemîn</b> )	առաջին
<b>duyem</b> ( <b>duyemîn</b> )	երկրորդ
<b>sêyem</b> ( <b>sêyemîn</b> )	երրորդ
<b>çarem</b> ( <b>çaremîn</b> )	չորրորդ
<b>pêncem</b> ( <b>pêncemîn</b> )	հինգերորդ
<b>şeşem</b> ( <b>şeşemîn</b> )	վեցերորդ
<b>h'eftem</b> ( <b>h'eftemîn</b> )	յոթերորդ
<b>h'eştem</b> ( <b>h'eştemîn</b> )	ութերորդ
<b>nehem</b> ( <b>nehemîn</b> )	իններորդ
<b>dehem</b> ( <b>dehemîn</b> )	տասներորդ

<b>yazdehem</b> ( <b>yanzdehemîn</b> )	11-րդ
<b>dozdehem</b> ( <b>dozdehemîn</b> )	12-րդ
<b>sêzdehem</b> ( <b>sêzdehemîn</b> )	13-րդ
<b>çardehem</b> ( <b>çardehemîn</b> )	14-րդ
<b>panzdehem</b> ( <b>panzdehemîn</b> )	15-րդ
<b>şanzdehem</b> ( <b>şanzdehemîn</b> )	16-րդ
<b>h'evdehem</b> ( <b>h'evdehemîn</b> )	17-րդ
<b>h'ejdehem</b> ( <b>h'ejdehemîn</b> )	18-րդ
<b>nozdehem</b> ( <b>nozdehemîn</b> )	19-րդ
<b>bîstem</b> ( <b>bîstemîn</b> )	20-րդ

Օրինակ՝

Pirtûka yekemîn.	Առաջին գիրքը:
Mirovê sêyemîn çû çayxanê.	Երրորդ մարդը գնաց թեյարան:
Mirovê şeşemîn p'îya çû.	Վեցերորդ մարդը ոտքով գնաց:
Dara yekem şîn e.	Առաջին ծառը կանաչ է:

բ) Երկնիշ, եռանիշ, քառանիշ և մյուս թվերի դասականը կազմելու ժամանակ դասականով է արտահայտվում միայն վերջին թվականը:

21-րդ	bîst û yekem, bîst û <b>yekemîn</b>
22-րդ	bîst û duyem, bîst û <b>duyemîn</b>
23-րդ	bîst û sêyem, bîst û <b>sêyemîn</b>
32-րդ	sî û duyem, sî û <b>duyemîn</b>
399-րդ	sêsed nod û nehem, sêsed nod û <b>nehemîn</b>
1002-րդ	hezar û duyem, hezar û <b>duyemîn</b>

2. Քրդերենի կուրմանջի բարբառի որոշ խոսվածքներում դասական թվականները կազմվում են հետևյալ տարբերակով.

ա) քանակական թվականին հավելվում է **-a** կամ **-an** վերջնամասնիկը<sup>38</sup>.

dudua (duda), duduan (dudan)	երկրորդ
sisya (sisyan)	երրորդ
çara (çaran)	չորրորդ
pênca (pêncan)	հինգերորդ
şeşa (şeşan)	վեցերորդ
hefta (heftan)	յոթերորդ
heşta (heştan, heşta, heştan)	ութերորդ
neha (nehan)	իններորդ
deha (dehan)	տասներորդ

Օրինակ՝

Îro r'oja bîstan e.	Այսօր քսաներորդ օրն է:
Aram r'oja sêzdehan hat.	Արամը տասներեքերորդ օրը եկավ:
Ev ot'axa yazdehan e.	Սա քսաներորդ սենյակն է:
Em k'etin odeya h'efta.	Մենք մտանք յոթերորդ սենյակ:

բ) Այս պարագայում **yek** թվականի դասականը չի կազմվում **-a** կամ **-an** վերջնամասնիկով. **yek** -ը ստանում է **-ê** վերջնամասնիկ:

qatê yekê	առաջին հարկ
sala yekê	առաջին տարին

Օրինակ՝

Min k'it'êba bîst û yekê xwend.	Ես 21-րդ գիրքը կարդացի:
---------------------------------	-------------------------

<sup>38</sup> Չփոթել **-a** կամ **-an** հոգնակերտի հետ:

գ) Երկնիշ, եռանիշ, քառանիշ և մյուս թվերի դասականը կազմելիս դասականով է արտահայտվում միայն վերջին թվականը:

35-րդ	sî û pênca, sî û pênca
21-րդ	bîst û yekê
44-րդ	çil û çara, çil û çaran
32-րդ	sî û duda, sî û dudan
157-րդ	sed pêncî û hefta, sed pêncî û heftan
2000-րդ	du hezara, du hezaran

դ) Առաջին-ը նշելու համար գործածվում են նաև *pêşyê, pêşî*, ինչպես նաև արաբական ծագմամբ *e'wlin, e'wlin, e'wli* ձևերը:

ot'axa pêşyê	առաջին սենյակը
mala pêşyê	առաջին տունը
cara e'wlin	առաջին անգամ

ե) Վերջին-ը նշելու համար կիրառվում են *dawî, dawîyê, k'utasî, k'utasîyê*:

gotina dawî	վերջին խոսք (վերջին ասելիք)
r'oja k'utasîyê	վերջին օրը
cara k'utasîyê	վերջին անգամ

զ) Դասական թվականը կարող է որոշիչ լինել:

otaxa sisyan (otaxa sisya)	երրորդ սենյակ
para duduan (para dudua)	երկրորդ բաժին
cara heftan (cara hefta)	յոթերորդ անգամ

3. Որոշ խոսվածքներում տասնավորների և հարյուրավորներ դասական թվականները կազմվում են քանակական թվականին *-î* կամ *-yî* վերջնամասնիկ ավելացնելով:

10-րդ	20-րդ	30-րդ	40-րդ	50-րդ	60-րդ	70-րդ	80-րդ	90-րդ
dehî	bîstî	sîyî/sîhî	çilî	pêncî yî	şêstî	h'eftê yî	h'estê yî	nodî

100-րդ	200-րդ	300-րդ	400-րդ	500-րդ	600-րդ
Sedî	dusidî	sêsidî	çarsidî	pênsidî	şesidî

700-րդ	800-րդ	900-րդ	1000-րդ
hefsidî	heysidî	nehsidî	hezarî

Եթե թիվը վերջանում է միավորով, ապա **-ի** կամ **-յի** վերջնամասնիկների փոխարեն ստանում է **-a** կամ **-an** վերջավորություն:

35-րդ	sî û pêncan
27-րդ	bîst û heftan

**Երկխոսություն**

Bawer: Ez derheqa salê û r’ojê pirsan ji te bikim.  
 Gulistan: K’erem bike!  
 Bawer: Sal çend meh e?  
 Gulistan: Salek donzdeh meh e.  
 Bawer: Nîsan meha çendan e?  
 Gulistan: Nîsan meha çaran e.  
 Bawer: R’oj çend saet e?  
 Gulistan: R’ojek bîst û çar saet e.  
 Bawer: R’oj çend dan e?  
 Gulistan: R’oj pênc dan e.  
 Bawer: Danê yekem k’îjan e?  
 Gulistan: Danê yekem sibeh e, sibeh destpêka r’ojê ye. Sibehê her kes teştê dixwe û diçe ser karê xwe.  
 Bawer: Danê duyem k’îjan e?  
 Gulistan: Danê duyem nîvro ye. Nîvro dema firavînê ye.  
 Bawer: Danê sêyem k’îjan e?  
 Gulistan: Danê sêyem berêvar e. Berêvar, di navbera nîvro û êvarê de ye.  
 Bawer: Danê çarem k’îjan e?  
 Gulistan: Danê çarem êvar e. Êvarê r’oj diçe ava, her kes diçe mala xwe.  
 Bawer: Danê pêncem k’îjan e?  
 Gulistan: Danê pêncem şev e. Şev dema bêhnvedan û r’azanê ye.  
 Bawer: Her bijî Gulistan!  
 Gulistan: Spas, Bawer can.

**Վարժություն 1.** Պատասխանել հետևյալ հարցերին:

1. Sal çend meh e? 2. Meh çend r’oj e? 3. Nîsan meha çendan e? 4. Gulan meha çendan e?

**Նոր բառեր և արտահայտություններ**

ketin	ընկնել, մտնել
dan (dayîn)	տալ
Ew dixwe.	Նա ուտում է:



Ew diçe.	Նա գնում է:
despêk	սկիզբ
bêhnvedan	հանգստանալ

**Վարժություն 2.** Թարգմանել հետևյալ նախադասությունները:

1. Dîlanê pirtûka nodî ji bo Nazê bir. 2. Ji sedî heta nehsidî bijimêrin! 3. Li ser sedî li hev nehatin. 4. Gulçîn bo ezmûnê ket odeya bîstan. 5. Min, ew xanî bi pênc sed hezarî xwast, lê nedan. 6. Sala hezar nehsid nod û yekê li Artsaxê hewa sar bû. 7. Wî cil bi hezarî k'ir'î. 8. Xanîyê bavê Gulçînê bi mîlyonekê firotin.

**Bîst û yekê Adarê**

Di bîst û yekê Adarê de şev u r'oj wekhev dibin. Şev jî dibe donzdeh seh'et, r'oj jî dibe donzdeh seh'et. Vê r'ojê demsala biharê dest pê dike. Sirişt û jîyan ji xewa zivistanê h'îşîyar dibe. Ç'em dikişin, kanî vedibin, dar gupik didin, bişkok didin, gîha hêşîn dibe.

Tiştê herî girîng bona k'urda ew e, ku r'oja bîst û yekê Adarê Newroz e. Ew r'oj ji bo k'urdan r'ojeke nîşan e. Newroz cejn e. Newroz sersala k'urdan û destpêka biharê ye. Peyva Newroz ji du peyvan pêk tê: “new” û “roz”. Me'nîya Newrozê r'oja nû ye, ye'nî e'mrê t'eze. Her sal malbatên k'urda bîst û yekê Adarê Newrozê dikin. Gava k'urd hev dibînin, dibêjin, “Newroza we pîrozbel!”

Newroz r'oja serhildan, yekîfî u biratîyê ye. Ew ji bo k'urda bûye cejna netewî.

**Նոր բառեր և արտահայտություններ**

wekhev	հավասար
Ewan wekhev dibin.	Դրանք հավասարվում են:
Ew dest pê dike.	Դա սկսվում է:
sirişt, t'ebiet	բնություն
jîyan	կյանք
gupik	բողբոջ
gupik dan	բողբոջել
Ew h'îşîyar dibe.	Նա արթնանում է:
Çem dikişin.	Գետերը հոսում են:
kanî	աղբյուր
Ewan vedibin.	Դրանք բացվում են:
girîng	կարևոր

cejn	տոն
sersal	նոր տարի
peyv	բառ
pêk tê	բաղկացած է
Pîrozbe!	Շնորհավոր լինի:
serhildan	ապստամբություն, ընդվզում
netewî	ազգային

**Ժողովրդական ասացվածքներ**

Derewîn carekê dixwe firavîn.

Lawikê derewîn carekê dixwe firavîn.

Mala bê mêvan, gundê bê şivan, ew herdu jî bê guman.

Dudu bi hev ra rast bin, ê sisyan Xwedê ye.

Նոր բառեր և արտահայտություններ

derew	սուտ
derewîn	ստախոս
car	անգամ
carek	մի անգամ
guman	հույս
Xwezil ewan rast bin.	Երանի՛ դրանք ճիշտ լինեն:

## Դաս 18

### Բայ. անորոշ դերբայ

Բայը ցույց է տալիս գործողություն, եղելություն:

Քրդերենի կուրմանջի բարբառում բայերն ըստ կազմության լինում են *պարզ* և *բաղադրյալ*: Պարզ բայերը կազմվում են մեկ բաղադրիչից (օրինակ՝ *kirin, xwarin, mirin, xwestin* և այլն), բաղադրյալները՝ երկու ու ավելի բաղադրիչից (օրինակ՝ *vekirin, daxistin* և այլն):

Բաղադրյալ բայերը լինում են *նախաձանցավոր, նախդրավոր* և *բարդ*:

Բայերի հետ կիրառվող նախդիրներն ու նախաձանցները արտացոլում են տարածության մեջ առարկաների փոխկապակցությունը և գործողության օբյեկտի և սուբյեկտի միջև գործողության ուղղությունը:

Նախաձանցավոր բայերը կազմվում են նախաձանցի ու պարզ բայի համակցմամբ (օրինակ՝ *vegerîn*):

Նախդրավոր բայերը լինում են երկու տեսակ՝ *պարզ նախդիրներով* (օրինակ՝ *paş ketin*) և *բարդ նախդիրներով* կազմված բայեր (օրինակ՝ *pê k'enîn, serda çûn*):

Բարդ բայերը կազմվում են որևէ խոսքի մասի և բայի համակցմամբ (օրինակ՝ *bilind bûn, sist kirin*):

Անորոշ դերբայը ցույց է տալիս գործողության ընդհանուր գաղափար:

Քրդերենի կուրմանջի բարբառում անորոշ դերբայն ունի *-din, -tin, -stin, -in, -în, -an, -ûn* վերջավորությունները:

1. *-din* վերջավորությամբ բայեր

stendin	ստանալ, գնել
çandin	ցանել
şandin	ուղարկել
xwendin (xwandin, xandin)	կարդալ, սովորել

2. *-tin* վերջավորությամբ բայեր

hatin	գալ
k'etin	ընկնել
r'ûniştin	նստել
r'êtin	թափել
avîtin (avêtin)	նետել, գցել
girtin	բռնել
gotin	ասել

ajotin	վարել, քշել
bijartin	ընտրել
veřartin	թաքցնել
axaftin (axavtin)	խոսել
qelařtin	պատռել
biřkavtin	քանդել, պատռել
pe'tin (pehtin, patin)	թիւել, տապակել
sotin	վառել, այրել
kuřtin	սպանել
řuřtin	լվանալ
hiřtin, hiřtin	թողնել
gihıřtin	հասնել
spartin	հանձնարարել
nixamtin	ծածկել
kotin	կրծոտել
guvařtin (givařtin)	քամել
dotin	կթել
cıtin <sup>39</sup>	ծամել
dirıtin <sup>40</sup>	կարել
mıtin	ծծել

### 3. *-stin* վերջավորությամբ բայեր

řikestin	կոտրվել
guhastin	փոխել
xwestin (xwastin, xastin)	ցանկանալ, ուզել
bihıstin	լսել
lıstin	խաղալ
gestin	կծել
xistin	խփել, հարվածել, քսել, մտցնել
ıxistin	հանել
alastin	լիզել
mıstin	միզել

<sup>39</sup> Հանդիպում է նաև *cın* տարբերակը:

<sup>40</sup> Հանդիպում է նաև *dirın* տարբերակը:

4. *-in* վերջավորությամբ բայեր

birin	տանել
kirin	անել
xwerin (xwarin, xarin)	ուտել
mirin	մահանալ
karin <sup>41</sup>	կարողանալ

5. *-in* վերջավորությամբ բայեր

anîn	բերել	ç'êrîn	արածել
danîn	դնել	ger'în	քայլել, զբոսնել
zanîn <sup>42</sup>	իմանալ, գիտենալ	girîn	լացել
nivîsîn	գրել	qelîn	տապակվել
dizîn	գողանալ	k'elîn	եփվել, խաշվել
k'ir'în	զնել	k'enîn	ծիծաղել
bir'în	կտրել	tirsîn	վախենալ
nihêr'în	նայել	e'wîsîn	հաչել
jîyîn	ապրել	weşîn	թափվել
qelişîn	պատռվել	h'ejîn	շարժվել
xebitîn	աշխատել	h'elîn	հավել
şuxulîn	աշխատել, այրվել	hilşîn	քանդվել
fikirîn	մտածել	k'isîn	քաշվել, սողալ
fir'în	թռչել	leqîn	շարժվել, իրար գալ
r'evîn	փախչել	qedîn	իրագործվել, կատարվել
xalifîn	մոլորվել	qetîn	պոկվել
civîn	հավաքվել, կուտակվել, միանալ	r'esîn	ցրվել, տարածվել
reqisîn	պարել	şidîn	ձգվել, ամրանալ
pirsîn	հարցնել	teqîn	պայթել
zewicîn	ամուսնանալ	tewîn	ծալվել
zivir'în	շրջվել, պտտվել	westîn	հոգնել
jimirîn <sup>43</sup>	հաշվել	xapîn	խաբվել
qijilîn	տապակվել	meşîn	շարժվել

<sup>41</sup> Հանդիպում է նաև *karîn* տարբերակը:

<sup>42</sup> Հանդիպում է նաև *zanin* տարբերակը:

<sup>43</sup> Տարածված են նաև *jimartin*, *hejmartin* տարբերակները:

şewitîn	վառվել, այրվել		me'şîn	մաշվել
çinîn	քաղել		veger'în	վերադառնալ
bênijîn	փոշտալ		velezîn	պատկել
hênijîn	նիրհել		vêsîn	անջատվել
qewimîn	պատահել, կատարվել		werger'în	շուր գալ, շրջվել
alîn	խճճվել		peyvîn	խոսել

6. **-an** վերջավորությամբ բայեր

stran	երգել, հունցել
hêran	աղալ
k'olan	փորել
k'utan	ծեծել
r'azan	քնել, ծննդաբերել
pîvan	չափել, հաշվել
p'êçan	փաթաթել
dan <sup>44</sup>	տալ
man <sup>45</sup>	մնալ
zan <sup>46</sup>	ծնել

7. **-ûn** վերջավորությամբ բայեր

bûn <sup>47</sup>	լինել
hebûn	լինել, գոյություն ունենալ
çûn <sup>48</sup>	գնալ

**Վարժություն 1.** Թարգմանել հետյալ նախադասությունները:

1. Hatina te şabûn e. 2. Ez hîvîya hatina wî me. 3. Şikestina darê ne baş e.
4. Êxistina laç'îkê bo jinan şerm bû. 5. Axaftina zar'okê şayî ye.

**Երկխոսություն**

Berfîn: Ev mal e?

Aza: Erê, ev mal e.

Berfîn: Ev mal nû ye?

<sup>44</sup> Տարածված է նաև *dayîn* տարբերակը:

<sup>45</sup> Տարածված է նաև *mayîn* տարբերակը:

<sup>46</sup> Տարածված է նաև *zayîn* տարբերակը:

<sup>47</sup> Տարածված է նաև *bûyîn* տարբերակը:

<sup>48</sup> Տարածված է նաև *çûyîn* տարբերակը:

Aza: Na, ev mal ne t'eze ye, ev mal kevn e.  
 Berfîn: Mal bilind e?  
 Aza: Belê, xanî bilind e.  
 Berfîn: Xanî sê t'ebeq e. Ma sê qat bilind e?  
 Aza: Na, sê qat gelek ne bilind e.  
 Berfîn: Lê çend qat bilind e?  
 Aza: Neh qat bilind e.  
 Berfîn: Erê, neh t'ebeq p'ir' bilind e.  
 Aza: Xanîyê we neh qat e?  
 Berfîn: Belê, xanî neh qat e.  
 Aza: Mala we li k'îjan tebeqê ye?  
 Berfîn: Mala me li qatê pêncemîn e.  
 Aza: Ji mala we bajar dîyar e?  
 Berfîn: Belê, ji p'encerê şêher xuya ye.  
 Aza: Ji p'encerê k'îjan ç'îya xuya ye?  
 Berfîn: Ji pencerê Agrî dîyar e.  
 Aza: Agrî ye'nî Ararat?  
 Berfîn: Erê, Agrî Ararat e.  
 Aza: Ê, de baş e.

Նոր բառեր և արտահայտություններ:

Ez hîvîya te me.	Ես քեզ եմ սպասում:
nû	նոր
xanî	տուն, բնակարան
t'ebeq, qat	հարկ
ma	մի թե
k'îjan?	նր
pêncemîn	հինգերորդ
dîyar, xuya	երևացող, ակնհայտ
şêher	քաղաք
p'encere	պատուհան
ye'nî	այսինքն
de	դե

**Ժողովրդական ասացվածքներ**

H'eta mirinê kirin e.  
 Şuxul bi kirinê, k'er – bi ajotinê.  
 Sîyarbûna k'erê e'ybek e, peyabûn – du e'yb e.  
 Xwestin r'ûr'eşîk e, nedan du r'ûr'eşî ye.

Նոր բառեր

h'eta	մինչև
şuxul	գործ
sîyarbûn	հեծնել
e'yb	թերություն, անպատվություն
peyabûn	իջնել
rûr'eshî	խայտառակություն, անամոթություն



## Դաս 19

### Բայի անցյալի հիմք

Պարզ բայերը ունեն երկու հիմք՝ ներկայի ու անցյալի: Բայի ժամանակաձևերը կազմվում են անցյալի ու ներկայի հիմքերից: Այս երկու հիմքերն էլ միևնույն արմատի տարբերակներն են:

Բայի անցյալի հիմքն ունի կազմության որոշակի օրինաչափություններ, բայց քիչ չեն նաև բացառությունները:

**1. -din, -tin, -stin, -in** վերջավորություններն ունեցող մի շարք բայերի անցյալի հիմքը կազմվում է՝ անորոշ դերբայից **-in** վերջավորությունը հատելով:

ա) **-din** վերջավորությամբ որոշ բայերի անցյալի հիմք

	Անորոշ դերբայ	Բայի անցյալի հիմք
ստանալ, գնել	stendin	stend-
ցանել	çandin	çand-
ուղարկել	Şandin	şand-
կարդալ	xwendin (xwandin, xandin)	xwend- (xwand-; xand)

բ) **-tin** վերջավորությամբ որոշ բայերի անցյալի հիմք

	Անորոշ դերբայ	Բայի անցյալի հիմք
գալ	hatin	hat-
ընկնել, մտնել	k'etin	k'et-
քնել	r'aketin	r'aket-
նստել	r'ûniştin	r'ûnişt-
թափել	r'êtin	r'êt-
նետել, զգել	avîtin (avêtin)	avît- (avêt-)
բռնել	girtin	girt-
ասել	gotin	got-
վարել, քշել	ajotin	ajot-
ընտրել	bijartin	bijart-
թաքցնել	veşartin	veşart-
պատռել	qelaştin	qelaşt-
քանդել, պատռել	bişkavtin	bişkavt-
թխել, տապակել	pe'tin (pehtin, patin)	pe't- (peht-; pat-)
վառել, այրել	sotin	sot-
սպանել	kuştin	kuşt-

լվանալ	şûştin	şûşt-
թողնել	hiştin (hîştin)	hişt- (hîşt-)
հասնել	gihîştin	gihîşt-
հանձնարարել	spartin	spart-
ծածկել	nixamtin	nixamt-
կրծոտել	kotin	kot-
քամել	guvaştin (givaştin)	guvaşt- (givaşt-)
կրթել	dotin	dot-
ծամել	cûtin	cût-
կարել	dirûtin	dirût-
ծծել	mêtin	mêt-

Բացառությունն է *axaftin (axavtin)* (խոսել) բայը, որի անցյալի հիմքն է *axivî- (axêvî-)*:

զ) *-stin* վերջավորությամբ որոշ բայերի անցյալի հիմք

	Անորոշ դերբայ	Բայի անցյալի հիմք
կոտրվել	şikestin	şikest-
փոխել	guhastin	guhast-
ցանկանալ, ուզել	xwestin, xwastin (xastin)	xwest-; xwast- (xast-)
լիզել	alastin	alast-
լսել	bihîstin	bihîst-
միզել	mîstin	mist-
խաղալ	lîstin	list-
կծել	gestin	gest-
խփել, հարվածել, քսել, մտցնել	xistin	xist-
հանել	êxistin	exist-

ը) *-in* վերջավորությամբ որոշ բայերի անցյալի հիմք

	Անորոշ դերբայ	Բայի անցյալի հիմք
տանել	birin	bir-
անել	kirin	kir-
ուտել	xwarin (xwerin, xarin)	xwar- (xwer-; xar-)
մահանալ	mirin	mir-
կարողանալ	karin	kar-

2. *-in* վերջավորությամբ բայերի անցյալի հիմքը կազմվում է՝ բայի վերջին *-n*-ն հատելով:

	Անորոշ դերբայ	Բայի անցյալի հիմք
բերել	anîn	anî-
դնել	danîn	danî-
իմանալ, գիտենալ	zanîn	zan-
գողանալ	dizîn	dizî-
գնել	k'ir'în	k'ir'î-
կտրել	bir'în	bir'î-
նայել	nihêr'în	nihêr'î-
աշխատել	xebitîn	xebitî-
աշխատել	şuxulîn	şuxulî-
մտածել	fikirîn	fikirî-
թռչել	fir'în	fir'î-
փախչել	r'evîn	r'evî- <sup>49</sup>
մոլորվել	xalifîn	xalifî-
պարել	r'eqisîn	r'eqisî-
հարցնել	pirsîn	pirsî-
ամուսնանալ	zewicîn	zewicî-
շրջվել, պտտվել	zivir'în	zivir'î-
հաշվել	jimirîn	jimirî-
տապակվել	qijilîn	qijilî-
վառվել, այրվել	şewitîn	şewit-
քաղել	çinîn	çinî-
գրել	nivîsîn	nivîsî-
նիրհել	hênijîn	hênijî-
փռշտալ	bênijîn	bênijî-
կատարվել, պատահել	qewimîn	qewimî-

ա) *-în* վերջավորությամբ հետևյալ բայերի ներկայի հիմքը կազմվելիս *-în* վերջավորությունը հատվում է, և ավելանում է *-ya* վերջավորությունը.

	Անորոշ դերբայ	Բայի անցյալի հիմք
խճճվել	alîn	alya-
արածել	ç'êrîn	ç'êrya-

<sup>49</sup> Բանահյուսության մեջ հաճախ հանդիպում է նաև *r'evya-* տարբերակը:

հավաքվել, կուտակվել, միանալ	civîn	civya-
քայլել, զբոսնել, շրջել	ger'în	ger'ya- <sup>50</sup>
լացել	girîn	girya-
տապակվել	qelîn	qelya-
եփվել	k'elîn	k'elya-
ծիծաղել	k'enîn	k'enyay- <sup>51</sup>
վախենալ	tirsîn	tirsya-
հաչել	e'wtîn	e'wtyay- <sup>52</sup>
թափվել	weşîn	weşya-
շարժվել	h'ejîn	h'ejya-
հալվել	h'elîn	h'elya-
քաշվել, սողալ	k'isîn	k'isya-
շարժվել, իրար գալ	leqîn	leqya-
իրագործվել, կատարվել	qedîn	qedya-
պոկվել	qetîn	qetya-
ցրվել, տարածվել	r'eşîn	r'eşya-
ձգվել, ամրանալ	şidîn	şidya-
պայթել	t'eqîn	t'eqya-
ծալվել	tewîn	tewya-
հոգնել	westîn	westya-
խաբվել	xapîn	xapya-
մաշվել	me'sîn	me'sya-
վերադառնալ	veger'în	veger'ya-
պառկել	velezîn	velezya-
անջատվել	vêsîn	vêşya-
ցավել	êşîn	êşya-
շուռ գալ, շրջվել	wergerîn	wergerya-

<sup>50</sup> Որոշ խոսվածքներում կիրառվում է նաև *ger'î-* հիմքը:

<sup>51</sup> Որոշ խոսվածքներում կիրառվում է նաև *k'enî-* հիմքը:

<sup>52</sup> Կիրառական է նաև *e'wtî-* տարբերակը:

3. *-an* և *-ûn* վերջավորություններով բայերի անցյալի հիմքը կազմվում է՝ անորոշ դերբայի *-n*-ն հատելով.

	Անորոշ դերբայ	Բայի անցյալի հիմք
երգել, հունցել	stran	stra-
աղալ	hêran	hêra-
փորել	k'olan	k'ola-
ծեծել	k'utan	k'uta-
քնել, ծննդաբերել	r'azan	r'aza-
փաթաթել	pêçan	pêça-
տալ	dan (dayîn)	da-
մնալ	man (mayîn)	ma-
ծնել	zan (zayîn)	za-
լինել	bûn	bû-
լինել, գոյություն ունենալ	hebûn	hebû-
զնալ	çûn (çûyîn)	çû-

### Werdek

Kewê r'ojekê çû nava kewşên. R'ex cewekê r'a derbaz bû. Dîna xwe dayê, cûcikeke werdeka nava qûmê da dike qibeqib.

Kewê cûcika werdekê hilda, anî malê. Lingê cûcikê ji cî derk'etibû. Kewê lingê wê girêda, cebirand, cûcik mezin kir û bir ber avê, berda.

T'êşî

T'êşîya te ji dara darê,

Lê dirêse pirça karê.

Teşîya te ji dara merxê,

Lê dirêse liva berxê.

T'êşîya te ji dara çamê,

Xûşkê canê bêrîvanê.

Նոր բառեր և արտահայտություններ

k'ewşen	ցանքատարածություն
cew	սառու
dîna xwe dan	դիտել, նայել, հայացք նետել

qûm	ավագ
Ew cî derk'etibû.	Այն տեղից դուրս էր եկել:
cebirandin	տեղը գցել, միակցել (ոսկորը)
Wî girêda.	Նա կապեց:
t'esî	իլիկ
Ew dirêse.	Նա մախում է:
dara merxê	եղևնի
dara çamê	սոճի

## Դաս 20

### Անցողական և անանցողական բայեր

Ըստ ուղիղ խնդիր ընդունելու հատկության՝ բայերը լինում են անցողական և անանցողական:

1. Անանցողական բայերը ուղիղ խնդիր չեն պահանջում:

Ստորև ներկայացվում են մի շարք անանցողական բայեր և դրանց անցյալի հիմքերը:

	Անորոշ դերբայ	Բայի անցյալի հիմք
գալ	hatin	hat-
գնալ	çûn (çûyîn)	çû-
լինել, դառնալ	bûn	bû-
ընկնել, մտնել	k'etin	k'et-
կանգնել, կանգ առնել	r'awestin, r'awestîn	r'awestya-
մնալ	man (mayîn)	ma-
վազել, փախչել	r'evîn, bezîn	r'evî-; bezî-
նստել	r'ûniştin	r'ûnişt-
ամուսնանալ	zewicîn	zewicî-
վախենալ	tirsîn	tirsya-
շարժվել, իրար գալ	leqîn	leqya-
շարժվել	h'ejîn	h'ejya-
շարժվել	meşîn	meşya-
հալվել	me'sîn	me'sya-
կանգնել, կանգ առնել	sekinîn	sekinî-
քնել	r'azan	r'aza-
քնել	r'aketin	r'aket-
նիքիել	hênijîn	hênijî-
հաչել	e'wîn	e'wtya-
հազալ	k'uxîn	k'uxya-
փռշտալ	bênijîn	bênijî-
շրջվել, պտտվել	zivir'în	zivir'î-
աշխատել	xebitîn	xebitî-
թռչել	fir'în	fir'î-

նեղանալ, խռովել	xeyîdîn	xeyîdî-
կոտրվել	şikestin	şikest-
ծիծաղել	k'enîn	k'enyâ-
քայլել, զբոսնել, շրջել	ger'în	ger'ya-
լացել	girîn	giryâ-
եփվել	k'elîn	k'elyâ-
վախենալ	tirsîn	tirsyâ-
հոգնել	westîn	westyâ-
խաբվել	xapîn	xapyâ-
պառկել	velezîn	velezÿâ-

2. Անցողական բայերը պահանջում են ուղիղ խնդիր: Անցողական բայերի արտահայտած գործողությունն անցնում է գործողությունն իր վրա կրող առարկային՝ ուղիղ խնդրին:

Ստորև ներկայացվում են մի շարք անցողական բայեր և դրանց անցյալի հիմքերը:

	Անորոշ դերբայ	Բայի անցյալի հիմք
կարդալ	xwendin (xwandin, xandin)	xwend- (xwand-; xand-)
անել	kirin	kir-
զնել	k'ir'în	k'ir'î-
բերել	anîn	anî-
տանել	birin	bir-
տալ	dan (dayîn)	da-
ուտել	xwarin (xarin)	xwar- (xar-)
խմել	vexwarin (vexarin)	vexwar- (vexar-)
տեսնել	dîtin	dît-
պատրաստել, կառուցել	çêkirin	çêkir-

**Նախադասություններ և երկխոսություններ**

Cûdî ji çolê kar anî. Kar ç'ûk e. R'engê karikê r'eş e.

Gulê mî anî. Gulê mî dot, şîr hilda.

Cûdî çû û çend derdan av anî.

Gulê pirsî: “Gelo ev av ji k'u tê?”

Cûdî got: “Ev av ji kanîyê ye.”

K'erem çû deştê û gul anî. K'erem ew gul da Çîlê.



Çîlê go: “K’erem, ev gul ji k’u derê ye?”

K’erem go: “Ev gul ji deştê ye.”

### Her tişt wextê xwe da xweş e

K’ubarê nizanibû çawa nên bipêje. Carekê çawa bû, wê xwest nên bipêje.

K’ubarê ji hevalên xwe pirsî çawa nên bipêje. Paşê K’ubarê bi zor û cefa hevîr stra û nan pe’t.

Gava nan pe’t, xilas kir, xwe r’a got: “Xwezil min zûda wiha nan bipe’ta”.

Dîya wê bihîst û got: “Erê, lawo, her tişt wextê xwe da xweş e.”

### Նոր բառեր և արտահայտություններ

Wê dot.	Նա կրեց:
Wî hilda.	Նա վերցրեց:
anî	բերեց
derdan	աման, անոթ
Wî (wê) nizanibû.	Նա չգիտեր:
çawa	ինչպես
nên	հացի, հացը
petin	թխել
bipêje	թխի
xwest	ցանկացավ
carekê	մի անգամ
bi zor û cefa	մեծ դժվարությամբ
hevîr	խմոր
stran	հունցել
Wê hevîr stra.	Նա խմոր հունցեց:
xwezil	երանի
zûda	վաղուց
wiha	այսպես
Ger min bipe’ta.	Եթե ես թխեի:

### Հավելված

- Քրդերենի կուրմանջի բարբառում առանձնացվում է բայի երեք եղանակ՝ սահմանական, հրամայական, ըղձական:

Սահմանական եղանակը ցույց է տալիս ստույգ կատարված, կատարվող, ընթացքի մեջ գտնվող կամ կատարվելիք գործողություն: **Սահմանա-**

կան եղանակն ունի հետևյալ ժամանակաձևերը՝ անցյալ կատարյալ, անկատար անցյալ, ապակատար ներկա, ապակատար անցյալ, անկատար ներկա, վաղակատար ներկա և վաղակատար անցյալ:

**Հրամայական եղանակն ունի մեկ *բայաձև*:**

**Ըղձական եղանակն ունի երկու ժամանակաձև՝ ըղձական ապառնի և ըղձական անցյալ:**

Սրանցից գատ՝ կան նաև երկրորդական բաղադրյալ ժամանակաձևեր (hatibim, բոց.՝ *եկած լինես*, hatibûma, բոց.՝ *եկած լինեի*)

Քրդերենի կուրմանջի բարբառում **բայերն ըստ կազմության** լինում են *պարզ ու բաղադրյալ*: Պարզ բայերը կազմվում են մեկ բաղադրիչից (օրինակ՝ *kirin, xwarin, mirin, xwestin*), բաղադրյալ բայերը՝ երկու և ավելի բաղադրիչներից (օրինակ՝ *vekirin, daxistin, bilind bûn, paş ketin, sist kirin*): Բաղադրյալ բայերը լինում են երեք տեսակ՝ *նախածանցավոր, նախդրավոր և բարդ*:

## Դաս 21

### Անցյալ կատարյալ ժամանակաձև (անանցողական բայեր)

Անցյալ կատարյալ ժամանակաձևը ցույց է տալիս անցյալում կատարված ու ավարտված գործողություն:

Անանցողական բայերի խոնարհման ժամանակ ենթական ուղիղ հոլովաձևով է, բայի անցյալի հիմքին ավելանում են **երկրորդ խմբի** դիմային վերջավորությունները:

Երկրորդ խմբի դիմային վերջավորություններն են.

	Եզակի	Հոգնակի
I դեմք	-im	-in
II դեմք	-î(y)	-in
III դեմք	-	-in

**Hatin** (անցյալի հիմքը՝ **hat-**) անանցողական բայը խոնարհվում է հետևյալ կերպ.

I դեմք	Ez hatim.	Ես եկա:
II դեմք	Tu hatî.	Դու եկար:
III դեմք	Ew hat.	Նա եկավ:

I դեմք	Em hatin.	Մենք եկանք:
II դեմք	Hûn hatin.	Դուք եկաք:
III դեմք	Ew hatin.	Նրանք եկան:

Ժխտականը կազմվում է՝ խոնարհված բային ավելացնելով **ne-** ժխտական նախամասնիկը:

I դեմք	Ez <b>nehatim.</b>	Ես չեկա:
II դեմք	Tu <b>nehatî.</b>	Դու չեկար:
III դեմք	Ew <b>nehat.</b>	Նա չեկավ:

I դեմք	Em <b>nehatin.</b>	Մենք չեկանք:
II դեմք	Hûn <b>nehatin.</b>	Դուք չեկաք:
III դեմք	Ew <b>nehatin.</b>	Նրանք չեկան:

Եթե անանցողական բայի անցյալի հիմքը վերջանում է *a*-ով կամ *â*-ով, ապա եզակի երկրորդ դեմքում բայի հիմքից հետո ավելանում է *y* կիսաձայնը:

*Man* (անցյալի հիմքը՝ **ma-**) անանցողական բայը խոնարհվում է հետևյալ կերպ.

I դեմք	Ez mam.	Ես մնացի:
II դեմք	Tu may(î).	Դու մնացիր:
III դեմք	Ew ma.	Նա մնաց:

I դեմք	Em man.	Մենք մնացինք:
II դեմք	Hûn man.	Դուք մնացիք:
III դեմք	Ew man.	Նրանք մնացին:

Ժխտական խոնարհում

I դեմք	Ez <b>nemam</b> .	Ես չ մնացի:
II դեմք	Tu <b>nemay(î)</b> .	Դու չ մնացիր:
III դեմք	Ew <b>nema</b> .	Նա չ մնաց:

I դեմք	Em <b>neman</b> .	Մենք չ մնացինք:
II դեմք	Hûn <b>neman</b> .	Դուք չ մնացիք:
III դեմք	Ew <b>neman</b> .	Նրանք չ մնացին:

*Çân* (անցյալի հիմքը՝ **çû-**) անանցողական բայը խոնարհվում է հետևյալ կերպ.

I դեմք	Ez çûm.	Ես գնացի:
II դեմք	Tu çûy(î).	Դու գնացիր:
III դեմք	Ew çû.	Նա գնաց:

I դեմք	Em çûn.	Մենք գնացինք:
II դեմք	Hûn çûn.	Դուք գնացիք:
III դեմք	Ew çûn.	Նրանք գնացին:

Ժխտական խոնարհում

I դեմք	Ez <b>neçûm</b> .	Ես չգնացի:
II դեմք	Tu <b>neçûy(î)</b> .	Դու չգնացիր:
III դեմք	Ew <b>neçû</b> .	Նա չգնաց:

I դեմք	Em <b>neçûn.</b>	Մենք չգնացինք:
II դեմք	Hûn <b>neçûn.</b>	Դուք չգնացիք:
III դեմք	Ew <b>neçûn.</b>	Նրանք չգնացին:

Եթե խոնարհվող անանցողական բայի անցյալի հիմքը վերջանում է *î*-ով, ապա երկրորդ խմբի դիմային վերջավորությունների *i*-ն սղվում է, և որևէ դեմքի համար բայի անցյալի հիմքից հետո *y* կիսաաձայն չի կիրառվում:

*Xebitîn* (անցյալի հիմքը՝ **xebitî-**) անանցողական բայը խոնարհվում է հետևյալ կերպ.

I դեմք	Ez xebitîm.	Ես աշխատեցի:
II դեմք	Tu xebitî(y).	Դու աշխատեցիր:
III դեմք	Ew xebitî.	Նա աշխատեց:

I դեմք	Em xebitîn.	Մենք աշխատեցինք:
II դեմք	Hûn xebitîn.	Դուք աշխատեցիք:
III դեմք	Ew xebitîn.	Նրանք աշխատեցին:

#### Ժխտական խոնարհում

I դեմք	Ez <b>nexebitîm.</b>	Ես չ աշխատեցի:
II դեմք	Tu <b>nexebitî.</b>	Դու չ աշխատեցիր:
III դեմք	Ew <b>nexebitî.</b>	Նա չ աշխատեց:

I դեմք	Em <b>nexebitîn.</b>	Մենք չ աշխատեցինք:
II դեմք	Hûn <b>nexebitîn.</b>	Դուք չ աշխատեցիք:
III դեմք	Ew <b>nexebitîn.</b>	Նրանք չ աշխատեցին:

#### Օրինակ՝

Piştî şerekî dirêj û giran dijmin ji cîyê xwe leqya û pêşda hat.	Երկար ու ծանր կռվից հետո թշնամին տեղից շարժվեց և առաջ եկավ:
--	---

Անանցողական բայերը անցյալ կատարյալ ժամանակաձևով կիրառելիս ենթական, որպես կանոն, չի ստանում հոգնակերտ: Ենթակայի հոգնակիությունն արտահայտվում է բային միացող դիմային վերջավորությամբ.

Mêr <b>hatin.</b>	Տղամարդիկ եկան:
Zar'ok <b>nehatin.</b>	Երեխաները չեկան:
Mêr <b>çûn.</b>	Տղամարդիկ գնացին:
Keç' <b>hatin</b>	Աղջիկները եկան:

Անանցողական բայերը անցյալ կատարյալ ժամանակաձևով խոնարհելիս տեղի պարագան դրվում են թեք հոլովով.

Ez çûm mek' tebê.	Ես գնացի դպրոց:
Ez çûm Yêrêvanê.	Ես գնացի Երևան:
Hûn ji mek' tebê derk' etin.	Դուք դպրոցից դուրս եկաք:
Ew ji Yêrêvanê çûn Gyûmrîyê.	Նրանք Երևանից գնացին Գյումրի:

Եթե գործողությունն առնչվում է մի տեղից մեկ այլ վայր շարժվելուն, ապա խոնարհված բային կարող է ավելանալ *-e* վերջավորությունը: Այս տարբերակն առավելապես կիրառվում է ժողովրդախոսակցական լեզվում.

Ez çûm gund.	Ez çûme gund.	Ես գնացի գյուղ:
Ez hatim xebatê.	Ez hatime xebatê.	Ես եկա աշխատանքի:
Şayî ket dilê me.	Şayî kete dilê me.	Մեր սիրտն ուրախությամբ լցվեց:
Ez ketim ser e'rdê.	Ez ketime ser erdê.	Ես ընկա գետնին:
Ez r'ûniştım ser k'ursîyê.	Ez rûniştım ser kursîyê.	Ես նստեցի աթոռին:
Keç'ik gihîşt gund.	Keç'ik gihîşte gund.	Աղջիկը գյուղ հասավ:

### Navê xalo

Xortek r'astî kalekî hat û got:

– Xalo, nave te bi xêr?

– Navê min H'eso ye.

Xort dîsa pirsî:

– Xalê Beso, lê navê bavê te çî ye?

– Erê, – got, – te navê min ze'f rast got, wekî niha jî navê bavê min dipirsî?

**Վարժություն 1.** Պատասխանել հետևյալ հարցերին:

1. K'î rastî kalo hat? 2. Wî ji kalo çî pirsî? 3. Kalo çî gote wî? 4. Xort çî şaş kir? 5. Kalo çî bersîv da?

Նոր բառեր և արտահայտություններ

rastî <i>kese</i> kî hatin	ինչ-որ մեկին հանդիպել
rastî <i>tiş</i> teki hatin	ինչ-որ բանի հանդիպել

Wî pirsî.	Նա հարցրեց:
dîsa	նորից
şaş kirin	շփոթել
bersîv	պատասխան
Wî bersîv da.	Նա պատասխանեց:
Te got.	Դու ասացիր:
wekî	որ
niha	հիմա
Tu dipirsî.	Դու հարցնում ես:

**Վարժություն 2.** Թարգմանել հետևյալ նախադասությունները:

1. Tu hatî h'eyatê.
2. Ez çûm êş.
3. Ez çûm malê.
4. Tu ji êş derk'etî.
5. Hûn ji malê çûn.
6. Ez çûm Sêvanê.
7. Tu ji Sêvanê hatî.

### **Երկխոսություն**

Du hevalan hev dîtın:

- R'ojbaş, baş î?
- R'ojbaş, baş im. Çi heye, çi tune? Sax î, silamet î?
- Yek ji hevalan pirsî:
- Bal te cixare heye?
- Çi heye?
- Cixare, cixare... Baçik.
- Erê.
- K'u ye?
- Hundur' bêrika min da ye!
- K'ibrît heye?
- K'ibrît t'une, çaxmax heye.
- Lê çaxmax k'u ye?
- Çaxmax jî destê min da ye.
- Ji k'erema xwe, cixare bide min.
- K'eremke!
- Spas!
- Spasî xweş!
- Hevalên din k'u ne?
- Hevalên me çûn firoşgehê, çi te r'a lazim e?
- Ji min r'e baçik lazim e.
- Destê te da pere heye?
- Erê, heye.
- K'u ye?

- Bêrîka min da ye.
- K’anê?
- Têda ye.

Նոր բառեր և արտահայտություններ

Wan hev dît.	Նրանք իրար տեսան:
cixare, baçik	ծխախոտ
bêrîk	գրպան
k’ibrît	լուցկի
çaxmax	կրակվառիչ
spasî xweş (spas xweş, spas xoş)	Խնդրեմ (այսպես պատասխանում են շնորհակալություն հայտնողին):
pere, dirav	փող
k’a, k’anê	ապա, ո՞ր է

**Վարժություն 3.** Անցյալ կատարյալ ժամանակաձևով խոնարհել հետևյալ բայերն ու կազմել նախադասություններ:

	Անորոշ դերբայ	Բայի անցյալի հիմք
զնալ	çûn (çûyîn)	çû-
լինել, դառնալ	bûn	bû-
ընկնել, մտնել	k’etin	k’et-
վազել, փախչել	r’evîn, bezîn	r’evî-; bezî-
ամուսնանալ	zewicîn	zewicî-
փռշտալ	bêniğîn	bêniğî-
շրջվել, պտտվել	zivir’în	zivir’î-
աշխատել	xebitîn	xebitî-
թռչել	fir’în	fir’î-
քայլել, զբոսնել, շրջել	ger’în	ger’ya-
կոտրվել	şikestin	şikest-
լացել	girîn	giry-
եփվել	k’elîn	k’ely-
ծիծաղել	k’enîn	k’enya-
հաչել	e’wtîn	e’wty-
հոգնել	westîn	westya-
խաբվել	xapîn	xapya-
հազալ	k’uxîn	k’uxya-



վախենալ	tirsîn	tirsya-
շարժվել, ցնցվել	h'ejîn	h'ejya-
հավվել	me'sîn	me'sya-

### Տêr û mişk

Lana şêr û qulika mişk r'ex hev bûn. Şêr usa qure-qure diçû-dihat, binê p'îyê xwe nedinhêr'î. R'ojekê, wextê şêr hat ku derbazbe, her'e, mişk k'ete nava lepê wî. Şêr xwest mişk bihincir'îne. Mişk got:

– Min berde, aza bike, ezê r'ojekê kêrî te bêm.

Wê demê şêr k'enya, sist bû, mişk ji nav lepê wî derk'et, r'evî.

Çendekî şûnda nêzîkî qulka mişk, dengê şêr hat. Mişk tirsya, serê xwe qulikê va derxist û nihêr'î. Dît şêr nav dava nêç'îrvan e. Mişk pirsî:

– Şêro, birako, çî bûye?

Şêr bersîv da:

– Ez ketim davê.

Mişk got:

– Qe belengaz nebe, ezê te xilaz bikim.

Mişk werisê davê bi diranê xwe qut-qutî kir. Şêr nav davê va derk'et, aza bû.

Piştî wê şêr her r'oj silav dida wî mişkî.

Նոր բառեր և արտահայտություններ

lane	բույն
usa	այսպես, այնպես
qulik	ծակ
mişk	մուկ
r'ex	կից, մոտ
qure	գոռոզ
diçû-dihat	գնում-գալիս էր
Wî nedinhêr'î.	Նա չէր նայում:
Ew derbazbe.	Նա անցնի:
Her'e!	Գնա՛:
lep	թաթ
Ew dixwaze bihincir'îne.	Նա ուզում է ճզմել:
Min aza bike!	Ազատի՛ր ինձ:
Min berde!	Ինձ բա՛ց թող:
kêrî kesekî hatin	ինչ-որ մեկին օգտակար լինել
Ezê kêrî te bêm.	Ես քեզ օգտակար կլինեմ:

dav, dave	թակարդ
belengaz	խեղճ
Belengaz nebe!	Մի՛ խեղճացիր:
weris	պարան
qut-qutî kirin	կտոր-կտոր անել
Ew derk'et.	Նա դուրս եկավ:
Ew aza bû.	Նա ազատվեց:

**Վարժություն 4.** Թարգմանել հետևյալ նախադասությունները:

1. Ես խաբվեցի: 2. Դու հանկարծ հագացիր: 3. Հարևաններս լաց եղան:
4. Սիրտս հավեց: 5. Մեքենան շարժվեց և գնաց: 6. Նա ամուսնացավ և հեռացավ: 7. Ես ծիծաղեցի ու նստեցի: 8. Նա տեղում նիրհեց ու ընկավ:
9. Ճաշը եփվեց ու թափվեց:

***Ժողովրդական ասացվածքներ***

H'eta bûk xemilî, dewat betilî.

Ber baranê r'evîm, bin zîpikê k'etim.

Ez r'ê revyam, r'ê li min revya.

T'ifing hat, mêranî hilat.

Նոր բառեր

zîpik	կարկուտ
mêranî	քաջություն
xemilîn	զարդարվել

## Դաս 22

### Ձևի մակրայներ

Ձևի մակրայները ցույց են տալիս գործողության կատարման ձևը.

hêdî, hêdîka	կամաց, դանդաղորեն
hêdî-hêdî	կամաց-կամաց
hindik-hindik, kê-m-kê-m	քիչ-քիչ
zû	շուտ, արագ
zû-zû	շուտ-շուտ, արագ-արագ
lez, bi lez, leze-lez	շտապ, հապշտապ
e'cele, acîl, fûfî	անհապաղ
bêsekinandin	անդադար
bi aramî	հանդարտորեն
bi r'aetî, bi r'eh'etî	հանգստորեն, հանդարտորեն
bi fesal	հարմար կերպով, զգուշորեն
r'everev, r'eve-r'ev, bezebez, beze-bez	վազելվազ
çapik-çapik	ճարակորեն
çeleng, bi çeleng	արագ
bi p'akî, bi qencî	լավ ձևով
bi xêrxwazî	բարյացակամորեն
bi heqî	իրապես, արդարացիորեն
bi xirabî	վատ ձևով
r'asterast, r'ast bi rast	անմիջականորեն, ուղիղ կերպով
b'i rastî	ճշմարտացիորեն
bi dilsozî	հավատարմորեն, անկեղծորեն
bi taybetî, îlahî	հատկապես

Օրինակներ՝

Tu hêdî-hêdî hatî.	Դու կամաց-կամաց եկար:
Ez lez ketim û zû-zû hatim.	Ես շտապեցի և արագ եկա:
Mem bi r'eh'etî dipeyive.	Մամը հանդարտորեն խոսում է:
Cînarê te bêsekinandin diaxêve.	Քո հարևանն անդադար խոսում է:
R'ojda û Nalîn bi lez dihatin.	Ռոժդան ու Նալինը շտապ գալիս էին:

t'evhev, t'evlihev	այլալված
şerpez, şerpeze, p'erîşan	այլալված, շփոթված
berebere, hin bi hin	աստիճանաբար, հետզհետե
destxweda, demûdest, demldest	անմիջապես, իսկույն,
cî da, pêr'a-pêr'a, tavilê	անմիջապես, իսկույն
carekêra, carekêva, derbekêra	միանգամից
bi nermî	մեղմորեն
nişkêva, ji nişkê ve	հանկարծակի
bi t'esadifî, bi helketinî, bi rasthatinî	պատահաբար
ancax, ancaxkî	հազիվ, մի կերպ
ancax-ancax	հազիվհազ
resmî, bi resmî	պաշտոնապես
bi zor, zore-zor, zorê	բռնությամբ (բռց.՝ <i>նւժուկ, զոռուկ</i> )
bi kurtî, bi kinahî, bi kurtayî	համառոտ

### Օրինակներ՝

Ew çir'a tevlihev bû?	Նա ինչո՞ւ այլալվեց:
Mêvan nişkêva r'abûn, çûn.	Հյուրերը հանկարծ վեր կացան, գնացին:
Me ancax hev dît.	Մենք հազիվ իրար գտանք:
Ew destxweda r'abû û ji odeyê derk'et.	Նա անմիջապես վեր կացավ ու սենյակից դուրս եկավ:

bi t'emamî, pêva	ամբողջովին, լիովին
serdap'ê	ամբողջովին, լիովին (բռց.՝ <i>նսքից գլուխ</i> )
giranî, bi giranî	լրջորեն, ծանրորեն
cot bi cot	գույգ-գույգ
eşkere, bi eşkerayî, bi aşkere, vekirî, berbiç'e'v, e'yan	բացահայտորեն, հստակորեն
bi ferihî, bi saffî	հստակորեն
bi biratî	եղբայրաբար
bi dostî, bi hevaltî	ընկերաբար, բարեկամաբար
p'îya, bi pêya	ոտքով, հոտնկայս
t'enê, bi t'enê	մենակ
t'ik t'enê, tek t'enê, t'ekane	մեն-մենակ
yekoyeko, yeko-yeko	մեկիկ-մեկիկ
bi mêrxasî	քաջաբար

dizîkava, dize-diz, teletel	գաղտնապես, գաղտնի, ծածուկ
qest, qestana, qestanî, e'ksana	միտումնավոր, դիտավորյալ
bi h'îşyarî, bi fehmdarî, bi zanebûn	գիտակցաբար

### Օրինակներ՝

Zar'ok serdap'ê şil bû.	Երեխան ամբողջովին թրջվեց:
Hesen yekoyeko gul dan keç'ikan.	Հասանը ծաղիկները մեկիկ-մեկիկ տվեց աղջիկներին:
Niha ev keç' bi t'enê dixebite.	Հիմա այդ աղջիկը մենակ է աշխատում:
Tu qest t'evî me nehatî.	Դու դիտավորյալ մեզ հետ չեկար:

### R'ûvî û q'uling

Carekê r'ûvî û quling bûn cînarên hev. R'okê r'ûvî gazî quling kir û derdana fire da xwarin danî ber.

Quling kir-nekir, nikaribû pê nukulê xwe tişt bixwe. R'ûvî r'abû, xwar û alîkî sekinî.

Careke dinê quling gazî r'ûvî kir û xwarin pê cêr'ê danî ber. R'ûvî kir-nekir nikaribû bixwe. Derdan teng bû, serê r'ûvî jî mezin bû. Quling rabû, xwar, alîkî sekinî.

Dû kirina usa r'a r'ûvî û quling îdî hev r'a cînartî nekirin.

Նոր բառեր և արտահայտություններ

r'ûvî	աղվես
q'uling	կռունկ
Wî nikaribû.	Նա չկարողացավ:
nukul	կտուց
bixwe	ուտի
bixwara	ուտեր
gazî kirin	կանչել
cînartî	հարևանություն

### Երկխոսություն

- Te xebat çawa kir?
- Min xebat awa (ha) kir.

- Ew çawa hat?
- Ew hêdî-hêdî hat?
  
- Ew çawa hat?
- Ew çapik hat.
  
- Ew çawa çû?
- Ew çeleng çû!
  
- Te çawa xebata xwe kir?
- Min xebata xwe baş kir.
  
- Simo çawa hat?
- Simo bi pêya (pîya) hat.
  
- Te çawa xeber da?
- Min nizm xeber da.

**Վարժություն 1.** Թարգմանել հետևյալ նախադասությունները:

1. Nado zû rabû, çû ser xebata xwe.
2. Beko rasterast çû zevîyê.
3. Bersîva min der'eng hat.
4. Ew nermenerm ket otaxê.
5. Te hêrs min ra xeber da.
6. Şagirt cot bi cot rê da çûn.
7. Wana bilind kilam stra.
8. Em berebere berbi tavê çûn.
9. Ez hêdî-hêdî çûm bazarê.
10. Şagirt hemû hatin dersxanê.
11. Pîrê hêdî-hêdî vegerya mal.
12. Birê min duhu gelek der'eng hate malê.
13. Mêrik carekîva karê xwe xilas kir.
14. Armên nişkêva cîyê xwe va rabû.
15. Ew şuxul usa çetin e.
16. Çawa min got usa qewimî.
17. Çawa ew hat, usa jî çû.
18. Ew teyr bilind fir'î û k'ûr k'et.

**Li mixazeya listokan**

Ûsib û dayka wî çûn mixazeyê.

Ûsib got: “Dayê, min r’a vê e’rebeyê bik’ir’e” Dayka Ûsib pirsî: “K’îjan e’rebeyê, hela nîşan bide”. Ûsib got: “Mêze bike, ev e’rebeya sor. Ev e’erebe r’ind e. Binhêr’e, t’ekên e’erebê p’ir’ gir in.” Dayka Ûsib got: “Na, kur’ê min, ev nabe. E’rebeyên te malê da gelek in. Neh e’rebeyên te hene, lawo. Tişteki din biger’e.” Ûsib gur’a dayîkê kir, tiştekinê dît. Dayîka Ûsib jêr’a duçerxe k’ir’î.

Նոր բառեր և արտահայտություններ

Bik'ir'e!	Գնի՛ր:
Nîşan bide!	Ցո՛ւյց տուր:
Mêze bike!	Նայի՛ր:
Binhêr'e!	Նայի՛ր:
gir	խոշոր
Biger'e!	Փնտրի՛ր:
Wî gur'a dayîkê kir.	Նա լսեց մայրիկին:

## Դաս 23

### Անցյալ կատարյալ ժամանակաձև (անցողական բայեր)

Քրդերենի կուրմանջի բարբառում անցողական բայերի անցյալ կատարյալը կազմելու համար կիրառվում է բայի անցյալի հիմքը առանց որևէ դիմային վերջավորության: Նախադասության ենթական թեք հոլովաձևով է. թեք հոլովով են դրվում նաև որպես ենթակա հանդես եկող անձնական դերանունները:

*Dîtin* (անցյալի հիմքը **dît-**) անցողական բայը խոնարհվում է հետևյալ կերպ.

I դեմք	Min dît.	Ես տեսա:
II դեմք	Te dît.	Դու տեսար:
III դեմք	Wî/wê dît.	Նա տեսավ:

I դեմք	Me dît.	Մենք տեսանք:
II դեմք	We dît.	Դուք տեսար:
III դեմք	Wan dît.	Նրանք տեսան:

Ժխտականը կազմվում է՝ խոնարհված բային ավելացնելով *ne-* ժխտական նախամասնիկը.

I դեմք	Min nedît.	Ես չտեսա:
II դեմք	Te nedît.	Դու չտեսար:
III դեմք	Wî/wê nedît.	Նա չտեսավ:

I դեմք	Me nedît.	Մենք չտեսանք:
II դեմք	We nedît.	Դուք չտեսար:
III դեմք	Wan nedît.	Նրանք չտեսան:

Օրինակ՝

Ez nehatim, min nedît.	Ես չեկա, ես չտեսա:
------------------------	--------------------

ա) Անցողական բայերը անցյալ կատարյալ ժամանակաձևով խոնարհելու ժամանակ իզական սեռի ենթական թեք հոլովաձևով է և ստանում է *-ê* ցուցիչը (արական սեռի ենթական նույնպես թեք հոլովաձևով է, բայց որևէ փոփոխություն չի կրում):



Hasmikê pirtûk dît <sup>53</sup> .	Հասմիկը գիրքը տեսավ:
Hasmikê name nivîsî.	Հասմիկը նամակ գրեց:
Aram pirtûka xwe dît.	Արամը իր գիրքը տեսավ:
Aram ne'me nivîsî.	Արամը նամակ գրեց:
Keç'ikê av anî.	Աղջիկը ջուր բերեց:
Kur'ik av anî.	Տղան ջուր բերեց:

բ) Անցողական բայերը անցյալ կատարյալ ժամանակաձևով խոնարհելիս հոգնակի ենթական ստանում է **-a** կամ **-an** հոգնակերտ:

Mêran kevir bir'î.	Տղամարդիկ սալաքարը կտրեցին:
Jinan av anî.	Կանայք ջուր բերեցին:
Keç'an nan pe't.	Աղջիկները հաց թխեցին:
Rencberan xwelî veda.	Հողագործները հողը փորեցին:
Zar'oka dersên xwe nekirin.	Երեխաները իրենց դասերը չարեցին:

գ) Անցողական բայերը անցյալ կատարյալ ժամանակաձևով խոնարհելիս ուղիղ խնդիրը ուղիղ հոլովաձևով է:

Min nan xwar.	Ես հաց կերա:
Min Aanahît dît.	Ես Անահիտին տեսա:
Min mekteb vekir.	Ես դպրոց բացեցի:
Me Yêrêvan çêkir.	Մենք Երևանը կառուցեցինք:
Cano bizin dot.	Ջանոն այծը կթեց:

դ) Հանգման անուղղակի խնդիրը, անջատման անուղղակի խնդիրը, ինչպես նաև տեղի պարագան դրվում են թեք հոլովով.

Min pirtûk da Anahîtê.	Ես գիրքը տվեցի Անահիտին:
Min ji Aanahîtê av xwest.	Ես Անահիտից ջուր ուզեցի:
Aram ji bazarê tişt kirî.	Արամը շուկայից բան գնեց:
We ç'îyê va berf anî.	Դուք սարից ձյուն բերեցիք:
Min pirtûk da Aanahîtê.	Ես գիրքը տվեցի Անահիտին:
Min ji Aanahîtê pirtûk hilda.	Ես Անահիտից գիրք վերցրի:

ե) Անցողական բայերը անցյալ կատարյալ ժամանակաձևով խոնարհելու ժամանակ, եթե հանգման ու անջատման անուղղակի խնդիրները հոգնակի թվով են, ապա ստանում են **-a** կամ **-an** հոգնակերտ.

<sup>53</sup> Ներկայում քրդերենի կուրմանջի բարբառում իգական սեռի ենթական թեք հոլովով կիրառելը մասամբ վերանալու հակումներ է դրսևորում, օրինակ *Eyşanê nan xwar* (*Eyşan nan xwar*):

Mamoste kitêb da xwendekaran.	Ուսուցիչը գիրքը տվեց ուսանողներին:
Mamoste ji xwendekaran kitêb hilda.	Ուսուցիչը ուսանողներից գիրք վերցրեց:

զ) Արդեն նշվել է, որ անցողական բայերը անցյալ կատարյալ ժամանակաձևով խոնարհվելիս չեն ստանում դիմային վերջավորություններ: Պետք է նշել, սակայն, որ քրդերենի կուրմանջի բարբառում առկա է *էրզաստիվ կառույց*, որը նշանակում է, որ անցողական բայը կարող է ստանալ ուղիղ խնդիր լրացման վերջավորություն:

Min <b>tu</b> dîtî.	Ես քեզ տեսա:
Min <b>hûn</b> dîtî.	Ես ձեզ տեսա:
Min <b>ew</b> dîtî.	Ես նրանց տեսա:
Te ez girtî.	Դու ինձ բռնեցիր:
Min hûn girtî.	Ես ձեզ բռնեցի:
Keç'ikê ez dîtî.	Աղջիկն ինձ տեսավ:
Min sêv xwarî.	Ես խնձոր կերա:
Min zar'okên cînanan dîtî.	Ես հարևանների երեխաներին տեսա:

է) Եթե գործողությունը հանգում է որևէ առարկայի կամ անձի (միայն եզակի III դեմքով արտահայտված), որը զեղչվում է, ապա խոնարհված բայը դրվում է նախադասության վերջում և ստանում է *-ê* էնկլիտիկ դերանունը: Էնկլիտիկ դերանունը կիրառվում է եզակի երրորդ դեմքի զեղչված անձնական դերանվան փոխարեն:

Min av da wî/wê.	Ես նրան ջուր տվեցի:
Min av dayê.	Ես ջուր տվեցի [նրան, ինչ-որ մեկին]:
Min tişt got wî/wê.	Ես բան ասացի նրան:
Min tişt gotê.	Ես բան ասացի [նրան, ինչ-որ մեկին]:
Min got wî/wê: “Dersê bixûne”.	Ես նրան ասացի. «Դասը կարդա՛ »:
Min gotê: “Dersê bixûne”.	Ես ասացի [նրան, ինչ-որ մեկին]. «Դասը կարդա՛ »:
Min av kir qedehê.	Ես ջուր լցրի գավաթի մեջ:
Min av kirê.	Ես ջուր լցրի մեջը: Ես ջուր լցրի [դրա մեջ, ինչ-որ բանի մեջ]:
Min ew hesp pêşkêş da wî.	Ես այդ ձին նվիրեցի նրան:
Min ew hesp pêşkêş dayê.	Ես այդ ձին նվիրեցի [նրան, ինչ-որ մեկին]:

ը) Երբեմն *gotin* բայը կարող է ստանալ *-e* վերջավորություն: Այս տարբերակն առավելապես կիրառվում է ժողովրդախոսակցան լեզվում:

Min got te.	Min gote te.	Ես ասացի քեզ:
-------------	--------------	---------------

***P’işîka me***

P’işîka me dizek e,  
 Xwe serdap’ê belek e.  
 P’işîka me dizî kir,  
 Binê t’ojenê me qul kir.  
 Wey, p’işîka e’mir kin,  
 Te çir’a ev dizî kir?

**Վարժություն 1.** Թարգմանել հետևյալ նախադասությունները:

1. Min tu girtî.
2. Aanahîtê ew girt.
3. Min ew dît.
4. Te em girtin.
5. Aram ew girtin.
6. Keç’ikê nan da.
7. Memo tu birî malê.
8. Anahîtê ez birim bazarê.
9. Min nan pe’t.
10. Cano ders xwend.
11. Xwendekar dersên xwe tamam hazir kir.

**Նոր բառեր**

dizek, diz	գող
belek	գունավոր, բծավոր
dizî	գողություն
qul	անցք, ծակ
tojan, tojen	տիկ
qul kirin	ծակել

**Շ’e’vgirtînok**

Şagirt ji seyrangê veger’yan hatin, ez çûm cem wan. H’emû şagirt eşq û şa bûn. H’emû li meydanê û li h’eyata dibistanê bûn. Serokê wan ji min pirsî: “Çira usa dût sekinîy?” Min got: “Ez ji vî gundî nînim, loma jî ez dût sekinîm”. Serokê wan ji min ra got: “Were bal me”. Ez çûm nêzîk. Min nasîya xwe da şagirtan. Paşê me ç’e’vgirtînok lîst. Nişkêva ez şimitîm û k’etim. Şagirtek destê xwe da min, ez sekinîm. Hevalê din ç’e’vê min girt û got: “Em k’u derê ne?”. Ez pey dengê zar’okan çûm. Min yek ji wan girt. Ew heval destê min va r’evî û k’et piş kêvir. Kevir ji cîyê xwe leqya. Heval tirsyan.

Նոր բառեր և արտահայտություններ

seyrange, seyrangeh	զբոսավայր
h'emû	բոլոր, ամբողջ
eşq	սեր, ուրախություն, ուրախ
eşq û şa	ուրախ
meydan	հրապարակ
loma, lema	դրա համար, դրա պատճառով, ուստի
nasîya xwe dan <i>keseî</i>	ծանոթանալ որևէ մեկի հետ
ç'e'vgirtînok	աչքկապուկ
nişkêva	հանկարծ, հանկարծակի
şimitîn	սահել
pey	հետո, հետևից
pey çûn	հետևից գնալ
cî	տեղ

**Վարժություն 2.** Թարգմանել հետևյալ նախադասությունները:

1. Em duh çûn bazarê.
2. Tu duhî çûyî cem hevalê xwe?
3. Aanahîte cil şûstin.
4. Min li pirtûkxanê gelek pirtûk xwendin.
5. Min ser darê çivîkek dît.
6. Xezalê ez dîtım.
7. Te helbestek xwend.
8. Pirtûkên min ji destên min k'etin.
9. Tu duh dereng hatî?
10. Ew duhî li bazarê ger'ya.
11. Ez pênc salan dikana wî da xebitîm.
12. Duh te ez li kolane dîtım.

**Վարժություն 3.** Փակագծերում նշված բայերը խոնարհել անցյալ կատարյալ ժամանակաձևով և թարգմանել նախադասությունները:

1. Îro te testê (xwarin)?
2. Duhu ez (hatin) bazarê.
3. Duhu êvarê mêvanê te gelek dereng (çûn).
4. Duhu êvarê mêvanên te dereng (çûn).
5. Par min k'itêbek (k'ir'în).
6. Par min ji şeherê Moskvayê hevt-heyşt kitêbêd teze (k'ir'în).
7. Ez p'îya (çûn) zanîngehê.
8. Duhu na pêr em p'îya (çûn) gund.
9. Îşev birê me t'enê nanê t'isî (xwarin).
10. Min nanek (xwarin).
11. Min pênc nan (xwarin).
12. Dayîka te sêv (k'ir'în).
13. Bavê te ji dik'anê şeş kîlo sêv (k'ir'în).
14. R'oja duşemê bavê Gulnazê pê e'rebê (çûn) xebatê.
15. Tu par k'uda (çûn).
16. Wan dersek (xwandin).
17. Wana t'emam ders (xwandin).
18. Wana caba min (dan).
19. Destê Mistefa (şikestin).
20. Mistefa k'et û her du destên wî (şikestin).

**Վարժություն 4.** Անցյալ կատարյալ ժամանակաձևով խոնարհել հետևյալ բայերն ու կազմել նախադասություններ:

	Անորոշ դերբայ	Բայի անցյալի հիմք
ստանալ, գնել	stendin	stend-
ուղարկել	şandin	şand-
կարդալ	xwendin, xandin, xwandin	xwend-; xand; xwand-
թափել	rêtin	rêt-
նետել, գցել	avîtin, avêtin	avît-; avêt-
բռնել	girtin	girt-
ասել	gotin	got-
վարել, քշել	ajotin	ajot-
սպանել	kuştin	kuşt-
լվանալ	şûştin	şûşt-
թողնել, թույլ տալ	hiştin, hîştin	hişt-; hîşt-
փոխել	guhastin	guhast-
ցանկանալ, ուզել	xwestin, xwastin, xastin	xwest-; xwast-; xast-
հանել	êxistin	êxist-
տանել	birin	bir-
անել	kirin	kir-
ուտել	xwerin, xwarin, xarin	xwer-; xwar-; xar-
բերել	anîn	anî-
զոդանալ	dizîn	dizî-
զնել	kirîn	kirî-
նայել	nihêr'în	nihêr'î-
հարցնել	pirsîn	pirsî-
գրել	ni vîsîn	ni vîsî-
երզել, հունցել	stran	stra-
աղալ	hêran	hêra-
փորել	k'olan	k'ola-
փաթաթել	p'êçan	p'êça-
տալ	dan (dayîn)	da-
ծնել	zan (zayîn)	za-

**Վարժություն 5.** Թարգմանել հետևյալ նախադասությունները:

1. Արմինեն նամակ գրեց: 2. Արամը նամակներ գրեց: 3. Զինվորը թշնամուն սպանեց: 4. Հայրիկը գիրքը փոստով ուղարկեց: 5. Մեր հարևանը քարը նետեց պատուհանից: 6. Նրանք այդ գիրքը գողացան: 7. Նա ջուրը թափեց գորգին: 8. Առավոտյան դուք ե ըբ նախաճաշեցիք:

**Հավելված**

- Քրդերենի կուրմանջի բարբառում բարդ նախդիրներն են *lê, pê, jê, tê*, որոնք կիրառվում են համատեքստից հայտնի, բայց այդ նախադասության մեջ զեղչված խնդրի, պարագայի փոխարեն: Բացի դրանից՝ նախդիրները կարող են միանալ պարզ բայերին՝ կազմելով նախդրավոր բայեր:

Նախդիրներն ունեն հետևյալ կառուցվածքն ու կիրառությունը.

ա)  $lê = li + wê/wî$

Ew keç' k'et odehyê, min lê nihêr'î.	Այդ աղջիկը մտավ, ե u [նրան] նայեցի:
Min nanê xwe xwar.	Ես իմ հացը կերա:
Kitêba xwe bixûne.	Կարդա՛ քո գիրքը:
Min xwarina xwe xwar.	Ես իմ ճաշը կերա:
Ez wet'enê xwe h'ez dikim.	Ես սիրում եմ իմ հայրենիքը:
Tu wet'enê xwe h'ez dikî.	Դու սիրում ես քո հայրենիքը:
Ew wet'enê xwe h'ez dike.	Նա սիրում է իր հայրենիքը:
Her kes doxtirê xwe ye.	Յուրաքանչյուրն ինքն իր բժիշկն է:
Ew çû zevîya bavê xwe.	Նա գնաց իր հոր արտը:
Min av da birayê xwe.	Ես ջուր տվեցի իմ եղբորը:

2. Եթե *xwe*-ն դրվում է գոյականից հետո, ապա գոյականին չի միանում իզաֆեթով.

Ez bi xwe hatim.	Ես ինքս եկա:
Cîran xwe hat.	Հարևանն ինքը եկավ:
Te xwe min r'a got.	Դու ինքդ ինձ սասացիր:

3. Անդրադարձ-սաստկական *xwe* դերանունը կիրառվում է նաև նախ-հիրների, հետադրությունների, կապերի ու կապական բառերի հետ:

ji xwe	իրենից
pê xwe, bi xwe	իրենով, ինքը

xwe r'a	իր համար
bi xwe r'a	իր հետ
xwe va	իրենից, իրենով
xwe da	իր մեջ
seba xwe, bona xwe, bo xwe	իր համար

Օրինակներ՝

Tu bi xwe gunehkar î.	Դու ինքդ ես մեղավոր:
Ew ji xwe r'azî ye.	Նա իրենից գոհ է:
Ew ji xwe xeyîdî.	Նա իրենից (բոց.՝ <i>ինքն իրենից</i> ) նեղացավ:
Ew bi xwe vegeer'ya.	Նա ինքը վերադարձավ:
Armên bi hevalên xwe serbilind e.	Արմենը հպարտ է իր ընկերներով:
Min ji hevalê xwe tişt pirsî.	Ես իմ ընկերոջից բան հարցրի:
Min xwe ra pirtûk k'ir'î.	Ես ինձ համար գիրք գնեցի:
Kalo xwe r'a k'ilam digot.	Ծերունին իր համար երգում էր:
Serbaz síleh xwe va girê da.	Զինվորը իրենից կապեց զենքը:
Jinik zar'ok pišta xwe va girêda.	Կինը երեխային իր մեջքից կապեց:
Kundir xwe da k'elya.	Դղումը եփվեց (բոց.՝ <i>Դղումը ինքն իր մեջ եփվեց</i> ):
Min dilê xwe da got: "Ez dîsa şaş bûm".	Ես մտքումս (բոց.՝ <i>իմ սրտում</i> ) ասացի. «Ես նորից շփոթվեցի»:
Hûn seba xwe difikirin.	Դուք ձեր մասին եք մտածում (բոց.՝ <i>Դուք ձեզ համար եք մտածում</i> ):

4. **Xwe** դերանունը որոշ նախադասություններում կարող է կիրառվել «հենց», «հենց իրեն», «հենց ինքը» նշանակություններով.

Ez Misto xwe nas dikim.	Ես հենց Մստոյին եմ ճանաչում:
-------------------------	------------------------------

5. **Xwe** դերանունը գործածվում է **bi** նախդրի հետ՝ ստանալով «ինքը», «ինքնություն» նշանակությունը.

bi xwe	ինքը, ինքնություն
--------	-------------------

Օրինակ՝

Aram bi xwe kurmancî hîn bû.	Արամն ինքնություն սովորեց կուրմանջի:
------------------------------	--------------------------------------

6. *Bi xwe, ser xwe* կառույցները կիրառվում են «քաջ», «արի», «ուժեղ» նշանակություններով.

Ew mêrekî bi xwe ye.	Նա քաջ տղամարդ է:
Ew merîkî ser xwe ye.	Նա ուժեղ մարդ է:

7. *Xwe* դերանվան կրկնությամբ կազմվել է ածանցյալ *xwexwe, xwe-xwe* (որոշ խոսվածքներում՝ *xwaxwa, xoxo*) դերանունը, որը թարգմանվում է «ինքս», «ինքդ», «ինքը», «ինքներդ», «իրենք».

Zar' <i>xwexwe</i> hatin:	Երեխաներն իրենք եկան:
Me <i>xwexwe</i> name nivîsî .	Մենք ինքներս նամակ գրեցինք:
Tu <i>xwexwe</i> gunehkar î.	Դու ինքդ ես մեղավոր:
Min <i>xwexwe</i> ji xwe pirsî: “Gelo ez rast im?”	Ես ինձ (բոց.՝ <i>ինքս ինձնից</i> ) հարցրի. «Արդյո՞ք ես ճիշտ եմ»:

8. Կան նաև *xwe* դերանվան՝ բայի, գոյականի կամ այլ խոսքի մասի համակցմամբ կազմված մի շարք արտահայտություններ.

<i>xwe kuştin</i>	ինքնասպան լինել
<i>xwe parastin</i>	պաշտպանվել
<i>xwe şûştin</i>	լվացվել
(li) <i>xwe kirin</i> , (li) <i>xwekirin</i>	հագնել
<i>av xwe kirin</i>	լողանալ
<i>av serê xwe kirin</i>	գլուխը լվանալ, լողանալ
<i>serê xwe şûştin</i>	լողանալ (բոց.՝ <i>գլուխը լվանալ</i> )
<i>xwe avîtin</i>	նետվել (բոց.՝ <i>իրեն նետել</i> )
<i>xwe herişandin</i>	քերծվել (բոց.՝ <i>իրեն քերծել</i> )
<i>ber xwe ketin</i>	մտահոգվել, տանջվել, նեղվել, ափսոսալ
<i>ber xwe gotin</i> , <i>ber xwe derxistin</i>	հորիսել
<i>ber xwe dan</i>	համբերել, տոկալ, ընդիմանալ
<i>bala xwe berdán</i>	ուշադրություն դարձնել, նայել, հայացք նետել
<i>dîna xwe dan</i>	դիտել, հայացք նետել
<i>xwe dirêj kirin</i>	պառկել (բոց.՝ <i>իրեն երկարացնել, ձգվել</i> )

Օրինակներ՝

Birayê min <i>xwe avît cem min.</i>	Եղբայրս նետվեց ինձ մոտ (բոց.՝ <i>Եղբայրս իրեն նետեց ինձ մոտ</i> ):
Aram <i>av xwe kir.</i>	Արամը լողացավ:

Wî av serê <b>xwe</b> kir.	Նա իր գլուխը լվաց:
Anahît bona hevala xwe ber xwe k'et.	Անահիտը մտահոգվեց իր ընկերուհու համար:
Wî xwe êşand.	Նա ինքն իրեն ցավ պատճառեց:
Armên çû ber avê û xwe şûşt.	Արմենը գնաց ջրի մոտ ու լվացվեց:
Armên xwe avît ser erdê.	Արմենը նետվեց գետնին (բոց.՝ <i>Արմենն իրեն նետեց գետնի վրա</i> ):

9. **Xwe** անդրադարձ-սաստկական դերանվամբ կազմվում են նոր բառեր ու արտահայտություններ:

xweseî	ինքնուրույն
xweseî xwe	ինքնուրույնաբար
destxweda, dest bi xwe da	անմիջապես

Օրինակներ՝

Aanahîtê xweseî xwe name nivîsî.	Անահիտն ինքնուրույն նամակը գրեց:
Aram destxweda av vexwar.	Արամն անմիջապես ջուր խմեց:

### **Tifal û berf**

– Kulîya qerqaş,

Minminîka delal.

K'ê tu anî

Welatê me?

– Ez dilopek im ji hêsira

Ji sermê cemidî.

Peyabûm jêr.

Ew e'wrê hanî gewr ku heye

Ew dayîka min bi xwe ye.

(Gêx'am Saryan; tercime Ç. G.)

Նոր բառեր

tifal	մանուկ
qerqaş	ճերմակ
minminîk	թիթեռնիկ
hêsir	արցունք
serma	ցուրտ, սառնամանիք
cemidî	սառցակալած



peyabûn	իջնել
han	այն

### Դիյանա միօրեկի

Ez ji gund bûm. Dê û bavê min sala h'ezar nehsid panzda ji şeherê Wanê derk'etin û hatin Elegyezê. Wana r'ê va xûşk û birên xwe unda kirin. Eskerekî dijmin pê k'êra xwe xûşk-birê wan kuşt. Bîra min da ye çawa dê bavê min bîra wet'enê xwe dikir. Bavê min gilî dikir: “Birê min qûmistanê birîndar bû. Du-sê r'oj bû ji birîna wî xûn dihat. Li demistanê av t'unebû, h'ekîmek jî t'unebû... Usa min birê xwe unda kir...”

Ez sala hezar nehsid sî û pêncâ bûm. Sala hezar nehsid pêncî pêncâ ez îdî bîst salî bûm. Min bavê xwe r'a soz da wekî ezê bibim h'ekîm. Ez xwexwe hatim şeher. Bona min gelekî çetin bû. Min ze'f bîra gundê xwe dikir. Hevalekî min hebû. Ew jî ji gundekî din bû. Navê hevalê min K'erem bû. Ez her r'oj tevî hevalê xwe diçûm dersê. R'okî hevalê min tev'î nasêd xwe qumbar lîst û da der. Hevalê min tamam perê xwe unda kir, lê min t'ucara qumbar nelîst. Min h'evt sala xwend û bûm doxtir.

#### Վարժություն 1. Պատասխանել հետևյալ հարցերին:

1. Tu ji ku bûy?
2. Dê bavê te ji k'îjan şeherî hatin?
3. K'î xûşk-birên wan kuşt?
4. Bavê te k'u derê birê xwe unda kir?
5. Tu çend salî bûyî, ku hatî şeher?
6. Tu k'engê hatî dinê? (tu k'engê ji dayîk bûy?)
7. Nasên hevalê te çi dikirin?
8. Te çend sala xwend?

#### Նոր բառեր և արտահայտություններ

derk'etin	դուրս գալ
unda kirin, wenda kirin	կորցնել
esker	զինվոր
bîr	հիշողություն
bîr kirin	մոռանալ, կարոտել
bîra wet'en kirin	կարոտել հայրենիքը
gilî	խոսք
gilî kirin	պատմել
qûmistan, demistan	անապատ

birîn	վերք
birîndar	վիրավոր
birîndar bûn	վիրավորվել
xûn, xwîn	արյուն
h'ekîm	բժիշկ
îdî	արդեն, այլևս
sozdan	խոստանալ
çetin, zehmet	դժվար
nas	ծանոթ
nas kirin	ճանաչել
qumbar	մոլախաղ
dan der	տանուլ տալ
gişk, gişt	բոլոր, ամբողջ
t'emam	ողջ
p'ere	փող
car	անգամ
t'u car, t'u cara	երբեք

**Վարժություն 2.** Թարգմանել հետևյալ նախադասությունները:

1. Min xwe veşart. 2. Te xwe veşart. 3. Me xwe veşart. 4. Ez xwexwe hatim.
5. We xwe veşart. 6. Wan xwe veşart. 7. Aram hevala xwe dît. 8. Ew jin xwe avît nav avê. 9. Te çir'a ew cil avît ser êgir. 10. Annayê xwe hazir kir.
11. Wan mala xwe çêkir. 12. Min duh xebata xwe kir. 13. Te xebata xwe berî min kir. 14. Aram deftera xwe hilda û berbi dersxanê çû. 15. Wî xwe-xwe xebata xwe hazir kir. 16. Min xwe r'a kitêb anî. 17. Te qayîş (k'imber) pişta xwe va girêda. 18. Min hevalê xwe r'a name şand. 19. Min dostê xwe h'îşyar kir. 20. Wî k'incê xwe xwekir. 21. Aram solên xwe p'ê kir. 22. Diz re'ver'ev çû, xwe piş dêrî veşart. 23. Pişikê xwe li ser nivînên xwe dirêj kir.
24. Ew jin gelek ji xwe r'azî ye. 25. Aram dera xwe hazir kir. 26. Kalemêr kur'ê xwe dît. 27. Law bavê xwe dît. 28. Ew jin xwe avît ser erdê. 29. Min k'itêba xwe anî. 30. Me ji xwe r'a avahîk çêkir. 31. Min ji hevalê xwe tişt xwest. 32. Ez mala xwe da r'ûniştim. 33. Te hevalê xwe nedît. 34. Min kûçik bi xwe r'a anî. 35. Min kûçik t'evî xwe anî. 36. Jinikê zar'ok xwe va girêda. 37. Te zar'ok t'evî xwe anî ? 38. Silq xwe da kelya. 39. Wî xwe r'a avayîkî teze çêkir. 40. Aram mala xwe da r'ûnişt. 41. Armînê xwe r'a k'inc dirût. 42. Silo e'reba xwe ajot, çû. 43. Min te r'a ne'me neşand. 44. Şivan bi xwe pez ç'êrand. 45. Tu xwexwe gunek'ar î. 46. Min xwexwe k'incê xwe dirût. 47. Ew xwexwe k'et e'rdê. 48. Wan destên xwe xistin bin serê xwe û

di bin bayê payîzê yê sivik û hênik de li stêrkan nihêrîn. 49. Min xaniyê xwe firot. 50. Min xwe neynîkê da dît. 51. Min bîra hevalê xwe kir. 52. Ez xwexwe hatim mala te. 53. Wî xwexwe ji bavê xwe xeyîdî. 54. Pîrê xwexwe xwe r'a xeberda. 55. Wana xwe xweyî kir. 56. Duhu pîrka min berç'e'vkên xwe şkênand. 57. Kesek dersa xwe nexwend. 58. Nexweş xwexwa r'abû, nivînêd xwe hilda. 59. Qîzê xwexwa p'or'ê xwe şe kir. 60. Duh min ne'ma xwe şand.

Նոր բառեր և արտահայտություններ

k'imber	գոտի
girêdan	կապել
sol	կոշիկ
p'ê kirin	հագնել (կոշիկ)
Min p'ê kir.	Ես հագա:
silq	ճակնդեղ
neynîk	հայելի
xweyî	տեր
xweyî kirin	տեր կանգնել, պահել, պահպանել
berç'evk	ակնոց
nivîn	անկողին
hildan	վերցնել
por	մազ
şe	սանր
şe kirin	սանրել

**Վարժություն 3.** Հետևյալ նախադասություններում նշված բառերը կիրառել *xwe* դերանվան հետ:

Օրինակ՝ K'erem ji *jine* xeyîdî.

Kerem ji *jina* xwe xeyîdî.

1. T'aco *mal* firot.
2. Em ji *gund* hatin.
3. Keç' alî *dayîkê* kir.
4. Hêvî *zar'ok* nedîtin.
5. Aram li *malê* nema.
6. Narê *xwarin* çêkir.
7. Ahmed *bajar* h'ez kir.
8. Min *h'eyat* t'emiz kir.

**Վարժություն 4.** Փակագծերում նշված անձնական դերանունները ճիշտ գործածել կամ դրանց փոխարեն կիրառել անդրադարձ-սաստկական դերանուն:

Ew keç'a (ez) e. Min keç'a (ez) dît.

Ew keç'a min e. Min keç'a xwe dît.

1. Mala (ez) mezin e. Min mala (min) firot. 2. Kur'ê (tu) yê mezin heye? Tu t'evî kur'ê (te) çûyî dik'anê. 3. Ew xûşka Delalê ye. Delal xûşka (wê) anî dibistanê. 4. Dîya (ez) min r'a got: "Te k'iteba (te) ji k'u kirî?"

**Վարժություն 5.** Թարգմանել հետևյալ նախադասությունները:

1. Նա ինքը եկավ:
2. Մենք ինքներս գնացինք:
3. Երեխան ինքը կերավ իր ճաշը:
4. Դու ինքդ ասացիր:
5. Ես իմ գիրքը կարդացի:
6. Ես ինքս գիրքը կարդացի:
7. Ես ինքս իմ գիրքը կարդացի:
8. Նա իր գիրքն ինձ տվեց:
9. Նա ինքը գիրքն ինձ տվեց:
10. Նա ինքը իր գիրքն ինձ տվեց:
11. Դուք ինքներդ գիրքը կարդացիք:
12. Նա ինքը գիրքը կարդաց:
13. Նա ինքն իր գիրքը կարդաց:
14. Ես իմ գիրքը կորցրի:
15. Ես ինքս գիրքը կորցրի:
16. Ես ինքս իմ գիրքը կորցրի:
17. Մենք մեր գիրքը կորցրինք:
18. Ես հորս համար հաց բերեցի:
19. Ես քրոջս համար հաց չբերեցի:
20. Ես ինձ հետ ոչինչ չբերեցի:

**Ժողովրդական ասացվածքներ**

Her xanek dilê xwe da silt'anek e.  
 Xelqê r'a gul e, xwe ra kul e.  
 Biç'ûk cîyê xwe, mezin cîyê xwe.  
 Gamêş di sînora xwe da xurt e.  
 Her tişt xweş e we'dê xwe da.  
 Xwexwe xwe pesinî.  
 Xwe r'a k'ûsîgir e, xelqê ra me'sîgir e.  
 Mêr bi navê xwe, teyr bi r'efê xwe.  
 Teyr difir'e bi qanatê xwe.  
 Meryê diz ji xwe şik e.  
 Meymûn çe've dîya xwe da xezal e.  
 Mala xwe da na, lê mala xelqê da xurt e.  
 “– K'ê ç'evê te derxist?  
 – Xwexwetîya min.  
 – Lema usa kûr derxist?”  
 “– Ç'evê te k'ê derxist?  
 – Merivê min derxist.  
 – Lema k'ûr derxist.”

Նոր բառեր և արտահայտություններ:

gamêş	զովեշ
sînor	սահման

xurt	ճարպիկ, ուժեղ
we'de	ժամանակ
pesin	զովեստ
k'ûsî	կրիա
r'ef	երամ
Teyr difire.	Արծիվը թռչում է:
qanat	թև
şik	կասկած
meymûn	կապիկ
xezal	եղնիկ
merd	առաստաձեռն

## Դաս 31

### Թեք հոլով (ներքին թեքման չպատկանող գոյականներ)

Թեք հոլովը ցույց է տալիս գործողության օբյեկտի ու սուբյեկտի հարաբերությունը: Ուղիղ հոլովը համապատասխանում է հայերենի ուղղական հոլովին, թեք հոլովը՝ հայերենի սեռական-տրականին:

1. Արական սեռի գոյականները թեք հոլովաձևով կիրառվելիս որևէ վերջավորություն չեն ստանում.

mala Armên	Արմենի տունը
jina Armên	Արմենի կինը

ա) Թեք հոլովով և նախդիրների ու հետադրությունների հետ կիրառվող արական սեռի գոյականները նույնպես որևէ փոփոխություն չեն կրում.

Armên r'a, Armên r'e	Արմենին
ji Armên	Արմենից
pê Armên, bi Armên, Armên va, Armên ve	Արմենով

բ) Բացառություն են հետևյալ արական սեռի գոյականները, որոնք թեք հոլովաձևով կիրառվելիս ստանում են *-ê* վերջավորություն.

bav	հայր
xal	քեռի
ap, mam	հորեղբայր
kek	եղբայր
kal	ծերունի
e'rd	գետին, հող

Օրինակներ՝

jina xalê	քեռու կին
mala bavê	հոր տուն
ji e'rdê	գետնից
ser e'rdê	գետնին (բռց.՝ <i>գետնի վրա</i> )

2. Իգական սեռի գոյականները թեք հոլովաձևով կիրառվելիս ստանում են *-ê* վերջավորություն.

keç'	keç'ê
------	-------

mal	malê
av	avê
sêv	sêvê
kanî	kanîyê
mek'teb	mektebê
Hasmîk	Hasmîkê
R'ojgul	R'ojgulê

Օրինակներ՝

Bejna keç'ê bilind e.	Աղջիկը բարձրահասակ է:
Mala Hasmîkê mezin e.	Հասմիկի տունը մեծ է
Ez par çûm Yêrêvanê.	Անցյալ տարի ես Երևան գնացի:

Իգական սեռի թեք հոլովաձևով և հնչյունափոխված գոյականները կիրառվում են նաև նախդիրների ու հետադրությունների հետ.

malê r'a	տան, տան համար
ji malê, malê va, malê ve	տնից
pê malê, bi malê, malê va, malê ve	տնով
malê da, di malê de, nav malê, hundur malê	տան մեջ, տանը
R'ojgulê	Ռոժգուլի, Ռոժգուլին
ji R'ojgulê, R'ojgulê va, R'ojgulê ve	Ռոժգուլից
ji Yêrêvanê, Yêrêvanê va, Yêrêvanê ve	Երևանից

3. *-ê*-ով վերջացող իգական սեռի գոյականները (օրինակ՝ *r'ê, dê, xwê*), նաև կանանց անունները, տեղանունները թեք հոլովաձևով կիրառվելիս չեն հնչյունափոխվում.

Tu mala Gulê da yî?	Դու Գուլեի տանն ես:
Ev mala Armînê ye.	Սա Արմինեի տունն է:
Em r'ê va ne.	Մենք ճանապարհին ենք:
Goşt k'ete nav xwê.	Միսն ընկավ աղի մեջ:

4. *-e*-ով և *a*-ով վերջացող իգական սեռի որոշ գոյականների թեք հոլովաձևերն են.

p'erde	վարագույր	p'erdê	վարագույրը, վարագույրի, վարագույրին
h'ewle	հավվա	h'ewlê	հավվայի, հավվան
p'encere	պատուհան	p'encerê	պատուհանը, պատուհանի, պատուհանին

şûşe	ապակի	şûşê	ապակին, ապակու, ապակուն
ode	սենյակ	odê	սենյակը, սենյակի, սենյակին
gore	գուլպա	gorê	գուլպան, գուլպայի, գուլպային
e'rebe	մեքենա	e'rebê	մեքենան, մեքենայի, մեքենային
îdare	հաստատություն, գրասենյակ	îdarê	գրասենյակը, գրասենյակի, գրասենյակին
êge	խարտոց	êgê	խարտոցը, խարտոցի, խարտոցին
k'ûçe	փողոց	k'ûçê	փողոցը, փողոցի, փողոցին
r'inde	ռանդա	r'indê	ռանդան, ռանդայի, ռանդային
ç'ira	ճրագ	ç'irê	ճրագը, ճրագի, ճրագին
p'ira	կամուրջ	p'irê	կամուրջը, կամրջի, կամրջին

Օրինակներ՝

Ezê şûşê bişkênim.	Ես ապակին կկոտրեմ:
Ew pê erebê hat.	Նա մեքենայով եկավ:

5. Անորոշ առումով արական սեռի գոյականները թեք հոլովաձևով կիրառվելիս ստանում են *-î* վերջավորություն.

Ez kur'ekî dibînim.	Ես մի տղա եմ տեսնում:
Mîn ji kur'ekî av xwest.	Ես մի տղայից ջուր ուզեցի:

6. Անորոշ առումով իգական սեռի գոյականները թեք հոլովաձևով կիրառվելիս ստանում են *-ê* վերջավորություն.

Ez keç'ekê dibînim.	Ես մի աղջիկ եմ տեսնում:
---------------------	-------------------------

7. Ցուցական դերանվան հետև թեք հոլովաձևով արական սեռի գոյականները ստանում են *-î* վերջավորություն (թեք հոլովաձևով է կիրառվում նաև ցուցական դերանունը).

Ez wî kur'î dibînim.	Ես այդ տղային տեսնում եմ:
Mîn ji wî keşîşî tişt pirsî.	Ես այդ քահանայից բան հարցրի:
Ez ji wî gundî hatim.	Ես այդ գյուղից եկա:



8. Ցուցական դերանվան հետևում և թեք հոլովաձևով իզական սեռի գոյականները ստանում են *-ê* վերջավորություն (թեք հոլովաձևով է կիրառվում նաև ցուցական դերանունը)։

Ez <b>wê</b> keç'ê dibînim.	Ես այդ աղջկան տեսնում եմ:
Min ji <b>wê</b> jinê saet pirsî.	Ես այդ կնոջից ժամ հարցրի:

9. Հոգնակիով և թեք հոլովաձևով և՛ արական, և՛ իզական սեռի գոյականները ստանում են *-a* կամ *-an* հոգնակերտ։

Ez wan kur' <b>an</b> dibînim.	Ես այդ տղաներին եմ տեսնում:
Min ji <b>wan</b> jinan saet pirsî.	Ես այդ կանանցից ժամ հարցրի:
Ez keç' <b>an</b> dibînim.	Ես աղջիկներին եմ տեսնում:

**Երկխոսություն**

Koçer: Êvarbaş!  
 Babîr: Êvarbaş, Koçer can!  
 Koçer: Kur'ò, duh birayê te bal me nîbû.  
 Babîr: Erê, ne vir bû!  
 Koçer: Ji k'ere ma xwe bibêje, ew li ku bû?  
 Babîr: Duh birayê min çû mêşe.  
 Koçer: K'uda çû? Çû meşê? Ji bo çi? Ji bo azadîyê?  
 Babîr: Ne meş, kur'ò!!! Mêşe, mêşe... Çû daristanê.  
 Koçer: Bibexşîne, min fe'm nekir.  
 Babîr: Tişt nabe!  
 Koçer: Ew bi k'î ra çû ?  
 Babîr: Ew t'evî hevalan çû.  
 Koçer: Wî ji mêşe gul anî?  
 Babîr: Ne t'enê gul, tiştên din jî anîn.  
 Koçer: Îdî çî anî?  
 Babîr: Karî jî anî.  
 Koçer: Mêşe da îdî çî hebû?  
 Babîr: Mêşe da t'ijî dar û gul hebûn. Li wir h'eywan jî hebûn.  
 Koçer: H'eywan hebûn?  
 Babîr: Erê li wir ajal hebûn.  
 Koçer: Ew h'eywanên k'ûvî bûn, ne?  
 Babîr: Erê, ew ajalên hov bûn!  
 Koçer: Birayê te bi xêr û silamet vege'ya?  
 Babîr: Erê, spas!

**Վարժություն 1.** Պատասխանել հետևյալ հարցերին:

1. Koçer çi got? 2. Birayê Babîr k’uda çû? 3. Gelo birayê Babîr nêç’îr kir?
4. Li mêşe çi hebû?

**Նոր բառեր և արտահայտություններ**

bal	մոտ
Bibêje! (Bêje!)	Ասա՛ :
meş	ցույց
azadî	ազատություն
Bibexşîne	ների՛ր
îdî	արդեն, էլ
heywan, ajal	կենդանի
k’ûvî, beyanî, hov	վայրի
hov	վայրի, գիշատիչ
Ew vegerya.	Նա վերադարձավ:

**Վարժություն 2.** Թարգմանել հետևյալ նախադասությունները:

1. Ez çûm şanoyê. 2. Ez çûm sînêmayê. 3. Ez bi t’exsîyê çûm. 4. Ez bi bisiklêtê çûm. 5. Ez bi otobûsê çûm geştûger’ê. 6. Tu bi trêne çûyî. 7. Ew bi balafirê çûn. 8. Hûn bi keşîyê çûn. 9. Ez ji heyatê hatim. 10. Em ji şeher vegeryan.

**Dibistan**

Di Komara Ermenistanê de gelek dibistan ser navên şayîr û zanyaran hene. Dibistana h’ejmara h’eyştê û neha di Yêrêvanê de ser navê helbestvanê ermenî yê nav û deng e. Dibistana h’ejmara he’ysta li merk’eza Yêrêvanê ser navê şayîrê r’ûs Alêksandr Pûşkîn e. Dibistaneke din ort’a Yêrêvanê ser navê nivîsk’arê ermenî – Khachatûr Abovyan e. Khachatûr Abovyan ne ku t’ênê nivîsk’ar, lê usa jî lêkolînêr û mamoste bû.

Dibistana gundê R’îya Teze ser navê Emînê E’vdal e. Emînê Evdal u’lmdar û şayîrê bi nav u deng e. Wextekê Emîne E’vdal li dibistana gundê R’îya Teze mamoste bû. Dibistana gundê Elegezê ser navê Şekroyê Xudo ye. Şekroyê Xudo dîrokzan u akademîk bû. Ew li vî gundî ji dayîka xwe bû û di dibistana vî gundî da xwend. Dibistana gundê Sîp’anê ser navê Fêrîkê Ûsiv e. Fêrîkê Ûsiv şayîrê hêja û navdar bû. Salên dirêj ew di wê dibistanê de mamoste bû. Dibistana gundê Avşênê li ser navê Maksîmê Xemo ye. Maksîmê Xemo r’ohilatzan û zimanzan bû, ew profêsor û doktor bû. Maksîmê Xemo e’mrê xwe li ser pirsên zimanê k’urdî xerç kir. Şagirtêd van gundan van navan r’ind dizanin.

Նոր բառեր և արտահայտություններ

zanyar, ulmdar	գիտնական
şayîr	բանաստեղծ
lêkolînêr	հետազոտող, գիտնական
hêja	արժանավոր, երախտավոր
bi nav u deng	անվանի
dîrokzan	պատմաբան
Ew ji dayîka xwe bû.	Նա ծնվեց (բոց.՝ <i>Նա իր մորից ծնվեց</i> ):
r'ohilatzan	արևելագետ
zimanzan	լեզվաբան
pirs	հարց
Wî xerç kir.	Նա ծախսեց:

**Վարժություն 3.** Թարգմանել հետևյալ նախադասությունները:

1. Ես այդ կնոջից գիրք վերցրի: 2. Ես հարևաններից նեղացա: 3. Իմ եղբայրը Իրանից եկավ: 4. Աշակերտները գնացին Գյումրի: 5. Դու ինչո՞ւ չգնացիր աշխատանքի: 6. Նրանք երեքշաբթի օրը գնացին Սևան: 7. Դուք ժամը հինգին Սևանից վերադարձաք:

**Ժողովրդական ասացվածքներ**

Ji te herek'et, ji Xwedê berek'et.  
 Xema kor e mûm baha ye?  
 Dem demê r'a, her dem Xwedêra.  
 Dijmin r'a zarê xweş, pişta h'işk.  
 Kevirê havînê bavêje kulînê.  
 Xelqê r'a gul e, xwe r'a kul e.

Նոր բառեր և արտահայտություններ

şano	թատրոն
keşfî	նավակ
geştûger'	գրասանք, տուրիզմ
herek'et	շարժում
berek'et	օրհնություն, առատություն
dem	ժամանակ
h'işk	չոր
Bavêje!	Նետի՛ր:
kulîn	մառան

## Դաս 32

# Բաշխական, կոտորակային, տոկոսային թվականներ

### Բաշխական թվականներ

Բաշխական թվականները ցույց են տալիս առարկաների բաշխում թվային որոշ քանակով:

Բաշխական թվականները կարող են կազմվել.

ա) քանակական թվականի կրկնությամբ՝ *yek-yek, sê-sê, çar-çar, pênc-pênc*, օրինակ՝

Zar'ok yek yek hatin.	Երեխաները մեկիկ-մեկիկ եկան:
-----------------------	-----------------------------

բ) *û* համադասական շաղկապով՝ *yek û yek, du û du, sê û sê, neh û neh, deh û deh, çil û çil, hezar û hezar*,

գ) քանակական թվականի կրկնությամբ և *e* մասնիկով: *Yek* քանակական թվականի կրկնության դեպքում կիրառվում է *o* մասնիկը՝ *careçar, şeşeş, dehedeh, çileçil, sedesed, yekoyeko*.

Zar'ok yekoyeko hatin.	Երեխաները մեկիկ-մեկիկ եկան:
Zilam yekoyeko revîn.	Տղամարդիկ մեկիկ-մեկիկ փախան:

դ) *bi* (որոշ խոսվածքներում՝ *be, we*) նախդրով՝ *yek bi yek, du bi du, sê bi sê, çar bi çar, deh bi deh, şêşt bi şêşt, sed bi sed, mîlyon bi mîlyon*,

ե) *her* (յուրաքանչյուր) դերանվամբ՝ *her yek, her sê, her çar, her pênc*,

զ) *nîv* (կես), *t'ek* (կենտ), *cot* (զույգ) և այլ բառերով, օրինակ՝ *nîv bi nîv, cot cot, cotecot, cot bi cot, tek tek, tek bi tek*:

### Կոտորակային թվական

Քրդերենի կուրմանջի բարբառում կոտորակային թվականը կազմվում է մի քանի ձևով:

1. Համարիչը քանակական թվական է, հայտարարը՝ *-emîn* կամ *-omî* վերջավորությամբ կազմված դասական թվական.

3/4	sê çaremîn, sê çaromî
4/5	çar pêncemîn, çar pêncomî

2. Նախ դրվում է *ji* նախդիրը, հայտարարը *-a* կամ *-an* վերջավորությամբ դասական թվական է, համարիչը՝ քանակական թվական.

3/6	ji şeşan sê
2/5	ji pêncan du

3. Համարիչը քանակական թվական է, հայտարարը՝ **-an** վերջավորությունը դասական թվական: Որպես համարիչ՝ բոլոր քանակական թվականները ստանում են **-ê**, **yek** քանակական թվականը՝ **-a** վերջավորություն.

5/20	pêncê bîstan
7/40	heftê çilan
1/20	yeka bîstan

4. Որոշ քանակական թվականների հավելվում է **-ek (-yek)** վերջավորություն.

1/4	çarek, çaryek
1/3	sêyek
1/6	şeşek
1/7	heftek

### **Տոկոսային թվական**

1. Տոկոսը նշելու համար նախ դրվում է տոկոսի չափը ցույց տվող քանակական թվականը, ապա՝ **selef** բառը.

bîst selef	քսան տոկոս
heft selef	յոթ տոկոս

2. Դրվում է **ji** նախդիրը, տոկոսը ցույց թվող քանակական թվականը, ապա՝ **sed** բառը.

ji sedî bîst	քսան տոկոս
ji sedî sed	հարյուր տոկոս

Հանդիպում է նաև հետևյալ տարբերակը.

bîst ji sed	քսան տոկոս
sed ji sed	հարյուր տոկոս

### **Վարժություն 1.** Թարգմանել հետևյալ նախադասությունները:

1. Sisê ji çaran kêmtir e.
2. Memê, ji çil û nehan yek hilibijart.
3. Gulê, ji sed û pêncî û heftan sê heb unda kir.
4. Li ser sedî li hev nehatin.
5. Min ji hezarî du sed xerc kir.
6. Min, ew xanî bi pênc sed hezarî xwast, lê nedan.
7. Te ji şêstî pazdeh da dostekî xwe.
8. Wî bi du mîlyonan xanîyê bavê Dîlanê ava kir.
9. Li wê bazerê dused firoşger hene.
10. Aram di wî k'arî de

xelata yekemîn girt. 11. We ji bîst û çaran şeş bîr kirin. 12. Ji pencî hêkan şeş şikestin.

### Derew derew e – çi ceh, çi genim

Carekê dewletîkî xwest şer’ bavêje cînarê xwe. Çû bal qazî û got: “Cînarê min ji çê’lê du bar genim dizî”. Qazî jê pirsî: “Şe’dê te k’î ye?”. Got: “Şe’dê min xulamê min e”.

Gazî xulam kirin. Qazî pirsî: “Te çi dît?”. Xulam got: “Filankesê du bar ceh ji ç’ê’la ax’ayê min dizî”. Qazî got: “Kur’o, ax’ayê te got genim, te got ceh?”. Xulam got: “ Ê, qazî, derew derew e – çi ceh, çi genim”.

Նոր բառեր

Ew hev nehatin.	Նրանք չհամաձայնեցին:
Wan ava kir.	Նրանք կառուցեցին:
firoşger	վաճառող
dewletî	հարուստ
şer’ avîtin	հերյուրել, զրպարտել
şe’de	վկա
derew	սուտ
ç’e’l	փոս
ceh	գարի
genim	ցորեն

### Հավելված

• Մի քանի գոյականակերտ վերջածանցներով կազմվող բառեր -kî, -î

gurcîkî	վրացերեն
erebî	արաբերեն

-tî

hevaltî	ընկերություն
zar’otî	մանկություն
biratî	եղբայրություն

-ayî

dijmnayî	թշնամություն
kûrayî	խորություն

dûrayî	հեռավորություն
--------	----------------

-î

arzanî	էժանություն
giranî	ծանրություն

### Du deve

Du deve xûşkên hev bûn. Her du t'ev hev diç'êryan. Yek ç'êrya, tişt da devê din. Deve got: “Ez jî diç'êrim, tu jî diç'êrî, tu çima didî min?”. Deva din got: “Ê, xûşkê, h'urmeta dinê r'a çî?”.

Նոր բառեր և արտահայտություններ

deve	ուղտ
Ew diç'êryan.	Նրանք արածում էին:
Ez diç'êrim.	Ես արածում եմ:
Tu diç'êrî.	Դու արածում ես:
çima?	ինչո՞ւ
Tu didî.	Դու տալիս ես:
h'urmet	հարգանք

## Դաս 33

### Փոխադարձ դերանուններ

Փոխադարձ դերանունները մատնացույց են անում գործողությամբ փոխադարձաբար իրար առնչվող առարկաներ կամ անձեր՝ առանց դրանք անվանելու:

Փոխադարձ դերանուններն են *hev, hevdu* (hevdu=hev+du) (որոշ խոսվածքներում՝ *hevdi, hevdu*) (իրար, միմյանց, մեկմեկու):

Em hevdu nabînin.	Մենք միմյանց չենք տեսնում:
Hev hiz bikin!	Միմյանց սիրե՛ք միմյանց:
Ew hevdu hiz dikin.	Նրանք սիրում են միմյանց:

Փոխադարձ դերանունները կիրառվում են նաև նախդիրների, հետադրությունների, կապերի, կապական բառերի հետ.

ji hev, ji hevdu	միմյանցից
pê hev, bi hev, pê hevdu, bi hevdu	միմյանցով
hev ra, hevdu ra	միմյանց, միմյանց համար
hev va, hevdu va	միմյանցով, միմյանցից
seba hev, bona hev, bo hev	միմյանց համար, հանուն իրար
seba hevdu, bona hevdu, bo hevdu	միմյանց համար, հանուն իրար
derheqa hev, derheqa hev da	իրար մասին
t'evî hev, t'ev hev, t'ev hevdu	միմյանց հետ
bi hev r'a, bi hev r'e	իրար հետ

Որոշ խոսվածքներում կիրառական է *t'evî hev*-ի *t'evayî* տարբերակը, օրինակներ՝

Hûn bi hev r'a hatin?	Դուք իրար հե՞տ եկաք:
Mamoste hev r'a mesilhet kirin.	Ուսուցիչները զրուցեցին իրար հետ:
Aram û Anî hev r'a xeber didin.	Արամն ու Անին իրար հետ խոսում են:
Ew ji hev xeyîdin.	Նրանք իրարից նեղացան:
Hûn ji hevdu xeyîdîn.	Դուք իրարից նեղացաք:
Em ji hevdu hezdikin.	Մենք միմյանց սիրում ենք:
Em tev hev dixûnin.	Մենք իրար հետ ենք սովորում
Em derheqa hev da difikirin.	Մենք մտածում ենք իրար մասին:
Hûn her du merya tirê hev va girêdayî ne.	Դուք երկուսդ ասես կապված լինեք միմյանց:



Փոխադարձ դերանունները կիրառվում են նաև հետևյալ կառույցներում.

jin û mêrê hev	[իրար] ամուսիններ
xûşk û birayên hev	[իրար] քույր ու եղբայր
hevalên hev	[իրար] ընկերներ
dijminên hev	[իրար] թշնամիներ
cînarên hev	[իրար] հարևաններ
hev xistin, hevdu xistin	[իրար] խփել
hev girtin, hevdu girtin	[իրար] բռնել
hev dîtin, hevdu dîtin	[իրար] տեսնել

Օրինակ՝

Aram û Nişan hevalên hev in.	Արամն ու Նշանը [իրար] ընկերներ են:
------------------------------	------------------------------------

**Վարժություն 1.** Թարգմանել հետևյալ նախադասությունները:

1. Wan hevdu qebûl kir.
2. Wextekê em hevalên hev bûn.
3. Em birê hev in.
4. Wan hev r'a ne'me nivîsî.
5. Wan t'ev hev mesilhet kir.
6. Wan hevdu r'a soz dan bizewicin.
7. Alan û Berfîn êvîndarên hev in.
8. Aram û Armînê hev h'ez dikin.
9. Serbaz pey hev hatin.
10. Du belgên k'it'êbê hev va zeliqîn.
11. Wan du cînaran hev r'a şer' kir.
12. Ew hatin cem hev.
13. Hûn k'engê r'astî hev hatin?
14. Dersvan pênc mêtira ji hev dûr r'ûniştin.

Նոր բառեր

mesilhet	զրույց
êvîndar	սիրահար
zeliqîn	կպչել
dersvan	աշակերտ

### Ahmo û R'êşo

Ahmo û R'êşo gundîyên hev bûn. Malên wan li h'emberî hev bûn, zevîyên wan li k'êleka hev bûn, lê Ahmo û R'êşo ji hevdu qet h'ez nedikirin, jinên wan jî hev r'a ne baş bûn. Ew hev r'a wek dijmin bûn. H'emû şer' û p'evçûnên wan jî ber zevî, pez û mirîşkên wan bûn. Gundî h'emû ji bo vê aciz bûn, h'eta r'ojekê muxtar hat cem wan û got: “Êdî bes e! Gerek yek ji we ji gund derk'evê”. Wî du zar' ji bêrika xwe derxist û da wan. Wan ew zar' avîtin. Ahmo deh avît, R'êşo h'evt avît. Bi vî awayî biryar dan û R'êşo h'emû tiştên xwe berev kir, t'evî malbata xwe ji gund derk'et, hîşt çû.

Նոր բառեր և արտահայտություններ

qet	ամենևին, բնավ
Wan h'ez nedikir.	Նրանք չէին սիրում:
p'evçûn	վեճ, վիճարանություն
ji ber	պատճառով, համար
aciz bûn	ձանձրանալ, հոգնել
muxtar	գյուղապետ
Gerek ji gund derk'eve!	Պետք է գյուղից դուրս գա:
zar'	զառ
biryar	որոշում
berev kirin	հավաքել

**Հավելված**

- *Pêk*-ը, *têk*-ը, *lêk*-ը, *jêk*-ը բարդ նախդիրներ են: Դրանք քրդերենի կուրմանջի բարբառում վերջին մի քանի տասնամյակի ընթացքում առավել հաճախակի են գործածվում:

pêkanîn, pêk anîn	կազմակերպել, նախապատրաստել, իրականացնել, ընդգրկել
têkçûn, têk çûn	փչանալ, քանդվել, կորչել, ձախողվել
lêkdan, lêk dan	գումարել, կարգավորել, դասավորել, կաշել իրար
jêkhatin, jêk hatin	համապատասխանել, սազել

Օրինակներ՝

We ew konferansa navnetewî pêkanî.	Դուք այդ միջազգային գիտաժողովը կազմակերպեցիք:
Dîlanê karê xwe pêk anî.	Դիլանն իր գործը կազմակերպեց:
Ji têkçûnê netirsin.	Մի՛ վախեցեք ձախող(վ)ելուց:
Min pirtûkên xwe lêk da.	Ես գրքերս դասավորեցի:
Solên te û cilên te jêk tèn.	Քո կոշիկներն ու շորերը համապատասխանում են իրար:

- Վերջածանցներով կազմված մի շարք բառեր

-baz

destbaz	ձեռնամարտող
fêlbaz	խորամանկ

-bend

sazbend	երաժիշտ
solbend	կոշկակար

-saz

sîlihsaz	զինագործ
malsaz	տուն կառուցող

**Ժողովրդական ասացվածքներ**

Neynîka hev dixî.

Wekî her du ç'e'v hev bibînin wê h'evsûdîyê hev bikin.

Xwelîya mêt û jinê ji hev e.

Bira ji hev cihê dibin, heval ji hev cihê nabin.

R'efê teyra t'ev hev **nabin**.

Du dil **t'evayî** ç'îya didin ser ç'îyayê.

Նոր բառեր և արտահայտություններ

neynîk	հայելի
Wan hev dixî.	Դրանք իրար ես խփում:
Wekî ew hev bibînin.	Եթե նրանք իրար տեսնեն:
h'evsûdî kirin	նախանձել
Wê h'evsûdîyê hev bikin.	Իրար կնախանձեն:
cihê	առանձին
cihê bûn	առանձնանալ, բաժանվել
r'ef	երամ
teyr	արծիվ
t'ev hev bûn	խառնվել իրար
Ewan didin.	Նրանք տալիս են:

## Դաս 34

### Նախաձանցավոր բայեր

**Նախաձանցավոր բայերը** կազմվում են որևէ նախաձանցի և պարզ բայի համակցմամբ: Նախաձանցը, զուգակցվելով պարզ բային, փոխում է դրա իմաստը: Նախաձանցն ու բուն բայը, որպես կանոն, գրվում են միասին:

Նախախաձանցները լինում են բաժանելի ու անբաժանելի: Բաժանելի նախաձանցներով կազմված բայերը տարբեր ժամանակաձևերով խոնարհելիս ենթարկվում են որոշակի կանոնների ու օրինաչափությունների:

1. Քրդերենի կուրմանջի բարբառում բաժանելի նախաձանցներն են *ve-*, *da-*, *r'a-*, *hil-*, *wer-*, *vê-*, *r'û-*:

*Ve-* նախաձանցն արտահայտում է հետ ուղղված գործողություն.

<b>vedan</b>	փորել
<b>veger'în</b>	վերադառնալ
<b>vekirin</b>	բացել
<b>velezîn</b>	պառկել
<b>veqetîn</b>	պոկվել, անջատվել
<b>veqetandin</b>	պոկել
<b>ver'esîn</b>	փսխել
<b>veşartin</b>	թաքցնել
<b>vexwarin</b>	խմել
<b>vek'etin</b>	մեկնվել (որոշ կենդանիների համար)
<b>vegirtin</b>	հյուսել

#### Օրինակներ`

Te p'erê xwe veşart.	Դու քո փողը թաքցրիր:
We av vexwar.	Դուք ջուր խմեցիք:
Xwendekar pirtûk vekir û xwend.	Ուսանողը բացեց գիրքը և կարդաց:

*Da-* նախաձանցն արտահայտում է վերևից ներքև կամ դրսից ներս ուղղված գործողություն:

<b>dadan</b>	փակել, ծածկել
<b>dagirtin</b>	լցնել
<b>danîn</b>	դնել
<b>dak'etin</b>	իջնել
<b>daxistin</b>	ցածրացնել, իջեցնել

<b>dawేశandin</b>	թափ տալ
<b>daqurtandin</b>	կուլ տալ
<b>dagerîn</b>	շրջվել, պտտվել, վերադառնալ
<b>daliqîn</b>	կախվել, կախ ընկնել
<b>dawestîn</b>	խոնարհվել, կռանալ
<b>damezirîn</b>	կազմակերպվել
<b>damezirandin</b>	կազմակերպել
<b>daxwerin</b>	զիջել, ընկրկել
<b>dahištîn</b>	իջեցնել ներքև, կախել
<b>dak’utan</b>	հրելով ներս մտնել, խցկվել

Օրինակներ՝

Gavan ji ç’îyê dak’et deštê.	Նախրապանը սարից իջավ դաշտ:
Anahît ber dêrê dawestyâ.	Անահիտը խոնարհվեց եկեղեցու առջև:
Wî dengê xwe daxist.	Նա իր ձայնն իջեցրեց:
Dijmin dakuta hundur.	Թշնամին ներս խցկվեց:
Ew k’ar gelek hêsa damezirî.	Այդ գործը շատ հեշտ կազմակերպվեց:
Ew mêrik daxwer û deng dernexist.	Այդ տղամարդը զիջեց և ձայն չհանեց:

**R’a-** նախածանցն արտահայտում է բարձրացող կամ տարածվող գործողություն.

<b>r’abûn</b>	վեր կենալ
<b>r’akirin</b>	պռկել, վեր հանել
<b>r’axistin</b>	փռել
<b>r’amûsan</b>	համբուրել
<b>r’awestîn, r’awestin</b>	կանգնել, կանգ առնել
<b>r’azan</b>	քնել
<b>r’aketin</b>	քնել

Օրինակներ՝

Anahît cîyê xwe va r’abû û çû.	Անահիտն իր տեղից վեր կացավ ու գնաց:
Wê kincên şûştî r’axistin.	Նա լվացած շորերը փռեց:
Zar’ok westyâ û r’aza.	Երեխան հոգնեց ու քնեց:

**Hil-** նախածանցն արտահայտում է գործողության ուղղվածություն ներքևից վերև.

<b>hilgirtin</b>	գրկել
<b>hildan</b>	վերցնել, բարձրացնել
<b>hilk'ışın</b>	բարձրանալ
<b>hilk'ışandin</b>	բարձրացնել
<b>hilhatin,</b> <b>hilatin</b>	հասունանալ (խմորի մասին), ելնել (երկնային լուսատուների մասին)
<b>hilbir'ın, hilbir'andin</b>	բարձրացնել
<b>hilweşın</b>	թափահարվել, քանդվել
<b>hilweşandin</b>	քանդել, ավերել

Օրինակներ՝

Dayîkê gazî kir, û zar'ok hilkişya jorê.	Մայրը կանչեց, և երեխան բարձրացավ վերև:
Dayîkê hevîr stra, piştî du saetan hevîr hilat.	Մայրիկը խմոր հունցեց, երկու ժամ հետո խմորը հասունացավ:
Pirtûk k'et erdê, û min hilbirand.	Գիրքն ընկավ գետնին, և ես բարձրացրի:

**Wer-** (որոշ խոսվածքներում՝ *wel*) նախածանցն արտահայտում է գործողության փոփոխությունն մի վիճակից մյուսը, արտահայտում է նաև առարկայի շրջում, ոլորում, փաթաթում:

<b>werdan</b>	ողողել, լվանալ
<b>werkirin</b>	փաթաթել (ինչ-որ բանի շուրջը)
<b>werger'ın</b>	շրջվել, շուռ գալ
<b>werger'andin</b>	շրջել, շուռ տալ
<b>weralın</b>	փաթաթվել, խճճվել
<b>weralandin</b>	փաթաթել, խճճել
<b>werhatin</b>	հավաքվել (ինչ-որ բանի շուրջը), շրջապատել (ինչ-որ բան)
<b>weranîn</b>	շուրջը պտտեցնել, շրջափակել
<b>wergirtin</b>	հագնել (հագուստ)

Օրինակներ՝

Keç'ê fîncan werda.	Աղջիկը ողողեց բաժակը:
Armînê şala pîrê xwe werkir.	Արմինեն տատիկի շալով փաթաթվեց:
Ç'iqilên darê weralyan.	Ծառի ճյուղերը խճճվեցին:
Beroş wergerya û xwerin r'ijya.	Կաթսան շուռ եկավ, և ճաշը թափվեց:

Ew li dora wî bajarî werhatin.	Նրանք շրջապատեցին այդ քաղաքը:
Wan cilên xwe wergirtin û çûn.	Նրանք իրենց հագուստները հագան և գնացին:

**Vê-** նախածանցն արտահայտում է որևէ բան միացնելուն կամ անջատելուն, վառելուն կամ մարելուն առնչվող գործողություն.

<b>vêxistin</b>	վառել, միացնել
<b>vêk'etin</b>	վառվել, միանալ
<b>vêsin</b>	մարել, անջատվել
<b>vêsandin</b>	անջատել

Օրինակներ՝

Min çira vêxist û r'ûniştim ber.	Ես ճրագը միացրի և նստեցի դրա առջև:
Îro r'adîo zû vêket.	Այսօր ռադիոն շուտ միացավ:
Têlêvîzyon vêsya, û ez r'azam.	Հեռուստացույցն անջատվեց, և ես քնեցի:
Min spîçke vêsand û avît erdê.	Ես լուցկին հանգցրի և նետեցի գետնին:

**R'û-** նախածանցն արտահայտում է տարածվող գործողություն որևէ մակերևույթով.

<b>r'ûniştin</b>	նստել
------------------	-------

Օրինակ՝

Jin ber tendûrê r'ûniştin.	Կանայք նստեցին թոնրի առջև:
----------------------------	----------------------------

2. Բայի անբաժանելի նախածանցներն են **a-, bi-, hin- (hen), te-, ni-**: Անբաժանելի նախածանցները լեզվի պատմական զարգացման ընթացքում սերտաձել են բայերին և դարձել դրանց անբաժանելի մաս: Այս նախածանցավոր բայերը հաճախ կարող են ընկալվել որպես պարզ բայեր: Անբաժանելի նախածանցներից կազմված բայերը խոնարհվում են պարզ բայերի նման.

bjartin	ընտրել, վատն ու լավը առանձնացնել իրարից
hinartin	ուղարկել
hingavtin, hingaftin	ծակել, վնասել, հարվածել
temirîn	անջատվել

temirandin	անջատել
nixamtin	ծածկել
alastin	լիզել

Օրինակներ՝

Min nema xwe hinart.	Ես իմ նամակն ուղարկեցի:
Gulên t'ifingê hingavtin dile wî.	Հրացանի գնդակները վնասեցին նրա սիրտը:
Şe'ma ser masê temirî.	Մեղանին դրված մոմը մարեց (բոց.՝ <i>Մեղանի վրայի մոմը մարեց</i> ):
Min pê cilan lingê xwe nixamt.	Ես շորերով ոտքս ծածկեցի:

**Երկխոսություն**

- R'ojbaş.
- Tu çawa yî?
- Spas dikim, baş im.
- Duh na pêr dê, bav, xwîşk û birayê te k'uda çûn?
- Duh na pêr ew çûn K'urdistanê.
- Tu t'enê mayî?
- Erê, ez mala me da t'enê me.
- Te duh teştê xwar?
- Na, me'dê min t'unebû, min tutişt nexwar.
- Tu we'dê da çûyî xebatê?
- Na, ez duh derengî k'etim. Ez hinek dereng çûm.
- Lê tu k'engê hatî malê?
- Ez piştî xebatê hatim malê.
- Te çi xwar?
- Mîn hêker'ûn xwar.
- Te xwe r'a girar çêkir?
- Na, min nikaribû.
- Te hêker'ûn pê çi çêkir?
- Pêşîyê min r'ûnê nivîşk kire t'awê...
- Te rûn kire k'îjan t'awê?
- Mîn r'ûn kire t'awa sor.
- Paşê te çi kir?
- Mîn hêk şikênandin û çelqandin.
- Paşê?
- Ez sekinîm, h'eta r'ûn qijilî, paşê min hêk kir nav t'awê û hêkerûn hazir kir.



- Te xwar?
- Erê, min xwar. Paşê jî min dew vexwar.
- Nûşî can!
- Spas!
- Gelo ew hêker'ûn xweş bû?
- Na, ew hêkerûn bête'm bû.
- Kur'o, te nikaribû xwarinên din çêkî?
- Na, min nikaribû.
- Îro we'dê firavîne û şîvê, k'eremke, were mala me.
- Spas dikim.
- Ser çe'va.

Նոր բառեր և արտահայտություններ

me'de	ախորժակ
we'de	ժամանակ
derengî ketin	ուշանալ
girar	սպաս
r'ûn	յուղ
r'ûnê nivîşk	կարագ
t'awe	թավա
Nûşî can	Անուշ լինի (ուտելիք):
te'm, tam	համ
bête'm	անհամ
Ger tu çêkî (Ger tu çêbikî).	Եթե դու պատրաստես:
dew, çelqemast	թան

## Դաս 35

### Անցյալ կատարյալ (նախաձանցավոր բայեր)

Նախաձանցավոր բայերը անցյալ կատարյալ ժամանակաձևով խոնարհելիս պետք է հաշվի առնել բուն բայի անցողական, անանցողական, պատճառական լինելը:

**Vekirin** (անցյալի հիմքը՝ **vekir-**) անցողական բայը խոնարհվում է հետևյալ կերպ.

I դեմք	Min vekir.	Ես բացեցի:
II դեմք	Te vekir.	Դու բացեցիր:
III դեմք	Wî/wê vekir.	Նա բացեց:

I դեմք	Me vekir.	Մենք բացեցինք:
II դեմք	We vekir.	Դուք բացեցիք:
III դեմք	Wan vekir.	Նրանք բացեցին:

Նախաձանցավոր բայերի ժխտականը կազմելիս **ne-** ժխտական նախամասնիկը դրվում է բայի նախաձանցից հետո, այսինքն՝ բուն բայից առաջ:

I դեմք	Min <b>venekir</b> .	Ես չբացեցի:
II դեմք	Te <b>venekir</b> .	Դու չբացեցիր:
III դեմք	Wî/wê <b>venekir</b> .	Նա չբացեց:

I դեմք	Me <b>venekir</b> .	Մենք չբացեցինք:
II դեմք	We <b>venekir</b> .	Դուք չբացեցիք:
III դեմք	Wan <b>venekir</b> .	Նրանք չբացեցինք:

**Veger'ın** (անցյալի հիմքը՝ **veger'ya-**) անանցողական բայը խոնարհվում է հետևյալ կերպ.

Դրական խոնարհում

I դեմք	Ez veger'yam.	Ես վերադարձա:
II դեմք	Tu veger'yay(î).	Դու վերադարձար:
III դեմք	Ew veger'ya.	Նա վերադարձավ:

I դեմք	Em veger'yan.	Մենք վերադարձանք:
II դեմք	Hûn veger'yan.	Դուք վերադարձար:
III դեմք	Ew veger'yan.	Նրանք վերադարձան:

Ժխտական խոնարհում

I դեմք	Ez <b>veneger'</b> yam.	Ես չվերադարձա:
II դեմք	Tu <b>veneger'</b> yay(î).	Դու չվերադարձար:
III դեմք	Ew <b>veneger'</b> ya.	Նա չվերադարձավ:

I դեմք	Em <b>veneger'</b> yan.	Մենք չվերադարձանք:
II դեմք	Hûn <b>veneger'</b> yan.	Դուք չվերադարձաք:
III դեմք	Ew <b>veneger'</b> yan.	Նրանք չվերադարձան:

Նախաձանցավոր պատճառական բայերը խոնարհելու ժամանակ հարկ է հաշվի առնել պատճառական բայերի խոնարհման առանձնահատկությունները (տե՛ս Դաս 29):

**Veger'andin** (անցյալի հիմքը՝ **veger'and-**) բայը խոնարհվում է հետևյալ կերպ.

Դրական խոնարհում

I դեմք	Min <b>veger'and.</b>	Ես վերադարձրի:
II դեմք	Te <b>veger'and.</b>	Դու վերադարձրիր:
III դեմք	Wî/wê <b>veger'and.</b>	Նա վերադարձրեց:

I դեմք	Me <b>veger'and.</b>	Մենք վերադարձրինք:
II դեմք	We <b>veger'and.</b>	Դուք վերադարձրիք:
III դեմք	Wan <b>veger'and.</b>	Նրանք վերադարձրին:

Ժխտական խոնարհում

I դեմք	Min <b>veneger'and.</b>	Ես չվերադարձրի:
II դեմք	Te <b>veneger'and.</b>	Դու չվերադարձրիր:
III դեմք	Wî/wê <b>veneger'and.</b>	Նա չվերադարձրեց:

I դեմք	Me <b>veneger'and.</b>	Մենք չվերադարձրինք:
II դեմք	We <b>veneger'and.</b>	Դուք չվերադարձրիք:
III դեմք	Wan <b>veneger'and.</b>	Նրանք չվերադարձրին:

Անբաժանելի նախաձանցներով կազմված բայերը խոնարհվում են պարզ բայերի նման. ժխտականը կազմելիս, սակայն **ne-** ժխտական նախամասնիկը չի դրվում անբաժանելի նախաձանցից հետո:

**Bijartin** (անցյալի հիմքը՝ **bijart-**) բայը խոնարհվում է հետևյալ կերպ.

Դրական խոնարհում

I դեմք	Min bijart	Ես ընտրեցի
II դեմք	Te bijart	Դու ընտրեցիր
III դեմք	Wî/wê bijart	Նա ընտրեց

I դեմք	Me bijart	Մենք ընտրեցինք
II դեմք	We bijart	Դուք ընտրեցիք
III դեմք	Wan bijart	Նրանք ընտրեցին

Ժխտական խոնարհում

I դեմք	Min <b>ne</b> bijart	Ես չընտրեցի
II դեմք	Te <b>ne</b> bijart	Դու չընտրեցիր
III դեմք	Wî/wê <b>ne</b> bijart	Նա չընտրեց

I դեմք	Me <b>ne</b> bijart	Մենք չընտրեցինք
II դեմք	We <b>ne</b> bijart	Դուք չընտրեցիք
III դեմք	Wan <b>ne</b> bijart	Նրանք չընտրեցին

**Nazê û Zînê**

Nazê û Zînê xûşk in. Sibê zû ew r’abûn, nan xwerin, çay vexwerin û çûn kewşen. Nazê deng bihîst û wêda r’evî. Li ber kêvir hêlîn hebû. Di hêlînê da çend cûcîk hebûn. Nazê gazî Zînê kir:

– Zînê, hela were binhêr’e evana çî ne?

Zînê hat, hêlînê nihêr’î û got:

– Evana cûcîkên kewan e.

Nazê xwest cûcîkan hilde, lê Zînê nehîşt û got:

– Meriv destê xwe nade cûcîkan.

**Cotkar**

Cotkar her r’oj diçû zevîya xwe da dixebitî. R’ojekê, berbangê zû ew çû, k’ete nav baxçe, hinek xwelî veda, nişkêva dît ku gurek jî hat, dak’uta nav baxçên gundîya. Bext r’a ber sûra baxçe du kûçîk r’abûn û ser gur da girtin. Gava kûçîka êrîş kirin, gur ji nav baxçe r’evî. Her du kûçîka da pey gur. Gundîya e’wtîna kûçîkan bihîst û ji malên xwe derk’etin. Gur gund va r’evî çû.

Նոր բառեր և արտահայտություններ

Were!	Արհ’:
cûcîk	ճուտ

kew	կաքավ
Wî xwest hilde.	Նա ցանկացավ վերցնել:
Ew nade.	Նա չի տալիս:
Tu dixebitî.	Դու աշխատում ես:
sûr	ցանկապատ

### Destûr

Xortê malê sibê r'abû, cilên xwe wergirt, r'extê xwe girêda, t'ifinga xwe ya nêç'îrê avîte milê xwe, hespê xwe zîn kir û bizma wî kire devê wî. Sancûla te'jîyê xwe kire stûyê wî. Xort li hespê siwar bû û hesp ajot ber p'encera bavê xwe. Ew ji bavê xwe destûr xwest ku her'e nêç'îrê. Bav ji pencerê nihêr'î û got.

– Kur'ê min, te k'incê xwe wergirt û sîleh girêda, te xwe bona nêç'îrê amade kir. Te bi xwe destûra xwe îdfî da.

Նոր բառեր և արտահայտություններ

destûr	թույլտվություն
wergirtin	հագնել
r'ext	հանդերձանք, զենք ու զրահ
girêdan	կապել
bizm	սանձ
sancûl	շան վզնոց
te'jî, ta'jî	որսորդական շուն, բարակ
sîyar bûn, siwar bûn	հեծնել
destûr	թույլտվություն
sîleh	զենք

**Վարժություն 1.** Թարգմանել հետևյալ նախադասությունները:

1. Hûn sibehê di saet çendan va r'abûn?
2. We k'îjan p'encere vekir?
3. Ez sibehê zû r'abûm.
4. Îşev em ze'f dereng r'azan.
5. Em r'ûniştin ser keviran.
6. Ahmed sêşemê çî saetê veşer'ya?
7. Min li qewhexanê çay û qewhe vexwar.
8. Min têlêvîzyon vêxist û lê nihêr'î.

**Վարժություն 2.** Փակագծերում նշված բայերը կիրառել անցյալ կատարյալ ժամանակաձևով:

1. Duhu tu ji dersê dereng (veşer'în).
2. R'oja sêşemê bavê Miraz pê e'rebê (çûn) xebatê.
3. Ez (r'ûniştin) ser k'ursîyê.
4. Anna r'oja çarşemê k'engê

(veger'în)? 5. Ew avahî ji bê (werger'în). 6. Te zar'oka xwe (hilgirtin), û hûn ger'yan.

**Վարժություն 3.** Հետևյալ նախածանցավոր բայերը խոնարհել անցյալ կատարյալ ժամանակաձևով ու կազմել նախադասություններ:

Անորոշ դերբայ		Բայի անցյալի հիմք
r'ûniştin	նստել	r'ûnişt-
vedan	փորել	veda-
vegirtin	հյուսել	vegirt-
vekirin	բացել	vekir-
veşartin	թաքցնել	veşart-
vexwarin	խմել	vexwar-
dadan	փակել, ծածկել	dada-
dagirtin	լցնել	dagirt-
r'abûn	վեր կենալ	r'abû-
r'axistin	փռել	r'axist-
r'azan	քնել	raza-
<b>r'aketin</b>	<b>քնել</b>	<b>r'aket-</b>
r'awestin, r'awestîn	կանգնել, կանգ առնել	r'awestya-
hilgirtin	գրկել	hilgirt-
hildan	վերցնել, բարձրացնել	hilda-
vêxistin	վառել, միացնել	vêxist-
werger'în, werger'în	շրջվել, շուր գալ	werger'ya-; werger'ya-
ver'esîn	փսխել, հետ տալ	ver'esya-
hilk'îşandin	բարձրացնել	hilk'îşand-
vêsandin	անջատել	vêsand-
damezirandin	կազմակերպել	damezirand-
daqurtandin	կուլ տալ	daqurtand-

**Վարժություն 4.** Թարգմանել հետևյալ նախադասությունները:

1. Դու երեկ ո՞ւշ վերադարձար: 2. Առավոտյան դուք ե՞րբ նախաճաշեցիք: 3. Երեկ չէ առաջին օրը եղբայրդ Երևանից վերադարձա՞վ: 4. Գարնանը թռչունները վերադարձան տաք երկրներից: 5. Ես երեխային գրկեցի, վեր կացա և դուրս գնացի:

*Ժողովրդական սուսցվածքներ*

Ez mêt, tu mêt, k'î ye ji me şêr?

Bahar hat, r'ûmeta k'incê zivistanê hilat.

Min bûkek anî lez bi lez,

Sivka malê dîsa ez.

Նոր բառեր

lez	շտապ
r'ûmet	պատիվ

## Դաս 36

### Հարցական դերանուններ (մաս առաջին)

Հարցական դերանուններն արտահայտում են հարցում անձի, առարկայի, դրա չափի, որակի, ձևի, թվի, գործողության տեղի, ժամանակի մասին:

1. **Կ'ի** (ն<sup>օ</sup>վ) հարցական դերանունը գործածվում է անձի մասին հարցնելիս.

K'î ye?	Ո՞վ է:
K'î çû?	Ո՞վ գնաց:
Tu k'î yî?	Դու ո՞վ ես:
Ew k'î ne?	Նրանք ովքե՞ր են:
K'î dixwaze?	Ո՞վ է ուզում:
K'î dibêje?	Ո՞վ է ասում:
K'î diçe?	Ո՞վ է գնում:
K'î tê?	Ո՞վ է գալիս:
K'î dixûne?	Ո՞վ է կարդում:
K'î dinivîse?	Ո՞վ է գրում:
K'î dixwaze her'e seyrangê?	Ո՞վ է ուզում զբոսանքի գնալ:
K'î got ku ez ermenî me?	Ո՞վ ասաց, որ ես հայ եմ:

ա) **Կ'ê** (ն<sup>օ</sup>ւմ) հարցական դերանունը ածանցյալ է **կ'ի** դերանունից, այլ ձևակերպմամբ՝ **կ'ի**-ն ուղիղ հոլովածով է, իսկ **կ'ê**-ն դրա թեք հոլովովածն է.

Qîza k'ê?	Ո՞ւմ աղջիկը:
Mala k'ê?	Ո՞ւմ տունը
Armên lawê k'ê ye?	Արմենն ո՞ւմ որդին է:
Ew jin dayka k'ê ye?	Այն կինն ո՞ւմ մայրն է:
Tu k'ê dibînî?	Դու ո՞ւմ ես տեսնում:

բ) Անցյալ կատարյալ, անկատար անցյալ, վաղակատար ներկա, վաղակատար անցյալ, ըղձական անցյալ ժամանակաձևերում (անցողական բայերի խոնարհման ժամանակ) որպես ենթակա կիրառվում է **կ'ê** ձևը.

K'ê got?	Ո՞վ ասաց:
K'ê dît?	Ո՞վ տեսավ:
K'ê xwend?	Ո՞վ կարդաց:
K'ê nivîsî?	Ո՞վ գրեց:



Օրինակներ՝

– K'ê birîna min girêda?	– Ո՞վ վերքս կապեց:
– Wê birîna te girêda.	– Նա կապեց քո վերքը:

– K'ê nan k'ir'îbû?	– Ո՞վ էր հաց գնել:
– Min nan k'ir'îbû.	– Ես էի հաց գնել:

– K'ê gerek name binivîsya?	– Ո՞վ պետք է նամակ գրեր:
– Te gerek name binivîsya.	– Նա պետք է նամակ գրեր:

զ) Անցյալ կատարյալ և անկատար անցյալ ժամանակաձևերով անանցողական բայերը խոնարհելիս կիրառվում է *k'î* ձևը.

K'î çû?	Ո՞վ գնաց:
K'î hat?	Ո՞վ եկավ:
K'î ket?	Ո՞վ ընկավ:

դ) Հարկ է նշել սակայն, որ խոսակցականում հաճախ անգամ լեզվակիրներն են շփոթում և խառը կիրառում *k'î* և *k'ê* դերանունները.

K'î got?	Ո՞վ ասաց:
K'ê got?	

ե) *K'î* և *k'ê* հարցական դերանունները կիրառվում են նաև նախդիրների, հետադրությունների, կապերի ու կապական բառերի հետ.

Te ji k'ê pirsî?	Դու ումի՞ց հարցրիր:
Ji k'ê dixwazî bipirsî?	Ումի՞ց ես ուզում հարցնել:
Ew ji k'ê ditirse?	Նա ումի՞ց է վախենում:
We ji k'ê pirsî?	Դուք ումի՞ց հարցրիք:
Ew ser k'ê dik'ene?	Նա ո՞ւմ վրա է ծիծաղում:
Te ew k'itêb ji k'ê hilda?	Դու այդ գիրքն ումի՞ց վերցրիր:
Te ew sêv k'ê r'a kirî?	Դու այդ խնձորներն ո՞ւմ համար գնեցիր:
Te ew gune k'ê va girêda?	Դու այդ մեղքն ո՞ւմ վերագրեցիր (բռց.՝ <i>Շու այդ մեղքն ում կապեցիր</i> ):
Te ew sêv bona k'ê kirî?	Դու այդ խնձորներն ո՞ւմ համար գնեցիր:

2. *Çawa, çawan, ça, çilo, çere* (ինչպե՞ս, ինչպիսի՞) հարցական դերանունները գործածվում են առարկայի կամ գործողության ձևի մասին հարց ուղղելիս.

Tu çawan î? (Tu çawa yî?)	Դու ինչպե՞ս ես:
K'êfa te çawa ye?	Ինչպե՞ս է տրամադրությունդ:
Tu çawa wê qutîyê vedikî?	Դու ինչպե՞ս ես բացում այդ սնդուկը:
Ew mala çawa dixwaze?	Նա ինչպիսի՞ տուն է ուզում:

3. **K'engê, k'ingê** (ե՞րբ) հարցական դերանունը գործածվում է գործողության ժամանակի վերաբերյալ հարց ուղղելիս.

– Anahît k'engê hat?	– Անահիտը ե՞րբ եկավ:
– Anahît hingê hat.	– Անահիտն այդ ժամանակ եկավ:
– Aram k'ingê tê?	– Արամը ե՞րբ է գալիս:
– Aram naha tê.	– Արամը հիմա է գալիս:

– Kerem k'engê dest bi xwendinê kiriye?	– Քյարամը ե՞րբ է սկսել սովորել:
– Ew r'oja duşemê dest pê kiriye.	– Նա երկուշաբթի է սկսել:
– K'engê we k'arê xwe xilaz kir?	– Դուք ե՞րբ ավարտեցիք ձեր գործը:
– Me par, meha Adarê k'arê xwe xilaz kir.	– Մենք անցյալ տարի՝ մարտ ամսին, ավարտեցինք:

ա) **Çi çaxê, çî wextê, çî demê, çî we'dê** (բոց.՝ ի՞նչ ժամանակ, *n'p* ժամանակ) բառակապակցությունները կիրառվում են գործողության ժամանակի մասին հարց ուղղելիս.

Tu çîçax hatî?	Դու ե՞րբ եկար:
----------------	----------------

4. **Çir'a, çîma** (ինչո՞ւ) դերանունները գործածվում են գործողության պատճառի մասին հարցնելիս.

– Tu çir'a naxebitî?	– Դու ինչո՞ւ չես աշխատում:
– Ez naxwazim.	– Ես չեմ ուզում:
Tu çir'a dereng hatî?	Դու ինչո՞ւ ուշ եկար:

5. **K'u** (որտե՞ղ) հարցական դերանունը կիրառվում է գործողության տեղի մասին հարցնելիս.

Tu k'u yî?	Դու որտե՞ղ ես:
------------	----------------

ա) **K'u** հարցական դերանունը կիրառվում է նախդիրների ու հետադրությունների հետ.

– Ew li k'u ye?	– Նա որտե՞ղ է:
– Ew li vir e.	– Նա այստեղ է:
Tu ji k'u hatî?	Դու որտեղի՞ց եկար:
Tu k'u va hatî?	Դու որտեղի՞ց եկար:

բ) *K'ê derê*-ն (*k'êderê*, *k'îderê*), *k'u derê*-ն (*k'uderê*) կիրառվում են գործողության տեղի մասին հարց ուղղելիս: Դրանք կիրառվում են նաև նախդիրների ու հետադրությունների հետ:

Hûn k'ê derê dijîn?	Դուք որտե՞ղ եք ապրում:
– Ew li k'ê derê ye?	– Նա որտե՞ղ է:
– Ew li vê derê ye.	– Նա այստեղ է:
– Ew ji k'êderê hat?	– Նա որտե՞ղից եկավ:
– Ew ji vê derê hat.	– Նա այստեղից եկավ:
– Ew k'ê derê va hat?	– Նա որտե՞ղից եկավ:
– Ew wê derê va hat.	– Նա այնտեղից եկավ:

6. *K'uda* (n' ր) հարցական դերանունը կիրառվում է գործողության տեղի մասին հարցնելիս.

– Ew k'uda diçe?	– Նա n' ր է գնում:
– Ew diçe Yêrêvanê.	– Նա Երևան է գնում:

Վերոնշյալ հարցական դերանունները արական կամ իգական սեռի գոյականների հետ կիրառվելիս որևէ վերջավորություն չեն ստանում, փոխանվանաբար չեն կիրառվում, *-a* կամ *-an* հոգնակերտ չեն ստանում:

7. *Çend* (քանի՞) հարցական դերանունը կիրառվում է թվի, քանակի մասին հարց ուղղելիս.

Tu çend salî yî?	Դու քանի՞ տարեկան ես:
Çend zar'ok vir in?	Քանի՞ երեխա է այստեղ:

ա) *Çend*-ի հետ կիրառվող հոգնակի գոյականը կարող է ստանալ *-a* կամ *-an* հոգնակերտ.

Çend nanan bînim?	Քանի՞ հաց բերեմ:
Tu çend salan Moskvayê mayî?	Դու քանի՞ տարի մնացիր Մոսկվայում:
Tu îsal çend cara çûyî Yêrêvanê?	Դու այս տարի քանի՞ անգամ գնացիր Երևան:
Te nava çend r'ojan da kitêb xwend?	Դու քանի՞ օրում գիրքը կարդացիր:

բ) Հաճախ *çend* հարցական դերանունը կիրառվում է փոխանվանաբար ստանալով *-a* կամ *-an* հոգնակերտ.

Te navê çend zar'okan nivîsî?	Դու քանի՞ երեխայի անուն գրեցիր:
Te navê çendan nivîsî?	Դու քանիսի՞ անունը գրեցիր:

գ) *Çend* հարցական դերանունը կիրառվում է նաև ժամը հարցնելիս.

Saet çend e?	Ժամը քանի՞ սն է:
Mêvan saeta çenda tèn?	Հյուրերը ժամը քանիսի՞ն են գալիս:

8. *Çiqas (çiqɑ)* (ինչքա՞ն, որչա՞փ) հարցական դերանունը գործածվում է առարկայի, առարկաների կամ երևույթի ամբողջական ծավալի, քանակի մասին հարց ուղղելիս.

Tu min çiqas h'ez dikî?	Դու ինձ ինչքա՞ն ես սիրում:
Li wir çiqɑ birinc heye?	Այդտեղ ինչքա՞ն բրինձ կա:

ա) *Çiqas* հարցական դերանունը կարող է նաև կիրառվել հոգնակի գոյականի հետ.

Te çiqas merivan r'a qencî kir?	Դու քանի՞ (բոց.՝ <i>ինչքա՞ն</i> ) մարդու համար լավություն արեցիր:
Te xurek seba çiqas zar'oka hazir kir?	Դու ուտելիքը քանի՞ (բոց.՝ <i>ինչքա՞ն</i> ) երեխայի համար պատրաստեցիր:

*Pê, lê, jê, tê* բարդ նախդիրները կիրառվում են զեղչված ուղիղ խնդրի, հանգման, անջատման անուղղակի խնդիրների փոխարեն (որոնք հայտնի են համատեքստից):

Ընդունված է այս նախդիրները գրել պարզ բայի հետ, ներկայում, սակայն, հանդիպում են և՛ միասին, և՛ առանձին գրված տարբերակները:

Բարդ նախդիրներով կազմված բայերը կիրառվում են, երբ նախադասության ուղիղ, անջատման կամ հանգման անուղղակի խնդիրները զեղչված են:

*Pê (bi+wê/wî)* նախդիրն արտահայտում է որևէ մեկի կամ ինչ-որ բանի նկատմամբ կատարվող գործողություն:

pê' enîn, pê k' enîn	ծիծաղել (որևէ մեկի վրա, ինչ-որ բանի վրա), ծաղրել (որևէ մեկին, ինչ-որ բան)
pê' etin, p' ê ketin	կպչել (որևէ մեկին, ինչ-որ բանի)
pêkarin, pê karin	գլուխ հանել (որևէ մեկից, ինչ-որ բանից), կարողանալ, կարող լինել (ինչ-որ մեկի նկատմամբ, կարող լինել՝ անելու ինչ-որ բան)

#### Օրինակներ՝

Hevalê min k'et erdê, ez pêk'enyam.	Ընկերս ընկավ գետնին, ես նրա վրա ծիծաղեցի:
Kur'ê min çû ber şêr', min pê nikaribû.	Որդիս գնաց պատերազմ, ես չկարողացա նրա վրա ազդել:

*Pê* նախդիրով կազմված բային երբեմն կարող է նախորդել որևէ գոյական և այլ իմաստ հաղորդել բային:



ç'e'v <b>pê</b> k'etin, ç'av <b>pê</b> k'etin	տեսնել (որևէ մեկին, ինչ-որ բան)
dest <b>pê</b> kirin, dest <b>pê</b> kirin	սկսել (ինչ-որ բան)
derk <b>pê</b> kirin	տեղեկացնել (որևէ մեկին, ինչ-որ բան)
e'mel <b>pê</b> kirin	օգտագործել (որևէ մեկին, ինչ-որ բան)
zor <b>pê</b> kirin	ճնշել, ստիպել (որևէ մեկին, ինչ-որ բան)
qerf <b>pê</b> kirin	ծաղրել (որևէ մեկին, ինչ-որ բան)
p'al <b>pê</b> danîn	հենվել (որևէ մեկին, ինչ-որ բանի)
r'a <b>pê</b> kirin	ենթարկել (որևէ մեկին)
serî <b>pê</b> danîn	ենթարկել (որևէ մեկին)

Օրինակներ՝

Birayê min wir bû: ez ç'e'v <b>pê</b> ketim û şa bûm.	Եղբայրս այնտեղ էր, ես նրան տեսա, շատ ուրախացա:
Ser masê şîrinayî hebû, zar'ok ç'av <b>pê</b> ket û xwar.	Մեղանին քաղցրավենիք կար, երեխան տեսավ, կերավ:
Min ew şuxul dest <b>pê</b> kir.	Ես այդ գործը սկսեցի:
Dijmin zor <b>pê</b> kir û xwelî ji destê wî hilda.	Թշնամին ճնշեց և հողը նրա ձեռքից վերցրեց:
Kinca wî ne r'ind bû: cînara qerf <b>pê</b> kir.	Նրա զգեստը լավը չէր. հարևանները ծաղրեցին:

*Lê* (li+wê/wî) **նախդիրն** արտահայտում է առարկայի մակերեսին ուղղված գործողության իմաստ.

lêdan, lê dan	հարվածել, խփել (որևէ մեկին, ինչ-որ բանի)
lêxistin, lê xistin	հարվածել, խփել (որևէ մեկին, ինչ-որ բանի)
lêk'etin, lê k'etin	դիպչել, կպչել (որևէ մեկին, ինչ-որ բանի)
lêgerîn, lê gerîn	փնտրել (որևէ մեկին, ինչ-որ բան)
lêkirin, lê kirin	հագցնել, համապատասխանել (որևէ մեկին, ինչ-որ բան)
lêhatin, lê hatin	համապատասխան լինել, օգտակար լինել (որևէ մեկին, ինչ-որ բանի)

Օրինակներ՝

Ez law biç'ûk e. Te çir'a lêxist?	Այդ տղան փոքր է: Դու ինչո՞ւ խփեցիր:
Pişta pîrê êşya, bijîşk	Տասիկի մեջքը ցավեց, բժիշկը դեղ քսեց:

derman lê da.	
Hayk lêda, serê dijmin şikênand.	Հայկը խփեց, թշնամու գլուխը կոտրեց:
Ew derman lêhat, nexweş qenc bû.	Այդ դեղն օգտակար եղավ, հիվանդն առողջացավ:
Pirtûka min wenda bû, ez lê ger'yam, min nedît.	Իմ գիրքը կորավ, ես այն փնտրեցի, չգտա:

*Lê* նախդիրով կազմված բայերից առաջ հաճախ կիրառվում է որևէ գոյական և այլ իմաստ է հաղորդում բային.

te'n lê dan, te'n lê xistin	վիրավորել, ցավ պատճառել (որևէ մեկին)
t'emaşe lê kirin	նայել, դիտել (որևէ մեկին, ինչ-որ բանի)
dest lê dan	ձեռք տալ (որևէ մեկին, ինչ-որ բանի)

Օրինակներ՝

Ew xort ewqas bilind bû, t'emama t'emaşe lê kir.	Այդ պատանին այնքան բարձրահասակ էր, որ բոլորն ակամայից նայեցին [նրան]:
Aanahîte hevala xwe dît û tan <b>lê</b> xist.	Անահիտն իր ընկերուհուն տեսավ ու վիրավորեց [նրան]:

*Jê* (**ji+wê/wî**) արտահայտում է որևէ բանից անջատվելով կատարվող գործողություն.

jêkirin, jê kirin	կտրել, պոկել (ինչ-որ բան)
jêbirîn, jê birîn	կտրել, անջատել (ինչ-որ բան, ինչ-որ բանից)
jêstendin, jê stendin	գնել, վերցնել (որևէ մեկից)
jêxeyîdîn, jê xeyîdîn	նեղանալ (որևէ մեկից)
jêbirin, jê birin	հաղթել (որևէ մեկին), կորզել հաղթանակը (որևէ մեկից)
jêçûn, jê çûn	հեռանալ (որևէ մեկից, ինչ-որ բանից)

Օրինակներ՝

Min pirtûk jê stend.	Ես (նրանից) վերցրի գիրքը:
Hevalê min soz da, lê nehat, û ez jê xeyîdîm.	Ընկերս խոստացավ, բայց չեկավ, և ես [նրանից] նեղացա:

**Tê** (**di+wê/wî**) նախդիրն արտահայտում է առարկայի ներսն ուղղված կամ առարկայի ներսից եկող գործողություն.

têk'etin, tê k'etin	մտնել (ինչ-որ բանի մեջ)
têkirin, tê kirin	մտցնել, դնել (ինչ-որ բանի մեջ)
têgihîştin, tê gihîştin	հասկանալ, ընկալել, հասունանալ (ինչ-որ բան)
têçûn, tê çûn	լքվել, հոսել (ինչ-որ բանի մեջ)
têxistin, tê xistin	մտցնել, ներդնել (ինչ-որ բանի մեջ)

Օրինակներ՝

Bila zar'ok têkevin dersxanê.	Թող երեխաները մտնեն դասարան:
Were, têkeve odeya min.	Արի՛, մտի՛ր իմ սենյակ:
Şerabê têke nav qedehê.	Գինին լցրո՛ւ գավաթի մեջ:

**Tê** նախդիրը կիրառվում է նաև նախածանցավոր և նախդրավոր բայերի հետ.

têwerdan, tê <b>werdan</b>	ողողել (ինչ-որ բան)
têderxistin, tê <b>derxistin</b>	հասկանալ, ընկալել, կռահել (ինչ-որ բան)

Օրինակներ՝

Wê av têwerda û şerbik şûşt.	Նա գավաթը ջրով ողողեց և լվաց:
Min têderxist ku te derew dikir.	Ես հասկացա, որ դու սուտ էիր ասում:

### Mecîd û K'erem

Mecîd û K;erem bira ne. R'okê her du bira hespan sîyar bûn û berbi ç'îyan çûn.

Rê va Mecîd pirsî:

– K'erem, ev çî ye?

K'erem bersîv da:

– Eva teyr e, teyrê ç'îyan e.

Mecîd ji hespê peya bû, berbi teyr r'evî. Nişkêva Mecîd sekinî û got:

– K'erem, ev teyr birîndar e.

Her du bira têderxistin ku baskê teyr şkestibû. Nêçîrvanan xwestibû teyr bigirin.

Mecîd hêdîka teyr hilda û bir malê. Mecîd baskê teyr derman kir, girêda. Çendekî şûnda teyr qenc bû, û Mecîd ew teyr berbi ç'îyan berda.

Նոր բառեր և արտահայտություններ

peya bûn	իջնել
bask	թև, բազուկ
Ew şkestibû.	Դա կոտրվել էր:
Wî xwestibû.	Նա ցանկացել էր:
Wan xwast bigirin.	Նրանք ցանկացան բռնել:
girêdan	կապել

## Դաս 43

### Անցյալ կատարյալ ժամանակաձև (բարդ նախդիրներով կազմված բայեր)

Բարդ նախդիրներով կազմված բայերը խոնարհելու ժամանակ հարկ է հաշվի առնել այդ բայերի անցողական, անանցողական, պատճառական լինելը:

*Lêxistin* (անցյալի հիմքը՝ *lêxist-*) անցողական բայը խոնարհվում է հետևյալ կերպ.

I դեմք	Min lêxist.	Ես խփեցի (որևէ մեկին, ինչ-որ բանի):
II դեմք	Te lêxist.	Դու խփեցիր (որևէ մեկին, ինչ-որ բանի):
III դեմք	Wi/wê lêxist.	Նա խփեց (որևէ մեկին, ինչ-որ բանի):

I դեմք	Me lêxist.	Մենք խփեցինք (որևէ մեկին, ինչ-որ բանի):
II դեմք	We lêxist.	Դուք խփեցիք (որևէ մեկին, ինչ-որ բանի):
III դեմք	Wan lêxist.	Նրանք խփեցին (որևէ մեկին, ինչ-որ բանի):

Նախդրավոր բայերի ժխտականը կազմելու ժամանակ *ne-* ժխտական նախամասնիկը դրվում է բուն բայից առաջ.

I դեմք	Min lê <b>ne</b> xist.	Ես չ խփեցի (որևէ մեկին, ինչ-որ բանի):
II դեմք	Te lê <b>ne</b> xist.	Դու չ խփեցիր (որևէ մեկին, ինչ-որ բանի):
III դեմք	Wi/wê lê <b>ne</b> xist.	Նա չ խփեց (որևէ մեկին, ինչ-որ բանի):

I դեմք	Me lê <b>ne</b> xist.	Մենք չխփեցինք (որևէ մեկին, ինչ-որ բանի):
II դեմք	We lê <b>ne</b> xist.	Դուք չ խփեցիք (որևէ մեկին, ինչ-որ բանի):
III դեմք	Wan lê <b>ne</b> xist.	Նրանք չ խփեցին (որևէ մեկին, ինչ-որ բանի):

Եթե նախդրավոր բայի երկրորդ բաղադրիչը *karin*, *zanîn* բայերն են, ապա պետք է հաշվի առնել *karin*, *zanîn* բայերի խոնարհման առանձնահատկությունները, օրինակ՝

Te pêkaribû.	Te pê <b>n</b> ikaribû
--------------	------------------------

Բարդ նախդիրներով կազմված պատճառական բայերը խոնարհելիս հարկ է հաշվի առնել պատճառական բայերի խոնարհման առանձնահատկությունները (տե՛ս Դաս 29):

*Jêqetandin* (անցյալի հիմքը՝ *jêqetand-*) պատճառական բայը խոնարհվում է հետևյալ կերպ.

I դեմք	Min jêqetand.	Ես պոկեցի (որևէ մեկից, ինչ-որ բանից):
II դեմք	Te jêqetand.	Դու պոկեցիր (որևէ մեկից, ինչ-որ բանից):
III դեմք	Wî/wê jêqetand.	Նա պոկեց (որևէ մեկից, ինչ-որ բանից):

I դեմք	Me jêqetand.	Մենք պոկեցինք (որևէ մեկից, ինչ-որ բանից):
II դեմք	We jêqetand.	Դուք պոկեցիք (որևէ մեկից, ինչ-որ բանից):
III դեմք	Wan jêqetand.	Նրանք պոկեցին (որևէ մեկից, ինչ-որ բանից):

Ժխտական խոնարհում

I դեմք	Min jêneqetand.	Ես չպոկեցի (որևէ մեկից, ինչ-որ բանից):
II դեմք	Te jêneqetand.	Դու չպոկեցիր (որևէ մեկից, ինչ-որ բանից):
III դեմք	Wî/wê jêneqetand.	Նա չպոկեց (որևէ մեկից, ինչ-որ բանից):

I դեմք	Me jêneqetand.	Մենք չպոկեցինք (որևէ մեկից, ինչ-որ բանից):
II դեմք	We jêneqetand.	Դուք չ պոկեցիք (որևէ մեկից, ինչ-որ բանից):
III դեմք	Wan jêneqetand.	Նրանք չ պոկեցին (որևէ մեկից, ինչ-որ բանից):

**Երկխոսություն**

- R’ojbaş!
- R’ojbaş! K’eremke, r’ûnê!
- Spas dikim.
- Duh ew çi deng bû ji h’eyata te?
- Mozên min merivek nenas dîtin, dan dû wî.
- Moz pey xelkê k’etin?
- Erê, moz pey wî merivî k’etin.
- Wî çi kir?
- T’utişt nekir. Ewî kal bû, qewata wî t’unebû, gelek tirsya!
- Moza lêda?
- Na, lêneexistin, ew meriv xwe veşart.
- De baş e!
- Kewarek jî duh destê min va ket, şikest.

- H’eyfa te **pê** hat, ne?
- Erê, welleh, h’eyfa min wê kewarê hat!
- Çend kewarên te hene?
- Deh-yazdeh pêtagên min hene.
- Mozên te gelek in?
- Belê, êp’êce mêşhingivên min in.
- Te îsal baharê ew k’uda birin?
- Min îsal kewar birin Lor’îyê.
- Mozên te r’ind hingiv dan?
- Erê.
- Bibexşîne, ez gerek naha her’im, şuxulê min heye.
- Ser ç’eva!

Նոր բառեր և արտահայտություններ

moz, mêşhingiv	մեղու
nenas	անձանոթ
xelk, xelq	ժողովուրդ, օտար
qewat	ուժ
lêdan, lêxistin	խփել
heyf pê hatin	ափսոսալ (ինչ-որ բան)
kewar, p’êt’ag	փեթակ
H’eyfa min p’êt’agê hat.	Ես ափսոսացի փեթակը:

**Վարժություն 1.** Թարգմանել հետևյալ նախադասությունները:

1. K’erem xemgîn bû. Hevalên wî p’êkenyan.
2. Agir pê k’et, dar şixulî.
3. Armên gelek cixare k’işand, jina wî pê **nikaribû**.
4. Lingê wî êşya, çimkî zar’okên h’eyatê lêxistin.
5. Destê min lêk’et, şûşe şikest.
6. Zar’ok girya, çimkî daykê av lêkir.
7. Bernameyeke têlêvîzyonê gelek giran bû, lê min t’emaşe lê kir.
8. Dayîkê xwarineke xweş çêkir.
9. Te helbesteke dirêj xwend.

**Վարժություն 2.** Անցյալ կատարյալ ժամանակաձևով խոնարհել բարդ նախդիրներով կազմված հետևյալ բայերը և կազմել նախադասություններ:

Անորոշ դերբայ		Բայի անցյալի հիմք
pêk’enîn	ծիծաղել (որևէ մեկի վրա, ինչ-որ բանի վրա), ծաղրել (որևէ մեկին, ինչ-որ բան)	pêk’enya-

lêdan	հարվածել, խփել (որևէ մեկին, ինչ-որ բանի)	lêda-
lêxistin	հարվածել, խփել (որևէ մեկին, ինչ-որ բանի)	lêxist-
lêk'etin	դիպչել, կպչել (որևէ մեկին, ինչ-որ բանի)	lêk'et-
lêkirin	հազցնել (ինչ-որ բան, որևէ մեկին), համապատասխանել	lêkir-
temaşe lê kirin	նայել, դիտել (որևէ մեկին, ինչ-որ բան)	temaşe lê kir-
jê xeyîdîn	նեղանալ (որևէ մեկից)	jê xeyîdf-
têwerdan	ողողել (ինչ-որ բան)	têwerda-
têderxistin	հասկանալ, ընկալել, կռահել (ինչ-որ բան)	têderxist-
dest pê kirin	սկսել	dest pê kir-
zor pê kirin	ստիպել, ճնշել (որևէ մեկին)	zor pê kir-



## Դաս 44

### Բարդ նախդիրներով կազմված բայեր (մաս երկրորդ)

Քրդերենի կուրմանջի բարբառում մի շարք բայեր կազմվում են *têr'a* (*têr'e*), *têda* (*têde*), *pêva* (*pêve*), *pêr'a* (*pêr'e*), *pêda* (*pêde*) բարդ նախդիրների ու պարզ բայերի համակցմամբ: Այս նախդիրները կազմված են *tê* (*di + wê*), *pê* (*bi + wê*) նախդիրներով և *da*, *r'a*, *va*, *da* (որոշ խոսվածքներում՝ *de*, *r'e*, *ve*, *de*) հետադրություններով: Հետադրությունները ավանդաբար գրվել են միասին, բայց վերջին շրջանում նկատվում է նաև առանձին գրելու միտում:

Բարդ նախդիրներով կազմված նշված բայերը կիրառվում են, երբ նախադասության ուղիղ, անջատման կամ հանգման անուղղակի խնդիրները զեղչված են:

*Têr'a* (*di + wê/wî + r'a*) նախդիրն արտահայտում է որևէ առարկայի միջով անցնելու շնորհիվ կատարվող գործողություն.

<i>têr'a</i> kirin	խրել (ինչ-որ բանի մեջ), անցկացնել (ինչ-որ բանի միջով)
<i>têr'a</i> birin	տանել (ինչ-որ բանի մեջ), անցկացնել (ինչ-որ բանի միջով)
<i>têr'a</i> çûn	խրվել (ինչ-որ բանի մեջ), անցնել (ինչ-որ բանի միջով)

#### Օրինակներ՝

Ew zebeş gelek h'ışk bû, min k'êr <i>têr'a</i> kir û şkêmand.	Այդ ձմերուկը շատ պինդ էր, ես դանակը խրեցի և կիսեցի:
Berf gelek bû, lingê min <i>têda</i> çû.	Չյունը շատ էր, ոտքս խրվեց մեջը:

*Têda* նախդիրն արտահայտում է առարկայի ներսն ուղղված գործողություն.

<i>têda</i> kirin	մտցնել, թաթախել (ինչ-որ բանի մեջ)
<i>têda</i> k'etin	ընկնել (ինչ-որ բանի մեջ)
<i>têda</i> çûn	մտնել, սուզվել, կորչել (ինչ-որ բանի մեջ)

#### Օրինակ՝

Dayîk xwarina r'on anî, min nan <i>têda</i> kir û xwar.	Մայրիկը ջրիկ ճաշ բերեց, ես հացը թաթախեցի մեջը և կերա:
---	---

**Pêva** նախդիրն արտահայտում է որևէ բան միացնելու, վառելու, որևէ իր մեկ այլ առարկայի միացնելու, կապելու շնորհիվ կատարվող գործողություն.

pêva kirin	միացնել (ինչ-որ բան), միացնել (ինչ-որ բանի), կպցնել
pêva dirûtin	կարել (ինչ-որ բանի)
pêva alîn	փայթաթվել (ինչ-որ բանի)
pêva qemitîn	կպչել (ինչ-որ բանի)
pêva şidîn	կպչել (ինչ-որ բանի)
pêva şidandin	ամրացնել (ինչ-որ բանի)

Օրինակ՝

Keç'ê ût'î pêva kir.	Աղջիկը միացրեց արդուկը:
----------------------	-------------------------

**Pêr'a** նախդիրն արտահայտում է որևէ անձի կամ առարկայի ուղղված գործողություն:

pêr'a hatin	գալ (որևէ մեկի հետ), ուղեկցել (որևէ մեկին)
pêr'a çûn	գնալ (որևէ մեկի հետ), ուղեկցել (որևէ մեկին)
pêr'a r'evîn	փախչել (որևէ մեկի հետ)
pêr'a gihîştin	հասնել (որևէ մեկին, ինչ-որ բանի)

Օրինակ՝

Zar'okan tevî hevalê xwe lîst û pêr'a r'evîn.	Երեխաներն իրենց ընկերոջ հետ խաղացին և հետը փախան:
---	---

**Pêda** (*pêde*) նախածանցն արտահայտում է ներքև կամ առարկայի ներսն ուղղված գործողություն.

pêda kirin	լցնել (ինչ-որ բանի մեջ)
pêda k'etin	բծախնդիր լինել (որևէ մեկի, ինչ-որ բանի նկատմամբ), անհանգստացնել, տանջել (որևէ մեկին)

Օրինակ՝

Sobê da agir vêsya û min dar pêda kir.	Վառարանի մեջ կրակը հանգավ և ես փայտ զցեցի (բոց.՝ փայտ լցրի):
--	--

Բարդ նախդիրների շարքն են դասվում նաև *pêk*, *têk*, *lêk*, *jêk* նախդիրները.

pêkanîn, pêk anîn	կազմակերպել, նախապատրաստել
-------------------	----------------------------

pêkhatin, pêk hatin	կազմակերպվել, նախապատրաստվել
têkdan, têk dan	քանդել, նետել, տապալել,
têkçûn, têk çûn	տապալվել, ձախողվել
lêkdan, lêk dan	կարգավորել, դասավորել
lêkanîn, lêk anîn	հաշտեցնել, համաձայնեցնել
jêkhatin, jêk hatin	համապատասխանել

### Օրինակներ՝

Bira Xwedê armanca te pêk bîne.	Թող Աստված իրագործի քո նպատակը:
Ew xwe pêk anîn ku her'in gund.	Նրանք նախապատրաստվեցին, որ գնան գյուղ:
Êrîş êvarê saet di heftan de pêk hat.	Հարձակումը տեղի ունեցավ երեկոյան ժամը յոթին:
Par bûyerên xirab pêk hatin.	Անցյալ տարի վատ դեպքեր տեղի ունեցան:
Ev pirtûk ji du cildan pêk tê.	Այս գիրքը կազմված է երկու հատորից:
Dijmin ew gund têkdan û wêrankir.	Թշնամին այդ գյուղը քանդեց ու ավերեց:
Partî ew kongre têkda.	Կուսակցությունը տապալեց այդ համաժողովը:
Min odeya xwe lêk da.	Ես դասավորեցի սենյակս:

Հարկ է նշել, որ քրդերենի կուրմանջի բարբառում բայանունները հաճախ կիրառվում են գոյականաբար, օրինակ՝

Gelek <b>têkçûnên</b> dewleta t'irk hene.	Թուրքական պետությունը շատ ձախողումներ ունի:
---	---

### Baxçe

Di h'eyata me de baxçe heye. Ew baxçe mezin e. Di baxçe de gelek gul hene. Ew gul sor, zer û gevez in. Li baxçe nêrgiz, gulber'ojk, lale heye. Li wir şîlan jî hene. Duh Dîlanê ji baxçe şîlan anî û çay danî.

Di baxçe de berfîn t'une. Baharê li ç'îyê berfîn heye. Di baxçe de dar jî hene. Li wir dara bî, dara sêvê û dara hurmê heye. R'ex baxçe bostanekî çûk heye. Di bostan de k'elem, gulk'elem, pîvaz, bîber, gizêr, silq hene. Di bostan de cûr'ecûr'e pincar' jî hene. Zevî dûrî malê ye. Li zevîyê genim mîna zêr' e û ceh mîna zîv e. H'eyatê va cew diherike. K'êleka cewê pûng û gezgezke heye.

Նոր բառեր

baxçe	այգի
mezin	մեծ
gul	ծաղիկ
gevez	մուգ կարմիր
nêrgiz	նարգիզ
gulber’ojk	արևածաղիկ
lale	կակաչ
şîlan	մասուր
berfîn	ձնծաղիկ
dara bî	ուռենի
gulk’elem	ծաղկակաղամբ
pincar’	կանաչի, բանջար
pûng	ուրց
gezgezk	եղինջ

**Sêvan**

Gola Sêvanê di Ermenistanê de ye, li parêzgeha Gêxarkûnîkê. Ew gol li vê h’erêmê bi bilindayîya xwe cîyê sisya digire piştî gola Wanê û gola Ûrmîyeyê. Komara Ermenistanê da ew gola here bilind e. Dora wê golê ç’îya hene: ji başûr ç’îyayên Vardênîsê ne, ji r’ojavayê ç’îyayên Gêx’ama, ji bakûr ç’îyayên P’ambûk û Arêgûnî.

Ava Sêvanê şîrin e. Bîst û h’eyşt ç’emên ç’ûk dik’evin Sêvanê û ç’emeke mezin – ç’emê Hirazdanê ji Sêvanê derdik’eve.

Ava Sêvanê da çend cûr’e me’sî hene. Îşxan û Sîg me’sîyên Sêvanê ne. Me’sîyên Sîg sala h’ezar nehsid bîst çara ji golên Lagoda û Çad anîn vê derê. Naha dereca avê li gola Sêvanê kêmbê, ji bo wê yekê jî dewlet imbarên avê ava dîke.

Berê ermenîya Gola Sêvanê r’a **digot** be’ra Gêx’ama. Berê li Sêvanê girave hebû. Lê dereca avê peya bû, û naha wê derê nîvgrave ye. Ser wê nîvgravê dêra Sêvanê ye, ku sala sêsid û pêncâ hatiye çêkirin.

**Ժողովրդական ասացվածքներ**

Nan boy h’emû nevsî ye, ç’ek ne ya h’emû kesî ye.

Zarê xweş bihara dilan e.

Aqilê meriv r’êberê meriv e.

Նոր բառեր և արտահայտություններ

parêzgeh	մարզ, նահանգ
h 'erêm	տարածաշրջան
Ew cîyê sisya digre.	Նա երրորդ տեղն է զբաղեցնում:
Ew dik'evin nav avê.	Նրանք մտնում են ջուրը:
Ew derdik'eve.	Նա դուրս է գալիս:
derece	աստիճան, մակարդակ
Ew kê m dibe.	Դա պակասում է:
ji bo wê yekê	դրա պատճառով
Ew ava dike.	Նա կառուցում է:
Ev hatye çêkirin.	Դա կառուցվել է:
r'êber, r'ehber	առաջնորդ

## Դաս 45

### Անցյալ կատարյալ ժամանակաձև (բարդ նախդիրներով կազմված բայեր)

Բարդ նախդիրներով կազմված բայերը խոնարհելիս հարկ է հաշվի առնել դրանց անցողական, անանցողական, պատճառական լինելը:

*Pêr'a çûn* (անցյալի հիմքը՝ *pêr'a çû-*) անանցողական բայը խոնարհվում է հետևյալ կերպ.

I դեմք	Ez pêr'a çûm.	Ես գնացի (որևէ մեկի հետ):
II դեմք	Tu pêr'a çûy(i).	Դու գնացիր (որևէ մեկի հետ):
III դեմք	Ew pêr'a çû.	Նա գնաց (որևէ մեկի հետ):

I դեմք	Em pêr'a çûn.	Մենք գնացինք (որևէ մեկի հետ):
II դեմք	Hûn pêr'a çûn.	Դուք գնացիք (որևէ մեկի հետ):
III դեմք	Ew pêr'a çûn.	Նրանք գնացին (որևէ մեկի հետ):

Այս ժամանակաձևում բարդ նախդիրներով բայերի ժխտականը կազմելու ժամանակ *ne-* ժխտական նախամասնիկը դրվում է բուն բայից առաջ:

I դեմք	Ez pêr'a <b>neçûm</b> .	Ես չ գնացի (որևէ մեկի հետ):
II դեմք	Tu pêr'a <b>neçûy(i)</b> .	Դու չ գնացիր (որևէ մեկի հետ):
III դեմք	Ew pêr'a <b>neçû</b> .	Նա չ գնաց (որևէ մեկի հետ):

I դեմք	Em pêr'a <b>neçûn</b> .	Մենք չ գնացինք (որևէ մեկի հետ):
II դեմք	Hûn pêr'a <b>neçûn</b> .	Դուք չ գնացիք (որևէ մեկի հետ):
III դեմք	Ew pêr'a <b>neçûn</b> .	Նրանք չ գնացին (որևէ մեկի հետ):

*Pêva kirin* (անցյալի հիմքը՝ *pêva kir-*) անցողական բայը խոնարհվում է հետևյալ կերպ.

I դեմք	Mín pêva kir.	Ես միացրի (ինչ-որ բան):
II դեմք	Te pêva kir.	Դու միացրիր (ինչ-որ բան):
III դեմք	Wî/wê pêva kir.	Նա միացրեց (ինչ-որ բան):

I դեմք	Me pêva kir.	Մենք միացրինք (ինչ-որ բան):
II դեմք	We pêva kir.	Դուք միացրիք (ինչ-որ բան):
III դեմք	Wan pêva kir.	Նրանք միացրին (ինչ-որ բան):

Ժխտական խոնարհում

I դեմք	Min pêva <b>nekir.</b>	Ես չ միացրի (ինչ-որ բան):
II դեմք	Te pêva <b>nekir.</b>	Դու չ միացրիր (ինչ-որ բան):
III դեմք	Wî/wê pêva <b>nekir.</b>	Նա չ միացրեց (ինչ-որ բան):

I դեմք	Me pêva <b>nekir.</b>	Մենք չ միացրինք (ինչ-որ բան):
II դեմք	We pêva <b>nekir.</b>	Դուք չ միացրիք (ինչ-որ բան):
III դեմք	Wan pêva <b>nekir.</b>	Նրանք չ միացրին (ինչ-որ բան):

Բարդ նախդիրներով կազմված պատճառական բայերը խոնարհելիս հարկ է հաշվի առնել պատճառական բայերի խոնարհման առանձնահատկությունները (տե՛ս Դաս 29):

**Pêva şidandin** (անցյալի հիմքը՝ **pêva şidand-**) պատճառական բայը խոնարհվում է հետևյալ կերպ.

I դեմք	Min pêva şidand.	Ես միացրի (ինչ-որ բանի):
II դեմք	Te pêva şidand.	Դու միացրիր (ինչ-որ բանի):
III դեմք	Wî/wê pêva şidand.	Նա միացրեց (ինչ-որ բանի):

I դեմք	Me pêva şidand.	Մենք միացրինք (ինչ-որ բանի):
II դեմք	We pêva şidand.	Դուք միացրիք (ինչ-որ բանի):
III դեմք	Wan pêva şidand.	Նրանք միացրին (ինչ-որ բանի):

Ժխտական խոնարհում

I դեմք	Min pêva <b>neşidand.</b>	Ես չ միացրի (ինչ-որ բանի):
II դեմք	Te pêva <b>neşidand.</b>	Դու չ միացրիր (ինչ-որ բանի):
III դեմք	Wî/wê pêva <b>neşidand.</b>	Նա չ միացրեց (ինչ-որ բանի):

I դեմք	Me pêva <b>neşidand.</b>	Մենք չ միացրինք (ինչ-որ բանի):
II դեմք	We pêva <b>neşidand.</b>	Դուք չ միացրիք (ինչ-որ բանի):
III դեմք	Wan pêva <b>neşidan.</b>	Նրանք չ միացրին (ինչ-որ բանի):

**Նրկխոսություն**

- R’ojbaş, Taco!
- R’ojbaş, Gulê! Çawan î?
- Spas, ez baş im, tu çawan î?
- Ez jî baş im. Mêrê te çawa ye, ew çi dike?
- Mêrê min baş e, ew niha dixebite.
- Ma ew çi k’arî dike?

- Ew li fabrîqê dixebite, pencereyan çê dike.
- Wî par jî li fabrîqê xebitî, r’ast e?
- Erê, welle, r’ast e. Lê par na pêrar xebata wî t’unebû, wî şeş-h’evt mehan t’exsî ajot.
- Par tu jî t’evî zilamê xwe li fabrîqê xebitîy, ne usa ne?
- Erê, r’ast e. Par ez jî t’evî wî fabrîqê da xebitîm. Lê îsal min ew xebat hîşt, şuxulê malê gelek bû, min îdî pêr’a negîhand derva jî bixebitim.
- Erê, r’ast e, zar’okên we hûr in, şuxulê we gelek e.
- Lê naha tu çî dikî? Xebata te heye?
- Na, k’arê min t’une. Min kir-nekir şuxulek p’eyda nekir. Ez lê ger’yam, min şuxul nedît.
- Sê zar’ok, û xebata te t’une? Jina te çî dike?
- Welle, jina min dixebite. H’eftêya bihorî ez pêr’a çûm febrîqê, min jêr’a xebateke r’ind dest xist.
- T’aco can, tu jî gotî bixebitî, wiha nabe.
- Na, xûşkê, ez h’eftêya derbazbûyî du-sê cara çûm bazarê, min k’ar kir, vêca hinekî p’ere qezenc kir.
- Va ye, otobûsa min tê. Bi xatirê te!
- Ser çê’van! Oxir be!

**Նոր բառեր և արտահայտություններ**

Ew çî dike?	Նա ի՞նչ է անում:
Ew çî k’arfî dike?	Նա ի՞նչ գործ է անում:
Ez bixebitim.	Ես աշխատեմ:
febrîqe	գործարան
dest xistin	ձեռք բերել
vêca	ուստի
qezenc kirin	վաստակել

**Վարժություն 1.** Անցյալ կատարյալ ժամանակաձևով խոնարհել բարդ նախդիրներով կազմված հետևյալ բայերը և կազմել նախադասություններ:

Անորոշ դերբայ		Բայի անցյալի հիմք
têr’a kirin	խրել (ինչ-որ բանի մեջ), անցկացնել (ինչ-որ բանի միջով)	têr’a kir-
têra birin	խրել, տանել (ինչ-որ բանի մեջ), անցկացնել (ինչ-որ բանի միջով)	têra bir-
têda kirin	մտցնել, թաթախել (ինչ-որ բանի մեջ)	têda kir-



pêva kirin	միացնել (ինչ-որ բան), միացնել (ինչ-որ բանի)	pêva kir-
pêva dirûtin	կարել (ինչ-որ բանի)	pêva dirût-
pêva şidandin	ամրացնել (ինչ-որ բանի)	pêva şidand-
pêr'a çûn	գնալ (ինչ-որ մեկի հետ), ուղեկցել (որևէ մեկին)	pêr'a çû-
pêda k'etin	բժախնդիր լինել (որևէ մեկի, ինչ-որ բանի նկատմամբ)	pêda k'et-
pêkanîn	կազմակերպել	pêkanî-
têkdan	քանդել, տապալել, ձախողել	têkda-
têkçûn	տապալվել, ձախողվել	têkçû-
lêkdan	կարգավորել, դասավորել	lêkda-

### Teyrê wet'enh'iz

Nêç'îrvanek r'okî çû nêç'îrê. K'êleka çêm r'ûnişt, dît teyrekî mezin nav avê da ye. Teyr girt, anî malê, jêra qefeseke baş çêkir. Çiqas tiştên baş hebûn bona xwarinê, nêç'îrvan anî, da ber teyr. Teyr dîsa r'azî nema, got: “Ax, wet'en, wax wet'en”.

Nêç'îrvan gelekî fikir kir, bir, teyr avît wî cîyî ji ku hilda bû. Wexta teyr k'et nav avê, got: “Oxweş, wet'en, oxweş wet'en”.

Նոր բառեր և արտահայտություններ

wet'enh'iz, wet'enh'ez	հայրենասեր
Qefes	վանդակ
Wî hildabû.	Նա վերցրել էր:

## Դաս 46

### Հարաբերական դերանուններ

Հարաբերական դերանունները ձևով նման են հարցական դերանուններին, բայց չեն արտահայտում հարցում: Դրանք են՝

1. *k'î* (նվ), *k'ê* (ուս), *çend* (քանի, մի քանի), *çiqas* (*çiq*) (ինչքան, որչափ), *çawa*, *çawan*, *ça*, *çilo*, *çiton* (ինչպես, ինչպիսի), *k'engê*, *k'ingê* (երբ), *çir'a*, *çima* (ինչու), *k'u* (որտեղ), *k'uda* (ուր), *çi* (*çî*) (ինչ), *k'îjan* (որ, որերորդ):

Min çî kir, te neşêkirand.	Ես ինչ արեցի, դու չգնահատեցիր:
Min çî got, te fe'm nekir.	Ես ինչ ասացի, դու չհասկացար:
Min çend gilî gotin.	Ես մի քանի խոսք ասացի:
Te çî qazinc kir, min xerc kir.	Դու ինչ վաստակեցիր, ես ծախսեցի:
K'î ze'f xwandiye, gelek zane ye.	Ով շատ է կարդացել, շատ գիտակ է:
Çend r'ojan vir bimîne.	Մի քանի օր մնա՛ այստեղ:
Min çiqas got, te guh neda.	Ես ինչքան ասացի, դու չլսեցիր:
Çiqas wext ji wê r'ojê derbas bûye.	Որքան ժամանակ է անցել այդ օրից:
Ev dar çiqa bilind e.	Այս ծառն ինչ բարձր է:
Min çiqas k'ir'î, ewqas jî da.	Ես ինչքան գնեցի, այդքան էլ սվեցի:
Ez çiqas xebitîm, ewqas r'ebet bûm.	Ես ինչքան աշխատեցի, այդքան հանգստացա:
Nizanim min navê çenda nivîsî	Զգիտեմ՝ քանիսի անունը գրեցի:
Min çend cara ew dît.	Ես մի քանի անգամ նրան տեսա:

2. Հարաբերական դերանունները հազվադեպ են կատարում ստորադասական շաղկապի գործառույթ, բայց երբեմն կարող են կիրառվել *ku* ստորադասական շաղկապի հետ.

Mamoste kîjanî [ku] bona zimanê me xeber da, naha li vir e.	Ուսուցիչը, որը խոսեց մեր լեզվի մասին, հիմա այստեղ է:
Çawa [ku] min got, ez wê r'ojê derengî k'etim.	Ինչպես ասացի, այդ օրն ուշացա:
Aram gelek xemgîn e çima [ku] nikare fûtbolê bilîze.	Արամը շատ մտահոգ է, <i>քանի որ</i> (բոց. <i>ինչու որ</i> ) չի կարող ֆուտբոլ խաղալ:
Hasmîk k'îjanê [ku] dikare, wê pirtûkê jî dixûne.	Հասմիկը կարողում է այն գիրքը, որը կարող է:

Te çawa [ku] got, te wisa jî kir.	Ինչպես ասացիր, այդպես էլ արեցիր:
Çi [ku] te xwast, min anî.	Ինչ ուզեցիր, ես բերեցի:

3. Հարաբերականների շարքն է դասվում նաև *yê* կամ *ya* (որոշ խոսվածքներում՝ *ê* կամ *a*), հոգնակիի համար՝ *yên* կամ *yêd* (որոշ խոսվածքներում՝ *ên* կամ *êd*) դերանունը: Այն կիրառվում է առարկայի պատկանելությունը, վերաբերությունը, հատկանիշը նշելու համար: *Yê* դերանունը կիրառվում է արական սեռի, *ya* դերանունը՝ իգական սեռի գոյականների համար: *Yên* կամ *yêd* դերանունը կիրառվում է հոգնակի գոյականների համար:

Lingê min e. Yê min e.	Իմ ոտքն է: Իմն է:
K'itêba min e. Ya min e.	Իմ գիրքն է: Իմն է:
Pirtûkên min in. Yên min in.	Իմ գրքերն են: Իմն են:
– Tu k'îjan goşfî hez dikî? – Yê golikan.	– Դու ո՞ր միսն ես սիրում: – Հորթինը:
– Ev pirtûkêd k'ê ne? – Yêd me ne.	– Սրանք ո՞ւմ գրքերն են: – Մերն են:

4. *Yê* կամ *ya* (*ê* կամ *a*), հոգնակին՝ *yên* կամ *yêd* (*ên* կամ *êd*) հարաբերական դերանունը կարող է կիրառվել փոխանվանաբար.

mêrê aqil <b>yê</b> aqil	խելացի տղամարդը խելացին
keç'a bilind <b>ya</b> bilind	բարձրահասակ աղջիկը բարձրահասակը
keç'êd bilind <b>yêd</b> bilind	բարձրահասակ աղջիկները բարձրահասակները
Xortê bilind çû.	Բարձրահասակ երիտասարդը գնաց:
<b>Yê</b> bilind çû.	Բարձրահասակը գնաց:
Keç'a bedew hat.	Գեղեցիկ աղջիկը եկավ:
<b>Ya</b> bedew hat.	Գեղեցիկը եկավ:
Jinên bedew hatin.	Գեղեցիկ կանայք եկան:
<b>Yên</b> bedew hatin.	Գեղեցիկները եկան:
<b>Yêd</b> bedew hatin.	

5. *Yê* կամ *ya* (*ê* կամ *a*), *yên* կամ *yêd* (*ên* կամ *êd*) հարաբերական դերանունը փոխանվանաբար կիրառվելիս կարծես որոշակիացնում է առարկան և անձը ու կատարում այն դերը, որը կատարում են **ք**, **ն** հոդերը հայերենում.

<b>Yê</b> aqil hat.	Խելոքը (ար.) եկավ:
<b>Ya</b> aqil hat.	Խելոքը (իգ.) եկավ:
– Birê min hat. – K’îjan bira? – <b>Yê</b> mezin.	– Եղբայրս եկավ: – Ո՞ր եղբայրը: – Մեծը:
– Xûşka min hat. – K’îjan xûşk? – <b>Ya</b> biç’ûk.	– Քույրս եկավ: – Ո՞ր քույրը: – Փոքրը:
– Cînarên min vir in. – K’îjan cînar? – <b>Yên</b> qata jorê.	– Իմ հարևաններն այստեղ են: – Ո՞ր հարևանները: – Վերևի հարկինը:
<b>Yê</b> t’evî min xeberda, hevala min bû.	Նա, ով ինձ հետ խոսեց, իմ ընկերն էր:
<b>Ya</b> t’evî min xeberda, hevala min bû.	Ով ինձ հետ խոսեց, իմ ընկերուհին էր:
<b>Yên</b> derbaz bûn, ji gundê me bûn.	Ովքեր անցան, մեր գյուղից էին:

6. *Yê* կամ *ya* (*ê* կամ *a*), *yên* կամ *yêd* (*ên* կամ *êd*) հարաբերական դերանունը կարող է կիրառվել նաև **ku** ստորադասական շաղկապի հետ համակցվելով.

<b>Yê</b> ku] qayl nîbû, duh vegerya.	Նա, ով համաձայն չէր, երեկ վերադարձավ:
<b>Ya</b> [ku] cînara me bû, duh hat.	Նա, ով մեր հարևանն էր, երեկ եկավ:
<b>Yên</b> [ku] r’ind kar kirin, duh çûn.	Նրանք, ովքեր լավ աշխատեցին, երեկ գնացին:
– Te k’îjan mêvan verê kirin? – <b>Yêd</b> [ku] duh hatin.	– Դու ո՞ր հյուրերին ճանապարհեցիր: – Նրանց, որ երեկ էին եկել:
<b>Yê</b> [ku] kar dike, birçî namîne.	Ով աշխատում է, քաղցած չի մնում:
<b>Yê</b> [ku] dinivîse, kur’ê min e.	Ով գրում է, իմ որդին է:
<b>Yêd</b> [ku] duh hatin, birayên min bûn.	Ովքեր երեկ եկան, իմ եղբայրներն էին:

7. *Yê* կամ *ya* (*ê* կամ *a*), *yên* կամ *yêd* (*ên* կամ *êd*) հարաբերական դերանունը կարող է կիրառվել han (hana, hanê) ցուցական դերանվան հետ.

– Vê kitêbê dixwazî?	– Այս գիրքն ուզո՞ւմ ես:
– Na, <b>ya han</b> bide min.	– Ո՛չ, այն մեկը տուր ինձ:
– Te ew derî vekir?	– Դու այդ դուռը բացեցի՞ր:
– Na, min <b>yê han</b> vekir.	– Ո՛չ, ես այն մեկը բացեցի:

8. *Yê* կամ *ya* (*ê* կամ *a*), *yên* կամ *yêd* (*ên* կամ *êd*) հարաբերական դերանունը կարող է կիրառվել փոխանվանաբար՝ համակցվելով դասական թվականի հետ.

qetê pêncâ	հինգերորդ հարկը
<b>yê</b> pêncâ	հինգերորդը
ot'axa şeşa	վեցերորդ սենյակը
<b>ya</b> şeşa	վեցերորդը

9. *Yê* կամ *ya* (*ê* կամ *a*), *yên* կամ *yêd* (*ên* կամ *êd*) հարաբերական դերանունը կարող է կիրառվել փոխանվանաբար՝ համակցվելով հարցական դերանվան հետ.

– Lawê min hat.	– Իմ որդին եկավ:
– <b>Yê</b> k'ê hat?	– Ո՞ւմը եկավ:
– Fîncana min şikest	– Իմ գավաթը կոտրվեց:
– <b>Ya</b> k'ê şikest?	– Ո՞ւմը կոտրվեց:
– Lawêd min hatin.	– Իմ որդիները եկան:
– <b>Yêd</b> k'ê hatin?	– Ո՞ւմը եկան (նշ.՝ Ո՞ւմ որդիները եկան):

### Ardû çî me r'a ne

Gundekî da kalek û qîza wî diman: havînê gundî gişk xwe r'a ardû berev dikirin: Qîzê got: “Bavo, em jî xwera ardû berev bikin”. Kalemêr got: “Lawo, h'eta zivistan bê, ezê bimirim. Eger berev dikî, her'e seba xwe berev bike.”. Keç'ê got: “H'eta zivistan bê, ezê jî mêm bikim, îda ardû çî me r'a ne?”.

Wa man, zivistan hat. Ne kalê mir, ne jî qîzê mêm kir. Axirîyê h'erdu jî xanîyê sikî-sar da bê ardû man.

**Վարժություն 1.** Թարգմանել հետևյալ նախադասությունները:

1. Hevalê min yê delal.
2. Mala me ya piç'ûk.
3. Sêvên me yên sor.
4. Darên wan yên bilind.
5. Baxçeyê wan yê fireh.
6. K'ursîya me ya nimiz.

Նոր բառեր և արտահայտություններ

ardû	վառելիք
berev kirin	հավաքել
Wan berev <b>dikir</b> .	Նրանք հավաքում էին:
Em jî berev bikin.	Մենք էլ հավաքենք:
kalemêr	ծերունի
Bira zivistan bê.	Թող ձմեռ զա:
Ezê bimirim.	Ես կմահանամ:
seba	համար
Ezê mêr kim.	Ես կամուսնանամ:
îdî, îda	արդեն, այլևս
sikî-sar	շատ ցուրտ

**Երկխոսություն**

- R’ojbaş. Bibexşîne, Opêra k’u ye?
- R’ojbaş, Opêra vira ye. R’aster’ast her’e, û piştî kilomêtrek li aliyê ç’epê, li hemberî sînemayê ye.
- Gelo dêra Sûrb Sargîs li k’u ye?
- Ew hinekî dûr e. Ji pêşberî Opêrayê r’ûnê otobûsê, du-sê meqama şunda peya be, ji bazara girtî derbaz be û li wir dêra Sûrb Sargîs e.
- Bazara girtî k’ê derê ye?
- Bazara girtî li soqaqa Maştos, pêşberî Mizgefta Şîn e (Mezcêdê K’ebûd).
- Tu çir’a diçî dêra Sûrb Sargîs?
- Ez diçim wê derê zîyaretê.
- Xwedê zîyareta te qebûl bike.
- Lê tu zanî K’urdistan li ku ye?
- Erê, dizanim çawa nizanim? K’urdistan ji vir gelek dûr e.
- K’urdistan welatekî dewlemend e, serokbajarê K’urdistanê Hewlêr e. Gundên me hêşîn, zevîyên me freh in. Pênc r’oj e ez çawa mêvan hatime Ermenistanê, lê ez her r’oj bîra K’urdistanê dikim.

Նոր բառեր և արտահայտություններ

meqam	կանգառ
Tu diçî.	Դու գնում ես:
Xwedê	Աստված
Ew qebûl bike.	Նա ընդունի:
Ez hatime.	Ես եկել եմ:

Ez bîra K'urdistanê dikim.	Ես կարոտում եմ Քրդստանը:
----------------------------	--------------------------

**Վարժություն 2.** Թարգմանել հետևյալ նախադասությունները:

1. Zimanê k'ê dirêj e, xeysetê wî xirab e. 2. Li vir merivên usa t'unene k'î neçûye şanoyê. 3. Tu ji wî ademî bitirse k'ê derewa dike. 4. Te çî got, r'ast e. 5. Zar'okên ne's hatin. 6. Çî bixwazî, ezê bînim. 7. Çî ku destê min hat, min kir. 8. Emê wan şagirtan bişînin k'îjan r'ind dixûnin. 9. Tu k'îjan kitêbê bixwazî, ezê bidim. 10. Çend meriv hatin vir. 11. Çend mirova ew ç'îrok got. 12. Çiqasan t'emaşê kirin, ewqasan jî nekirin. 13. Ji t'emaşevanan çiqasî wan k'êfxweş bûn, ewqas jî ne k'êfxweş bûn. 14. Aram ku her r'oj zevîyê bû ancax hat malê. 15. K'î çî got, k'î çî negot, me nebihîst. 16. Çiqas stêrkine xweşik in, çiqas diç'irûsin. 17. Min demeke dirêj bala xwe da Leyla û Mecnûn: ez li benda hevramûsana wan r'awestyam. 18. Çiqasan t'emaşê kirin, ewqasan jî nekirin. 19. Te k'îjan k'urê xwe anî? Min k'urê mezin anî, lê yê çûk malê da hîşt. 20. Min beranekî xurt û beranekî jar li mêrgê dît: min yê xurt ji mêrgê derxist, lê yê jar mêrgê da hîşt. 21. Xanîyê bilind, yê me ye. 22. Ev e'rebe yêd kê ne? Yêd me ne. 23. Çî ku min qezenc kir, min da dîya xwe. 24. Çî ku hat serê min, bira neyê serê xelqê.

Նոր բառեր և արտահայտություններ

Ew ditirse .	Նա վախենում է:
Ew derewa dike.	Նա ստում է:
ne's	չարաճճի
Ger tu bixwazî...	Եթե դու ցանկանաս...
Ezê bînim.	Ես կբերեմ:
Emê bişînin.	Մենք կուղարկենք:
Ezê bidim.	Ես կտամ:
t'emaşevan	հանդիսատես
Ew diç'irûsin.	Դրանք փայլում են:
bala xwe dan	նայել, հայացք նետել
r'awestîn	կանգնել
xurt	զեր
Bira ew neyê.	Թող նա չգա:

**Վարժություն 3.** Թարգմանել հետևյալ նախադասությունները:

1. Ես երբ եկա, դու տանը չէիր: 2. Ես ինչ տվեցի, դու չկերար: 3. Ես ուր գնացի, քեզ չտեսա: 4. Ես որ գիրքը տվեցի, դու չկարդացիր: 5. Ինչ էլ մնաց, քամին տարավ: 6. Երեխան, որը կոտրեց խաղալիքը, լաց եղավ:

**Ժողովրդական ասացվածքներ**

Meryê merya çiqasî xirab be, zêr'ê veşartî ye.

Diz diz e, çi hêkek, çi gamêşek.

Ya ziman dibir'e şûr nabir'e.

Nigê ç'epê pey yê r'astê diçe, yê r'astê pey yê ç'epê naçe.

Merî heye – yê dilan e, merî heye – yê zikan e.

Ya zarê te min r'a, ya dilê te – te r'a.

Yê dir'eve jî – gazî Xwedê dike, yê dide pey jî gazî Xwedê dike.

Yê ji avê ditirse, dik'eve êgir.

Yê dik'eve govendê, wê e'se bilîze.

Yê t'irba hevala k'ola bi xwe k'et çe'lê.

**Նոր բառեր և արտահայտություններ**

Ew diçe.	Նա գնում է:
Ew naçe.	Նա չի գնում:
veşartî	թաքցրած
mir'a = min r'a	ինձ, ինձ համար
ter'a = te r'a	քեզ
Ew ditirse.	Նա վախենում է:
Ew dik'eve.	Դա ընկնում է:



## Դաս 47

### Բարդ նախդիրներով կազմված բայեր (մաս երրորդ)

*Jev, lev, t'ev, p'ev* նախդիրները կազմված են *ji, li, di, bi* պարզ նախդիրների և *hev* փոխադարձ դերանվան համակցմամբ:

*Jev (ji + hev)* նախդիրն արտահայտում է տարբեր առարկաներ կամ առարկայի տարբեր մասեր իրարից հեռացնելով կատարվող գործողություն:

<b>jev</b> kirin, <b>jev</b> kirin	ծռել, իրարից հեռացնել
<b>jev</b> k'etin, <b>jev</b> k'etin	բաժանվել, քայքայվել, փլուզվել
<b>jev</b> qetîn, <b>jev</b> qetîn	իրարից առանձնանալ, իրարից պոկվել
<b>jev</b> çûn, <b>jev</b> çûn	իրարից հեռանալ, իրարից բաժանվել

Օրինակ՝

Wî derî <b>jev</b> kir û şikêmand.	Նա դուրը ծռեց ու կոտրեց:
------------------------------------	--------------------------

*Lev (li + hev)* նախդիրն արտահայտում է փոխադարձաբար կատարվող գործողություն:

<b>lev</b> xistin, <b>lev</b> xistin	խառնել
<b>lev</b> k'etin, <b>lev</b> k'etin	խառնվել
<b>lev</b> dan, <b>lev</b> dan	խառնել
<b>lev</b> hatin, <b>lev</b> hatin	հաշտվել, համաձայնության գալ
<b>lev</b> anîn, <b>lev</b> anîn	հաշտեցնել, համաձայնեցնել, կազմակերպել

Օրինակներ՝

Wê nîsk û birinc <b>lev</b> xist û xwarin çêkir.	Նա ոսպ ու բրինձ խառնեց իրար և ճաշ պատրաստեց:
Her du <b>hev</b> alên min <b>lev</b> hatin.	Իմ երկու ընկերները հաշտվեցին:

*T'ev (di + hev)* նախդիրն արտահայտում է անձերը կամ առարկաները միավորելու, միացնելու միջոցով կատարվող գործողություն:

<b>t'ev</b> xistin, <b>t'ev</b> xistin	միակցել, կոճկել
<b>t'ev</b> dan, <b>t'ev</b> dan	միացնել, խառնել
<b>t'ev</b> bûn, <b>t'ev</b> bûn	խառնվել, միջամտել
<b>t'ev</b> kirin, <b>t'ev</b> kirin	խառնել

## Օրինակներ

Dayîk kincên kur'ê xwe lêkir û bişkok t'evxistin.	Մայրը հազգրեց որդու շորերն ու կոճկեց կոճակները:
Cînarên min şer' dikirin, ez t'ev nebûm.	Իմ հարևանները կռիվ էին անում, ես չմիջամտեցի:

**P'ev (bi+hev)** նախդիրն արտահայտում է առարկաների կամ անձերի փոխադարձ գործողություն: Ունի մի քանի իմաստ, անգամ հակասական նշանակություններ:

p'evdan, p'ev dan	խառնել իրար <sup>57</sup>
p'evçûn, p'ev çûn	վիճել, բաժանվել
p'evk'etin, p'ev k'etin	հաշտվել, միանալ <sup>58</sup>
p'evxistin, p'evxistin	հաշտեցնել, միացնել <sup>59</sup>

## Li h'ewşê

Îro hewa xweş e. Îro te'v e. Pîrê h'ewşê da, ber te'vê ye. Te'v sor û bedew e. H'ewşê da h'ewza avê heye. Ber te'vê germ e. Pîrê ze'f şa ye. Nevîyê pîrê cem pîrê ye. Pîrê ji nevîyê xwe pirsî: “Seh'et çend e?”. Nevîyê wê got: “Pênca bîst kêm e, îdî dereng e”. Kalo ber kanîyê ye. Ava kanîyê zelal û t'emiz e. Îro e'zman şîn e, qe e'wir xuya nînin.

H'eyatê da cînar hene. T'emam cînar jî cihal in. Bin daran da nêzîkî panzde-bîst e'rebe hene: ew e'rebe yên mêvana ne. Îro gelek mêvan hatin malên cînaran.

Kur'ek ji kalo pirsî. “Kalo, tu çend salî yî?”. Kalo bersîv da: “Lawo can, ez p'ir' kal im. Ez îdî nod û pênc salî me”. Kalo hinekî k'et mitala û got: “Hûn ji k'u derê ne?” “Em ji Ermenistanê ne, em ermenî ne”. Kalo got: “Ez jî ermenî me, bavê min jî ermenî ye, lê dayka min kurmanc e”.

Նոր բառեր և արտահայտություններ

h'ewz	ջրավազան
qe, qet	ամենևին, բնավ
mitale	մտորում
k'etin mitala	մտորումների մեջ ընկնել, մտածմունքների մեջ խորասուզվել

<sup>57</sup> Կիրառվում է նաև «իրար բախվել», «միմյանց դեմ պայքարել» նշանակությամբ:

<sup>58</sup> Ունի նաև «միմյանց բախվել», «միմյանց հետ վիճել» նշանակությունը:

<sup>59</sup> Ունի նաև «բախել իրար», «կռվեցնել» նշանակությունը:

## Di bazarê de

Zerya çû bazarê û ji firoşger fîyet pirsî:

– Dembaş.

– Dembaş, k’eremke!

Zerya pirsî:

– Ev zebeş bi çî ye?

– Ev şanzde diram e.

– Sîr bi çiqasî ye?

– Sîr bi hîjde dirama ye.

– Çiqas beha ye.

– Na, beha nîne, erzan e.

– Lê bîber çî beha ye?

– Bîberên sor bi yazdeh dirama ne, lê bîberên şîn bi deh dirama ne.

– Îsot heye?

– Erê, îsot jî heye.

– Îsot bi çendî ye?

– Îsot bi dozdeh dirama ye.

– Gelek beha ye, nabe.

– Na, beha nîne.

– Xwê heye?

– Erê, xwê jî heye.

– Ew bi çendî ye.

– Xwê belaş e.

Zerya k’enya û pirsî:

– Lobî bi çend dirama ye?

– Lobî bi çardeh dirama ye.

– Lê nîsk?

– Nîsk panzdeh diram e.

– K’erema xwe, ji min r’e du kîlo nîsk û sê kîlo lobî bide.

– Îdî çî lazim e?

– Bîberên sor jî bide.

– Tiştêk din?

– Bes e.

– K’erem ke.

–Zor memnûn.

Նոր բառեր և արտահայտություններ

fîyet	գին, արժեք
Keremke! (Kerem ke!, Kerem bike!)	Համեցի՛ր:

Bi çî ye? (Bi çendî ye? Bi çiqasî ye? Çi beha ye?)	Ի՞նչ արժի:
sîr	սխտոր
çiqas	ինչքան
bîber	պղպեղ
îsot	տաքդեղ
Nabe.	Չի լինում (չի լինի):
xwê	աղ
belaş	անվճար
lobî	լոբի
nîsk	նսպ
Bide!	Տո՛ւր:
lazim	հարկավոր, անհրաժեշտ
tîştekin	ուրիշ բան
Zor memnûn.	Շատ շնորհակալություն:

## Դաս 48

### Անցյալ կատարյալ ժամանակաձև (բարդ նախդիրներով կազմված բայեր)

Բարդ նախդիրներով կազմված բայերը խոնարհելիս հարկ է հաշվի առնել այդ բայերի անցողական, անանցողական, պատճառական լինելը:

**Lev hatin** (անցյալի հիմքը՝ **lev hat-**) անանցողական բայը խոնարհվում է հետևյալ կերպ.

I դեմք	Ez levhatim.	Ես հաշտվեցի:
II դեմք	Tu levhatî.	Դու հաշտվեցիր:
III դեմք	Ew levhat.	Նա հաշտվեց:

I դեմք	Em levhatin.	Մենք հաշտվեցինք:
II դեմք	Hûn levhatin.	Դուք հաշտվեցիք:
III դեմք	Ew levhatin.	Նրանք հաշտվեցին:

Բարդ նախդիրներով կազմված բայերի ժխտականը կազմելիս *ne-* ժխտական նախամասնիկը դրվում է բայի երկրորդ բաղադրիչից առաջ:

I դեմք	Ez levnehatim.	Ես չհաշտվեցի:
II դեմք	Tu levnehatî.	Դու չհաշտվեցիր:
III դեմք	Ew levnehat.	Նա չհաշտվեց:

I դեմք	Em levnehatin.	Մենք չհաշտվեցինք:
II դեմք	Hûn levnehatin.	Դուք չհաշտվեցիք:
III դեմք	Ew levnehatin.	Նրանք չհաշտվեցին:

**T'ev xistin** (անցյալի հիմքը՝ **t'ev xist-**) անցողական բայը խոնարհվում է հետյալ կերպ.

I դեմք	Min t'evxist.	Ես կոճկեցի:
II դեմք	Te t'evxist.	Դու կոճկեցիր:
III դեմք	Wi/wê t'evxist.	Նա կոճկեց:

I դեմք	Me t'evxist.	Մենք կոճկեցինք:
II դեմք	We t'evxist.	Դուք կոճկեցիք:
III դեմք	Wan t'evxist.	Նրանք կոճկեցին:

Ժխտական խոնարհում

I դեմք	Min t'evn <b>exist</b> .	Ես չկոճկեցի:
II դեմք	Te t'evn <b>exist</b> .	Դու չկոճկեցիր:
III դեմք	Wî/wê t'evn <b>exist</b> .	Նա չկոճկեց:

I դեմք	Me t'evn <b>exist</b> .	Մենք չկոճկեցինք:
II դեմք	We t'evn <b>exist</b> .	Դուք չկոճկեցիք:
III դեմք	Wan t'evn <b>exist</b> .	Նրանք չկոճկեցին:

Բարդ նախդիրներով կազմված պատճառական բայերը խոնարհելիս հարկ է հաշվի առնել պատճառական բայերի խոնարհման առանձնահատկությունները (տե՛ս Դաս 29):

*Jev qetandin* (անցյալի հիմքը՝ **jev qetand-**) անանցողական բայը խոնարհվում է հետևյալ կերպ.

I դեմք	Min jevqetand.	Ես (ինչ-որ բան) իրարից պոկեցի:
II դեմք	Te jevqetand.	Դու (ինչ-որ բան) իրարից պոկեցիր:
III դեմք	Wî/wê jevqetand.	Նա (ինչ-որ բան) իրարից պոկեց:

I դեմք	Me jevqetand.	Մենք (ինչ-որ բան) իրարից պոկեցինք:
II դեմք	We jevqetand.	Դուք (ինչ-որ բան) իրարից պոկեցիք:
III դեմք	Wan jevqetand.	Նրանք (ինչ-որ բան) իրարից պոկեցին:

Ժխտական խոնարհում

I դեմք	Min jev <b>ne</b> qetand.	Ես (ինչ-որ բան) իրարից չպոկեցի:
II դեմք	Te jev <b>ne</b> qetand.	Դու (ինչ-որ բան) իրարից չպոկեցիր:
III դեմք	Wî/wê jev <b>ne</b> qetand.	Նա (ինչ-որ բան) իրարից չպոկեց:

I դեմք	Me jev <b>ne</b> qetand.	Մենք (ինչ-որ բան) իրարից չպոկեցինք:
II դեմք	We jev <b>ne</b> qetand.	Դուք (ինչ-որ բան) իրարից չպոկեցիք:
III դեմք	Wan jev <b>ne</b> qetand.	Նրանք (ինչ-որ բան) իրարից չպոկեցին:

**Վարժություն 1.** Անցյալ կատարյալ ժամանակաձևով խոնարհել բարդ նախդիրներով կազմված հետևյալ բայերը և կազմել նախադասություններ:

Անորոշ դերբայ		Բայի անցյալի հիմք
jevkirin	ծռել, իրարից հեռացնել	jevkir-
jevqetîn	իրարից պոկվել	jevqetya-
levxistin	խառնել	levxist-
levhatin	հաշտվել, համաձայնության գալ	levhat-
levanîn	հաշտեցնել, համաձայնեցնել, կազմակերպել	levanî-
levdan	խառնել	levda-
t'evbûn	միջամտել	t'evbû-
t'evxistin	միակցել, կոճկել	t'evxist-
p'evçûn	վիճել, բաժանվել	p'evçû-

### Zelal û cilên wê

Zelal ji K'urdistanê nû hatiye. K'incên wê yê gundî hene. Niha Zelal k'incên nû û modêrn dixwaze. Ew banî Dîlanê dike. Dîlan dotmama wê ye. Dîlan tê û dibêje:

- Zelal, xêr e? Çi derdê te heye?
- Ez k'incên nû û xas dixwazim. K'incên min h'emû qet ne baş in, ew k'incên gundî ne, lê vira bajar e, û ez k'incên bajarî dixwazim.
- Erê, dibe. Li dik'an dilê te çî dixwaze, her tişt heye. Ma çakête te heye?
- Erê, çakêtekî min yê zivistanê heye. Lê naha yekî havînê dixwazim.
- Êlekê te heye? K'a, nîşan bide?
- Erê, êlekekî minî r'eş heye.
- Ez dik'aneke erzan dizanim. Dêrê te heye?
- Ez dixwazim şalikeke zer bikir'im.
- Tu tişteke din jî dixwazî?
- Erê, cotek sol jî lazim e. Solên qehweyî yê ç'ermîn dixwazim û bes e.
- Solên ç'ermî solne r'ind in. Gore ne lazim in?
- Erê, ezê gorên sor bik'ir'im.
- Ê baş e. Em îdî her'in dikanê.

Նոր բառեր և արտահայտություններ

Ew nû hatye.	Նա նոր է եկել:
ban kirin, gaz kirin	կանչել
Ew tê.	Նա գալիս է:
hem, him	նաև
k'inc	հագուստ
niha, naha	հիմա
qe, qet	ամենին
dixwazim	ուզում եմ
dixwaze	ուզում է
Dibe.	Պատահում է (բռց.՝ կլի՛նի):
çakêt	բաճկոն
Êlek	վերնագգեստ
k'a	հապա, ապա
Nîşan bide!	Ցո՛ւյց տուր:
dêre	կիսաշրջագգեստ
şalik	զոզնոց
tişt	բան
din	այլ, ուրիշ
sol	կռշիկ
gore	զուլպա
çermîn	կաշվե
bes	բավական



## Դաս 49

### Բարդ նախդիրներով կազմված բայեր (մաս չորրորդ)

*Serda, serr'a, berr'a, berva, r'exr'a, navr'a, binr'a, binva, pêsda, paşda* բարդ նախդիրները կազմված են *ser, ber, nav, bin, paş, pês, r'ex* պարզ նախդիրներով և *da, r'a, va* (որոշ խոսվածքներում՝ *de, r'e, ve*) հետադրություններով:

Բարդ նախդիրներով կազմված այս բայերը կիրառվում են, երբ նախադասության մեջ տեղի պարագան կամ հանգման անուղղակի խնդիրը զեղչվում է:

*Serda* բարդ նախդիրն արտահայտում է առարկայի մակերևույթին կամ անձի ուղղված գործողություն:

<b>serda</b> r'êtin, <b>ser da</b> r'êtin	թափել (որևէ մեկի վրա, ինչ-որ բանի վրա)
<b>serda</b> k'etin, <b>ser da</b> k'etin	ընկնել (որևէ մեկի վրա, ինչ-որ բանի վրա)
<b>serda</b> kirin, <b>ser da</b> kirin	ավելացնել (որևէ մեկի վրա, ինչ-որ բանի վրա)
<b>serda</b> ajoin, <b>ser da</b> ajotin	հարձակվել (որևէ մեկի վրա, ինչ-որ բանի վրա)
<b>serda</b> girtin, <b>ser da</b> girtin	հարձակվել (որևէ մեկի վրա, ինչ-որ բանի վրա)
<b>serda</b> çûn, <b>ser da</b> çûn	այցելել, այցելության գնալ (որևէ մեկին)
<b>serda</b> hatin, <b>ser da</b> hatin	այցելել, այցելության գալ (որևէ մեկին)

#### Օրինակներ՝

Wî nan xwar û av serda kir.	Նա հաց կերավ և վրայից ջուր [խմեց]:
Dijmin serda girt û gundî kuştin.	Թշնամին հարձակվեց և գյուղացիներին սպանեց:
Hevalê me nexweş bû, em serda çûn.	Մեր ընկերը հիվանդ էր. մենք այցելեցինք [նրան]:

Երբեմն հանգման անուղղակի խնդիրը դրվում է բարդ նախդրի երկու բաղադրիչների միջև.

<i>ser tişteki</i> da girtin	ինչ-որ բանի վրա հարձակվել
------------------------------	---------------------------

ser <i>kesekî</i> da girtin	որևէ մեկի վրա հարձակվել
ser <i>tişteki</i> da kirin	ինչ-որ բանի վրա հավելել

Օրինակներ՝

Min çay ser <i>xwarinê</i> da kir.	Ես թեյը ճաշից հետո խմեցի:
Dijmin ser <i>gundê me</i> da girt.	Թշնամին հարձակվեց մեր գյուղի վրա:

*Serr'a* նախդիրն արտահայտում է առարկայի մակերևույթին կամ առարկայի մակերևույթով կատարվող գործողություն.

<b>serr'a</b> çûn, <b>ser r'a</b> çûn	անցնել (ինչ-որ բանի վրայով, որևէ մեկի վրայով)
<b>serr'a</b> hatin, <b>ser r'a</b> hatin	անցնել (ինչ-որ բանի վրայով, որևէ մեկի վրայով)
<b>serr'a</b> birin, <b>ser r'a</b> birin	տանել, անցկացնել (ինչ-որ բանի վրայով, որևէ մեկի վրայով)
<b>serr'a</b> firîn, <b>ser r'a</b> firîn	թռչել (ինչ-որ բանի վրայով, որևէ մեկի վրայով)
<b>serr'a</b> revîn, <b>ser r'a</b> revîn	վազել (ինչ-որ բանի վրայով, որևէ մեկի վրայով)
<b>serr'a</b> avîtin, <b>ser r'a</b> avîtin	նետել (ինչ-որ բանի վրայով, որևէ մեկի վրայով)
<b>serr'a</b> ajotin, <b>ser r'a</b> ajotin	անցնել, քշել (ինչ-որ բանի վրայով, որևէ մեկի վրայով)

Օրինակներ՝

Li wir pira hebû, em serr'a çûn.	Այնտեղ կամուրջ կար, մենք դրա վրայով անցանք:
Pêşber ç'îyayê bilind bû, teyare serr'a firî.	Դիմացը բարձր լեռն էր, օդանավը դրա վրայով թռավ:
Ew pira gelek kevn bû, lê ez serr'a r'evîm.	Այդ կամուրջը շատ հին էր, բայց ես դրա վրայով վազեցի:

Երբեմն տեղի պարագան դրվում է բարդ նախդրի երկու բաղադրիչների միջև.

ser ç'îyê r'a firîn	սարի վրայով թռչել
Teyare ser ç'îyê r'a fir'î.	Օդանավը թռավ սարի վրայով:

*Berr'a* նախդիրն արտահայտում է առարկայի առջևից կամ դրա կողքով անցնելով կատարվող գործողություն.

<b>berr'a</b> չûn, <b>ber r'a</b> չûn	անցնել, գալ (ինչ-որ բանի առջևով, որևէ մեկի առջևով)
<b>berr'a</b> hatin, <b>ber r'a</b> hatin	անցնել (ինչ-որ բանի առջևով, որևէ մեկի առջևով)
<b>berr'a</b> firîn, <b>ber r'a</b> firîn	թոշել (ինչ-որ բանի առջևով, որևէ մեկի առջևով)
<b>berr'a</b> avîtin, <b>ber r'a</b> avîtin	նետել (ինչ-որ բանի առջևով, որևէ մեկի առջևով), ակնարկել

Օրինակներ՝

Ew avahî gelek bilind bû, em berr'a չûn.	Այդ շինությունը շատ բարձր էր. մենք դրա առջևով անցանք:
Min gilî berr'a avît, û hevalê min ji min xeyîdî.	Ես դրա մասին ակնարկեցի, և ընկերս ինձնից նեղացավ:

Երբեմն տեղի պարագան դրվում է բարդ նախդրի երկու բաղադրիչների միջև.

ber malê r'a hatin	տան մոտով գալ
--------------------	---------------

**Berva** նախդիրն արտահայտում է դեպի անձ կամ առարկա ուղղված գործողություն.

berva hatin	գալ (դեպի ինչ-որ բան, դեպի որևէ մեկը)
-------------	---------------------------------------

Օրինակ՝

Ez berva te hatim.	Ես դեպի քեզ եկա:
--------------------	------------------

**Rexr'a** նախդիրն արտահայտում է առարկայի մոտով, կողքով անցնելով կատարվող գործողություն.

<b>r'exr'a</b> չûn, <b>r'ex r'a</b> չûn	գնալ, անցնել (որևէ մեկի մոտով, ինչ-որ բանի մոտով)
<b>r'exr'a</b> anîn, <b>r'ex r'a</b> anîn	բերել, անցկացնել (որևէ մեկի մոտով, ինչ-որ բանի մոտով)
<b>r'exr'a</b> ajotin, <b>r'ex r'a</b> ajotin	քշել (որևէ մեկի մոտով, ինչ-որ բանի մոտով)

Օրինակ՝

E'rebeya hevalê min li heyatê bû, min r'exr'a ajot, derbaz bûm.	Իմ ընկերոջ մեքենան բախում էր, ես դրա կողքով քշեցի, անցա:
---	--

*Navr'a* նախդիրն արտահայտում է առարկայի միջով անցնելով կատարվող գործողություն.

<b>navr'a</b> շն, <b>nav r'a</b> շն	գնալ, անցնել (ինչ-որ բանի միջով)
<b>navr'a</b> hatin, <b>nav r'a</b> hatin	գալ (ինչ-որ բանի միջով)
<b>navr'a</b> birin, <b>nav r'a</b> birin	տանել, անցկացնել (ինչ-որ բանի միջով)
<b>navr'a</b> fir'in, <b>nav r'a</b> firin	թռչել (ինչ-որ բանի միջով)
<b>navr'a</b> kişandin, <b>nav r'a</b> kişandin	քաշել (ինչ-որ բանի միջով)

Օրինակ՝

Zevî qîçik bû, em navr'a շն.	Արտը դեղին էր. մենք միջով անցանք:
------------------------------	-----------------------------------

Երբեմն տեղի պարագան դրվում է բարդ նախդրի երկու բաղադրիչների միջև, օրինակ՝

nav zevîyê r'a շն	գնալ արտի միջով
Em nav zevîyê r'a շն.	Մենք արտի միջով անցանք:

*Binr'a* նախդիրն արտահայտում է առարկայի տակով անցնելով, անցկացնելով կատարվող գործողություն.

<b>binr'a</b> kirin, <b>bin r'a</b> kirin	մտցնել, դնել, խրել (ինչ-որ բանի տակ)
<b>binr'a</b> շն, <b>bin r'a</b> շն	գնալ, անցնել (ինչ-որ բանի տակով)
<b>binr'a</b> kişîn, <b>bin r'a</b> kişîn	քաշվել, սողալ (ինչ-որ բանի տակով)

Օրինակ՝

K'oka darê qewîn bû, wî mer' û balte binr'a kir û şikêmand.	Ծառի արմատն ամուր էր. նա բահն ու կացինը դրա տակ խրեց և կոտրեց:
---	--

